

Ս. ԹՈՐՈՍՆԵՆ

Հարգելի Յ. Գեղամյան: 1912 թ.
ՄԱԿ.

ԲԱԶԱՋՆՈՒՆԻՆԵՐԸ

Վկայ ժամանակակից կեանքից



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «Կուլտուրա» Բարձրակայա, 14.

1912

891.99

Թ-82

19 NOV 2011

391-39

Р-82

u m.

Ս. ԹՈՐՈՍԵԱՆ.

ՔԱՋԱԶՆՈՒՆԻՆԵՐԸ

1009 4036
39292



Ք ի Ֆ լ ի ո

Տպարան «Կուլտուրա» Հնդկ., Բարոնս. № 14

1911



ՔԱՋԱՋՆՈՒՆԻՆԵՐԸ

I

Գարնան սովորական երեկոյ էր: Վարվառէ Քաջազնունին պարտիզում քիչ զբօսնելուց յետոյ՝ հին սանդուխքներով բարձրացաւ պատշգամբ, այնտեղից ծառային ինչ որ կարգադրութիւն արեց և, մթնաշաղի միջից մի հայեացք ձգելով ալ արեւմուտքին, աիւ քաշեց ու մտաւ ներս:

Տունը երկյարկանի մի շէնք էր, բաւական հնացած: Արտաքինից նա իր շուքը, համարեա, կտրցրել էր: Արեւմուտք նայող երկար պատշգամբի վանդակները, որ մի ժամանակ նրա գելեցիկ զարդն էին, գունատուած, ծուած, նայում էին դէպի ցած, կարծես իրենց անցեալը սգալիս լինէին: Տան արեւելեան կողմում ընկած էր բաւական ընդարձակ մի պարտէզ՝ խաղողի թփերով ու զսնազան ծառերով զարդարւած: Մի ժամանակ, երբ դեռ կենդանի էր Գալուստ Ստեպանիչ Քաջազնունին՝ տիկին Վարվառէի ամուսինը, արդարադատութեան մինիստրո թեան բաւական բարձր և ապա պաշտօնաթող աստիճանաւոր, — այդ պարտէզն էլ ապրում էր իր

փառքի գագաթնակէտին: Բայց այժմ ծառերն անմշակ էին, և պարտէզը բազմապիսի խոտերով ու պատուտակ բոյսերով էր ծածկւած: Այստեղ, այնտեղ ծերունի Մնօն՝ Քաջազնունիների վաղեմի ծառան, փորփրել էր և ընդեղէններ սերմանել:

Տան վերին յարկը կազմւած էր չորս սենեակներից ու մի միջանցքից: Սենեակը, ուր մտաւ տիկին Վարվառէն, հրեք պատուհան ունէր դէպի պարտէզը. պատուհանների շրջանակները կորցրել էին իրանց նախկին երկնագոյն գոյնը և ճրագի տակ ինչ որ անորոշ փայլ էին ստացել: Սենեակը կահաւորւած էր եւրոպական, սակայն հին կաւասիներով: Սենեակի մէջտեղում բացւած հացի սեղանի վրայ պլպլում էր ճրագը և իր կանաչաւուն լուսամփոփի միջից թափանցելով ճառագայթները հին ու սևացած պատուհանների վրայ՝ սփռել էր բաց-կանաչ շղարշ:

Տիկին Վարվառէն ընկաւ հասարակ փայտից շինած, ծաղկագոյն չթով պատած բաղմոցի վրայ:

— Ո՛հ, յոգնեցի,—ասաց նա: Այդ ժամանակ միայն բարձրացրեց գլուխը պատուհանին յենւած մի նորատի աղջիկ, որ բարձր բարդիների արանքով՝ դուրս էր նայում՝ շառագունուղ արեւելքին դիտելով:

— Նամակ չկա՞յ,—ասաց աղջիկը:

— Ձէ, Անիւտա. համբրութիւնս հա-

տաւ, Մնօին ուղարկեցի պօստատուն:

Անիւտան, աւելի ճիշտ Անահիտ Քաջազնունին, տիկնոջ միակ աղջիկն էր, որին նա սաստիկ սիրում էր և որից նա բաժանւել չէր կարող: Սև, մեծ-մեծ աչքերով, բաւական բարձր հասակով, տասնինն տարեկան մի աղջիկ էր նա. ունէր դուրեկան դիմագծեր և իւրաքանչիւր այտի վրայ մի մի սիրուն փոսիկ: Մօր պատասխանը լսելուց յետոյ՝ նա նորից դարձաւ դէպի պատուհանը: Տիկին Վարվառէն շտկելով երեսի վրայ թափւած արդէն սպիտակած մազերը, ամուր կապեց սև թաշկինակը և պատի մօտի թախտի վրայ փռած հին գորգի մի տուտը շրջեց, տակից խաղաթուղթ հանեց, սկսեց մէկ-մէկ բանալ ու ինչ որ ձեւերով փռել իր առաջ սեղանի վրայ: Երկար ժամանակ նա լուռ շարունակում էր իր խաղը, թղթերը շուռ է շուռ էր տալիս, խորհրդաւոր հայեացքով որոշ դասաւորութիւն էր տալիս նրանց, էլի հաւաքում, էլի փռում: Այդ ժամանակ նրա դէմքը՝ զանազան արտայայտութիւն էր ստանում. մէկ նրա մեծ-մեծ, բայց կրակը կորցրած աչքերը ստանում էին սպասողական դրութիւն, մէկ դէմքին շարժում էր ուրախութեան ժպիտ, մէկ նա յանկարծակի յօնքերը կիտում էր, ճակատը կնճռոտում...

— Հը՞, մամն, այսօր վիճակը բախտաւոր է՞ դուրսգալիս,—ասաց Անահիտը քիչ հեղ-

նանքով ու մօտեցաւ մօրը:

— Բաւական է, բաւական, որքան մեզ ծաղրեցիք, էլ ոչ հաւատ է մնացել, ոչ Աստուած, — պատասխանեց տիկին Վարվառէնը նդհատելով խաղը:

— Էլ ինչո՞ւ ես բարկանում, մամա, — ասաց աղջիկը, կարծես, զղջալով:

— Չը բարկանամ, ինչ անեմ, — պատասխանեց մայրը մեղմացած, — այժմեան երիտասարդներն ամեն բան տակն ու վրայ են արել: Մեր ժամանակ կարգաւ չըկածը: Ի՞նչ է:

— Մամա, մի բարկանա, բայց ասա, սլապան էլ Լէր հաւատում թղթի վիճակին:

— Իհարկէ հաւատում էր. ոչ միայն նա, այլ և ստօնաշախիկ Անդրէյ Իւանիչը, որ մեր քաղաքում հասկացող մարդու հոչակ էր վայելում, նա էլ էր հաւատում, ես էլ եմ հաւատում. ի՞նչ, կարծում եմ, ես վատ կարգացող եմ. մեր քաղաքի ծխական օրիորդաց ուսումնարանն եմ աւարտել: Կնոջը այդքանն էլ բաւական է, նա հօ չինովնիկ չի՞ դառնալու, ուրիշ բան է տղան: Է՛, որդի, քանի հանգուցեալ հայրդ կենդանի էր, մեր տանը հաւատ էլ կար, կեանք էլ, հարստութիւն էլ. նա գնաց, ամեն ինչ գնաց. է՛ ժամանակներ, ինչ օրեր եմ անցրել, իսկ այժմ խեղճութիւն: Ինչ որ նոր բան էր լինում, առաջ մենք էինք առնում, իսկ այժմ ամեն ինչ հին է, տունն էլ, շորերն էլ,

տան մէջն էլ:

— Է՛, մամա, էլի սկսեցիր գանգատել, փառք Աստծու, մենք առողջ ենք, Վարդն ու Լեոնը արդէն մեծացել են:

— Մինչև առուն ջուր գայ, գորտի աչքերը դուրս կըգայ, ասում է առածը: Վարդս, ախ ջանին մեռնեմ, ահա հինգ տարի է Պետերբուրգում է, տեսնենք կաւարտի, աւարտի էլ, տեսնենք ի՞նչ պիտի դառնայ: Նա առաջ նամակներում գրում էր, թէ չինովնիկ պիտի դառնայ, առաջ ուրիշ տեսակի նամակներ էր գրում. գրում էր, մամա ջան, գու դարդ մի անի, ես այս կանեմ, այն կանեմ քո համար. այժմ այդպիսի նամակ չի գրում, ո՞վ է իմանում, մի ոսի աղջիկ է սիրել, անփող, անբաժինք...

— Այդ սրտեղից հանեցիր, մամա:

— Ձէ, չէ, որդի, այդ շատ պատահող բան է, այդպիսի տղաներ շատ կան, որ ուսում են առնում ու մի աղքատի վրայ ամուսնանում, թէ սիրում ենք, չենք կարող իրարից հրաժարւել:

— Շուտով Վարդը կըգայ, ամեն բան կիմանանք. հաւատացած եմ, որ իմ եղբայրը մենակ կըգայ:

— Աստուած տայ, որդի, ես չեմ ուզում:

— Շուտով Լեոնն էլ կըգայ, չէ՞:

— Այո, նա էլ կըգայ. այս ամառ ընտանիքով կապրենք: Ա՛խ, աչքերս կուրանան, հանգուցեալ պապադ միշտ ասում էր, իմ

որդին հոգևոր դպրոց չեմ տալ, մանաւանդ հայի դպրոց, իսկ մենք նրա ցանկութեան հակառակն արինք, Լեոնին տւինք հոգևոր դպրոց: Ի՞նչ անէնք, փող չըկար, Վարդի համար որքան պարտքերի տակ եմ ընկել:

— Հմի ինչ վատ է, հայի ուսումնարանում պակաս ուսում են տալիս, ասում են նրանք աւելի կըթւած ու լուրջ են լինում:

— Է՛, ասում ես որդի, ապա որ նրանք չինովնիկ չեն լինում, փող քիչ են ստանում, այ, որն է վատ...

Դեռ խօսքը բերանումն էր, որ դուռը բացւեց, և մի երկար հասակով, քիչ կոացած, խորշոմած երեսով ծերունի ներս մտաւ շտապով, ոչխարենու փափախով ձակատի քրտինքն սրբեց ու զրպանից հանեց երկու նամակ՝

— Առ խանրմ մինի տեղը երկուսը-ասաց նա:

Տիկին Վարվառէն մի կողմ հրեց խաղաթուղթը, որ դեռ ձեռքին բռնած էր և խաղոյն վերցրեց նամակները: Մայր ու աղջիկ ուրախացան:

— Առ, առ, Անիւտա, առաջ փակը կարդան, բարձր ձայնով. Մանօ, նստի, դու էլ լսի:

Անահիտը շտապով առաւ, մօտեցաւ լամպին, ձղեց ծրարը և կարդաց.

Սիրելի մամա՛.

Ես այսօր վերջացրի պետական քննութիւնները: Գործս յաջող է, շուտով կըստանամ դիպլոմս ու կըվերադառնամ տուն: Թանկագին մայր, այս վերջին նամակն է, որ գրում եմ ուսանողական կեանքից: Գիտեմ շատ դառնութիւններ ես քաշել ինձ համար, բայց ես կըաշխատեմ վարձատրոյց լինել: Անցան դժուարութիւնները. ես այսուհետեւ կը լինեմ քո մօտ, իմ հայրենիքում, դու կը մխիթարես ինձնով: Սակայն միայն հարստութիւնը չէ ապրեցնում մարդու, այլ և բարի գործը: Աշխատենք դրա ամար էլ: Բաւական է, շուտով կը գամ: Համբուրում եմ ձեռքդ, Անիւտային, բարեւ իմ ծերոկին՝ Մնօին:

Լեոնին էլ եմ նամակ գրել:

Որդիդ՝ Վարդ:

19... մայիս...

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

— Տուր, տուր, Անիւտա, ես իմ աչքով կարդամ, — ասաց տիկին Վարվառէն և ակնոցները հանեց, դրեց քթին ու սկսեց կարդալ մտքում: Անահիտն էլ կարդում էր բաց նամակը՝ ցածր ձայնով: Տիկին Վարվառէն վերջացնելով՝ նամակը համբուրեց, տւեց Մնօին, նա էլ համբուրեց, ապա առաւ և դրեց զրպանը:

—Այդ էլ Լեոնիցն է անշուշտ, ինչ է գըրում, կարգաւ:

—Ահա կարդամ,—ասաց Անահիտը:

Սիրելի մամաւ:

Մեր դասերը վերջացել են, քննութիւններն էլ շուտով կը վերջանան, ես կը փոխեմ. մի քանի օրից յետոյ կը գամ, Վարդըն էլ պիտի գայ: Այս ամառ տնովի մի լաւ քէֆ կ'անենք: Բարեւ քեզ, Անիւտային և Մընօին, որը թող պտուղները լաւ պահի, մինչև գամ:

Քո որդի Լեւոն

19... մայիս...

—Այ, Անիւտա, ասում ես, ինչո՞ւ ես թղթի վիճակ է բաց անում. տեսնում ես, ինչպէս է կատարւում. թուղթը միշտ ճանապարհ էր ցոյց տալիս. որդիներս գալու են, մտածում էի ես. վիճակը բարի է, այդպէս էլ եղաւ: Դէ, հմի դու մի հաւատա:

—Ա՛խ, մամա Վարդը գայ, մենք էլ ուրիշներին հասնեք, թշնամու խօսքի տակից դուրս գանք: Վարդը ինժինեւր է, չէ՞, մամա:

—Ապա ի՞նչ, ի՞նչ ես մտածում, Գալուստ Ստեպանիչի տղան անշուշտ ինժինեւր կըլինի:

—Բայց չէ որ նա մի անգամ գրել էր, սր տեղս փոխում եմ, ուզում եմ, պատմութիւն սովորեմ:

—Ձէ, չէ, սխալած ես, գուցէ նա այդ էլ է սովորում, բայց նա ինժինեւր է:

—Ձէ, մամա...

—Դէ բաւական է, Վարդը ինժինեւր է, չին ունի, հասկանում ես, չին:

Անահիտը չը կամենալով զայրացնել մօրը՝ լռեց: Տիկին Վարվառէն ուրախացած հրամայեց Մնօին՝ ինքնաեռը դնել, իսկ Անահիտին՝ թէյի ու ընթրիքի պատրաստութիւն տեսնել: Ինքն ընկել էր ուրախ մըտքերի մէջ: Երեւակայութեամբ ծրագրում էր որդիների ապագան, մտածում էր, թէ ինչպէս Վարդը կը գայ և ինքը, երկար տարիներից յետոյ, պուլը կը շինի սպիտակ լաշագով ու Վարդի հետ դուրս կը գայ իրանց քաղաքի այգին. ուրիշները կը նախանձեն. Վարդը փող կ'աշխատի, պարտքերը կըտայ, և իրանք հարուստ ու երջանիկ կեանք կըբաշեն...

Լուսինը բարձրացել էր ու բարդենինինի արանքից իր ճառագայթները պատուհաններին ուղղել. սակայն ճրագի լոյսի առանրանք նսեմացել էին: Դուրսը պարզ լուսընկայ գիշեր էր, խաղաղութիւն էր իշխում Ա. զաւառական փոքրիկ քաղաքի վրայ: Մընօն ինքնաեռը ներս տարաւ, և պատշգամբի դուռը մի լալկան ճռոցով խանգարեց լուսթիւնը:

Տօն օր էր: Ա. քաղաքի քաղաքային այգում երեկոյեան զրօսնողները բաւական մեծ թիւ կար: Յունիս ամիսն էր: Ուսանողները վերադարձել էին, ուսումնարաններն արձակւել: Աչքի էին ընկնում կապտածղի գլխարկները, եղանակները դեռ մեղմ էին և ամառանոց գնացողներ դեռ չը կային. վաճառականներ, գործակատարներ, ծառայողներ լիք էին. երևում էին և գիւղական ուսուցիչներ:

Մի լայնարձակ թեղի ծառի տակ, որի առաջ բարձր սեան վրայ պլպլում էր գալային լապտերը, նստարանի վրայ նստած էին մի քանի ուսանողներ, օրիորդներ: Նըրանք սիրալիր խօսակցում էին: Վճռական հայեացքով ու հանգիստ քայլերով մի պարոն անցաւ նրանց առաջով: Նրա մի կողմից՝ դընում էր բարձր հասակով մի օրիորդ, միւս կողմից՝ մի պատանի դպրոցական համազգեստով:

— Ահա սա էլ Քաջազնունին, — ասաց ուսանողներից մէկը, — մեր համալսարանի հայ ուսանողների ծաղիկը:

Բոլորը ուշադրութեամբ նայեցին անցնող պարոնին:

— Քիթը բարձր է երևում, — ասաց օրիորդներից մէկը:

— Ընդհակառակը, չափազանց համեստ է: Թէև ես նրան մօտից չեմ ճանաչում, որովհետև մի տարի է, որ ես Պետերբուրգում

եմ, բայց հին ուսանողները նրա մասին գովասանքով են խօսում:

Ի՞նչ է սովորում, — հարցրեց մի գիմնազիստիկա:

— Իրաւարանական մասումն էր, լսում էր և պատմութիւն, — պատասխանեց նոյն ուսանողը:

Մինչ այդ Քաջազնունին վերադարձաւ և նոյն ձևով անցաւ խօսողների առաջից: Յիշեալ ուսանողը գլխարկը վերցրեց, որին նա պատասխանեց գլխարկի թեթև շարժումով:

Ի՞նչ դռնապան է, — ասաց գիմնազիստիկան.

— Այո, բաւականին դռնապան ասում են, շատ է պարծալում, — պատասխանեց ուսանողը:

— Արժէ ծանօթանալ, — յայտնեց մի ուրիշ ուսանող:

Սրանք խօսում էին, իսկ Քաջազնունին այգու կենդրոնում՝ զրօսնողների բազմութեան հետ յետ ու առաջ էր գնում: Նրա հետի օրիորդն Անահիտն էր, իսկ պատանին — եղբայրը՝ Լևոնը:

— Գիտես, Վարդ, ասում էր Անահիտը, շատ ժամանակ է, որ ես այգի չեմ եկել. քանի դու գնացել ես, մենք, համարեա, կարգին մարդամէջ չենք դուրս եկել. ախ, ասում էի միշտ, երբ կը գայ Վարդը, մի մենք էլ օր և արև տեսնենք:

— Շատ վատ ես արել, առանց ինձ էլ կարող էիր հասարակութիւնից չը փախչել,— պատասխանեց Վարդը:

— Կարծում ես, այդ հեշտ է, մանաւանդ մեզ համար. պապայի մայրց յետոյ մենք ինչ չենք կորցրել. տեսնում ես, միւսներն ինչպիս են զուգւած, զարդարւած, ինչու մենք էլ նրանց պէս չը պիտի լինենք, ես հօ հասարակ մարդու աղջիկ չեմ:

Վարդ Քաջաղնունին այնքան էլ ուշադրութեամբ չէր լսում քրոջը, նրա մտքերն ուրիշ խնդիրներով էին զբաղւած: Հինգ տարի է, նա հեռացել է հայրենիքից, այժմ որքան փոփոխութիւններ է տեսնում. շատ աշակերտներ, ածասնողներ, նորածն հագուստներ, գաղային լուսաւորութիւն... Նա իր սեւ մեծ աչքերը ուղղում էր հասարակութեանը, այս կամ այն նստարանի վրայ նստած խճմբակին, կարծես, առանձին ոչինչ չէր գտնում: Նքա հողին անհանգիստ էր: Մէկ նրա մօտով անցնում էին զոյգեր՝ ինքնահաւանքայլւածքներով, կամ մի տղայ, մի աղջիկ թեւնցուկ ու անքնական սեթևեթանքներով, քրքշուն հաճոյախօսութիւններով: Մտածում էր Վարդը, մտածում, և նրան թւում էր, որ ներքին, հողեկան առաջադիմութիւն քիչ է նկատւում, որ ամեն ինչ մակերևոյթային է, արտաքին ձևով...

— Աղջիկ, այս է Վարդապետի տղան,— ասում էր մի պառաւ կին իր խօսակցին:

— Ո՞րը, այդ բարակ-բարակը. խեղճը շատ է չարչարել,— պատասխանեց խօսակիցը:

— Բա դրա չներն ուր են, ասում են խնժիներ է դառել,— վրայ բերեց երրորդը:

— Հա, ինժինեք է, նրան այդքան փող որտեղից էր, որ ինժինեք դառնաք,— ասաց մի ուրիշը:

Հաղար ու մի կողմից քննեցին, բամբակեցին, Երբ քաղաքային զանգը հնչեց տասըն անգամ, ժողովուրդը սկսեց ցրւել:

— Մենք էլ տուն գնանք,— ասաց Անահիտը:

— Գնանք,— պատասխանեց Վարդը, և բռնելով Լևոնի թեից, գուրս եկան այգուց: Ուղիղ ու երկար ընկած էր քաղաքի մեծ փողոցը՝ լուսաւորւած լապտերներով: Մարդիկ շտապով տուն էին վերադառնում: Սմանք սլանում էին երկձի կառքերով: Երանի դրանց, մտածում էր Անահիտը, զգալով կոթիւն, անցաւ Վարդի մօտով, փակ Լևոնը մտածում էր:

— Ի՞նչ ես մտածում Լևոն,— ասաց Վարդը:

— Ոչինչ:

— Ինչպէս թէ, ոչինչ, մարդ այդքան շուտ մնայ ու չըմտածի, ուզում ես, ասեմ, քննչ ես մտածում:

— Ասեմ:

— Մտածում ես այդ գիմնադիւտների ու գիմնազիստիկաների մասին:

— Ոչ, ես այդպիսի բաներ չեմ սիրում։
— Հա, չես սիրում, — վրայ բերեց Անահիտը, — եթէ ձեռքդ ընկնի, կը սիրես, բայց քեզ ով է բանի տեղ դնում, բոլորն էլ վարդապետ են ասում։

— Խնդրեմ, քաղաքավարի խօսես, — զայրացաւ Լեւոնը, և Վարդը, որ բռնել էր նրա ձեռքը, զգաց, թէ ինչպէս արիւնը սկսեց արագ շարժուել նրա երակներում։ Հասկացաւ, որ Լեւոնի ինքնասիրութիւնը վիրաւորեց, ասաց։

— Նա անքաղաքավարի ոչինչ չ'ասաց։

Ինչպէս չ'ասաց, «վարդապետ» բառը նրա հասկացողութեամբ շատ վիրաւորական է, աղջիկները միշտ այդպէս են, սիրում են միշտ փայլուն շորեր և ոչ փայլուն խելք։

— Այ, դու աւելի վիրաւորեցիր, — ասաց Վարդը։

Երեքն էլ լռեցին։ Արդէն տունը մօտ էր։ Ծերունի Մնօն սպասում էր նրանց դարբասի առաջ։ Նրանք բարի երեկոյ ասացին ու ներս մտան։

Տիկին Վարվառէն սպասում էր իր գաւակներին։ Կանաչ լուսամտիփով լամպն էլի վառում էր։ Մնօն իր գործերը վերջացրած՝ հացի սեղանը բաց էր արել, և ներս ու դուրս անբլով, սպասում էր։ Տիկին Վարվառէն նստած սեղանի մօտ մտածում էր։ Որդին՝ Վարդը, իր պատած ազդեցութիւնը

չ'արեց։ Նա ենթադրում էր, որ Վարդը մի չաղլիկ տղայ պիտի լինի, ուրախ, զւարթ բնաւորութեամբ, որ նա պիտի հագնւած լինի ամենալաւ շորեր՝ փայլուն կօշիկներով, ոսկեգոյն ուսադիրներով, որ նա պիտի ամեն օր նրա համար հետաքրքիր պատմութիւններ ասի, պիտի լաւ պաշտօններ որոնի ու ստանայ, և այդ բոլորը տեսնելով, հարուստներն իրանց աղջիկները նրան պիտի առաջարկեն մեծ օժիտով։ Սակայն Վարդը միշտ լուռ է, իր հարցերին պատասխանում է կարճ ու կտրուկ, երբեմն առանձնանում է ու երկար փակուած սենեակում, կարդում, պաշտօնի մասին չի էլ մտածում, իսկ դուրս գնալիս սովորական շորերով է գնում, ոչ փայլուն կոճակներ և ոչ մի ուրիշ զարդ... Տիկին Վարվառէն չէր մոռանում Վարդի վարմունքը աչքալոյս եկած հիւրերին ընդունելիս։ Նա բարևում էր սառը քաղաքավորութեամբ, չէր խօսում, չէր զբաղեցնում և յաճախ թողնում էր նրանց, կամ պարտէզ, կամ իր սենեակը գնում։ Վարդը այդպէս ընդունեց և հօրեղբօրը, Կոստանդին Գալազնանուն, որ քաղաքի հարուստ վաճառականներիցն էր, մեծ դիրք ունէր, որ յաճախ օգնութեան էր հասել իրենց ընտանիքին։ Մի քանի անգամ պատրաստել էր յանդիմանել որդուն, նրանից բացատրութիւն, պահանջիլ բայց Վարդի լուրջ դէմքը, սև աչքերը, լիակատար յօնքերը լը-

1009 4036
39298



ռեցրել էին նրան: Իմ ծննունդը, իմ որդին, բայց ես չըկարողանամ, չը վստահանամ խրատել նրան, խորհուրդ տալ, մտածում էր նա ու աւելի զայրանում: Նրա իշխող բնաւորութիւնը այդ չէր կարողանում տանել, նա ուզում էր, որ Վարդը լսի իրան, ինչպէս լսում է Մնօն, ինչպէս հնազանդւում Անահիտը:

Այսպիսի մտքերով էր զբաղւած, որ զաւակները վերադարձան զբօսանքից: Առաջ մտաւ Անահիտը: Բարի երեկոյ ասաց ու գլխարկը ձգեց սեղանի վրայ. ապա մտաւ Լեոնը և յետոյ Վարդը, որ նոյնպէս բարի երեկոյ ասաց: Մայրը սիրալիւր բարեկեց, աչքերը ձգեց Վարդի երեսին, կարծես նրա մէջ փոփոխութիւն որոգելու նպատակով: Վարդը այդ երեկոյ աւելի տխուր երևեցաւ: Դուրսը մութն էր, շատ մութը, ֆանիսի փարթամ բուսականութիւնն աւելի էր մըթնացրել պարտէզը:

Վարդը պատուհանից նայում էր այդ խաւարին, այդ անորոշ, անձեւ տարածութեանը: Անահիտը քիչ հանգստանալուց յետոյ՝ Մնօի օգնութեամբ սեղանը պատրաստեց և միւսներին հրաւիրեց ընթրելու: Ուտում էին լուռ: Տիկին Վարվառէն սովորաբար ամեն երեկոյ մի բաժակ գինի էր խըմում: Այս անգամ էլ լցրեց բաժակը, սակայն հակառակ սովորական լուռ խմելուն, օրհնեց սեղանակիցներին, Վարդին ուրախ

սիրտ, Անահիտին բարի բախտ, Լեոնին խելօքութիւն ու համբերութիւն, Մնօին արքայութիւն մաղթեց, և յոտոյ խմեց: Վարդը հասկացաւ, որ մայրը տրտունջ է յայտնում իր լոռութեան համար, որ մայրական փառասէր սիրտը որդուց ուրախութիւն է պահանջում: Լեոնը խնդրեց մօրը, որ իրան էլ գինի տայ:

— Եթէ Վարդը դէմ չէ, պատասխանեց մայրը:

— Առանձին ոչինչ չունեմ:

Լեոնը առնելով գինով լի բաժակը ասաց.

— Դիտէ՞ք ինչ, ես ուզում եմ ուրախանալ, քանի լռէք, դեռ մի ամիս չըկայ, իրար մօտ ենք եկել, արդէն ձանձրացել ենք իրարից: Առաջարկում եմ Անիւտային, մի երգ ասի իմ բաժակի վրայ:

— Այդ էր պակաս, — ասաց Անահիտը:

— Ոչինչ պակաս չըկայ, թէեւ ես քիչ առաջ սրտիդ մի քիչ-կպայ, բայց դէ քու եղբայրն եմ, ներիւր. բացի այդ ես պատրաստ եմ քաւել յանցանքս. այս մի բաժակը ինձ «պատիժ»: — Արագ շարժումով խմեց գինին և իսկոյն լցրեց երկրորդ բաժակը: Կարծեմ, մեղքս ապաշխարելուց յետոյ կը բարեհաճես ներել ու երգել:

Մայրը, Վարդն ու Մնօն ծիծաղում էին, Անահիտն ասաց.

— Այդ ի՞նչ լեզուով ես խոսում, կըբա-

րեհաճես, ինձ ծաղրում ես հա, այլեւս չեմ երգի քեզ համար:

Այդ դէպքում կը խնդրեմ Վարդին, որ նա առաջարկի, նրան անշուշտ չեա մերժի:

— Վատ չի լինի, որ երգի,— ծիծաղեց Վարդը:

Անահիտը սիրում էր Վարդին, նւիրւած էր նրան, նրա խօսքը չէր կոտորի: Նա քիչ լրջացաւ, երկար արդարեանունքները քարշ արեց ու սկսեց երգել մի հայերէն երգ: Պարզ ու տը-
խուր եղանակը հնչում էր խաղաղ սենեա-
կում և պատուհանից դուրս գնում, խաւա-
րի մէջ սուղւում: Վարդը գեղարեւատական բարցը արժանիքներ ունեցող շատ երգեր էր լսել, թատրոն, օպերա նա շատ էր սի-
րում, բայց էլի այդ երգը իր պարզ եղա-
նակով նրան դուր եկաւ: Անահիտը երգե-
լիս կարմրել էր, նրա այտերի փոսիկները՝
աւելի սիրունացել: Տիկին Վարվառէն ներ-
քին բաւականութեամբ ժպտում էր:

— Ա՛յ, հիանալի բան, — ասաց Լևոնը, երբ Անահիտը վերջացրեց երգը, — էլ ի՞նչ ես նազ անում: Թէև խնդիրս անտես առար, բայց զմայլւած ձայնիցդ խմում եմ քո կենա-
ցը:

Բոլորը զարմացած նայեցին Լևոնին, երբ նա կուլ տւեց և երրորդ բաժակ գինին:

— Այդ արդէն չափից դուրս է, — ասաց մայրը, նայելով Լևոնի կարմրած այտերին: Լևոնը նայում էր ինքնաբաւական կերպով:

Նրա սիրուն աչքերը կրակոտ ու աշխոյժ հայեացք էին ձգում շուրջը: Քիչ սևացած բե-
ղատեղերը աւելի էին սիրունացնում նրա կը-
լոր երեսը: Մայրը նայում էր այդ դիւթական դէմքին՝ լի մայրական սրտի բերկրանքով,
բայց զարմանում էր, որ լոակեաց Լևոնը, հողեւոր դպրանոցի այդ սանիկը, լեզու է
առել, ուրախանում է ու ուրախացնում:

— Բաւականին ծիծաղելի է, — ասաց Ա-
նահիտը:

— Ի՞նչն է ծիծաղելի, յարգելի օրիորդ, —
ծումուկով հարցրեց Լևոնը:

— Ա՛յն, որ բլբուլ ես դառել, հայր վար-
դապետ:

Լևոնը յարձակի եկաւ, արիւնը գլուխը խփեց և ճչաց.

Ի՞նչ:

Մայրը աչքերն ոլորելով նշան արեց, որ
այդ անվայել է և անսպասելի: Լևոնը հաս-
կացաւ, լռեց, բայց բարկութիւնից լսեղդւում
էր:

Վարդը հասկացաւ, որ միջամտութեան
ժամանակ է, ասաց.

— Ոչի՞նչ, մամա, մի բարկանա, իսկ դուք
իրար մի վիրաւորէք: Ուրախ եմ, որ Լևոնը
սիրում է աշխոյժ կեանք. դա բնաւորու-
թեան լաւ դիժ է: Նա քիչ բարկացաւ, բայց
չ'արժէ նրան յանդիմանել. ինչպէս երևում
է, զրօսանքը լաւ է ազդել նրա վրայ: Իսկ
դու Անիւտա, բաւական լաւ ես երգում,

այսուհետեւ շատ առիթներ կ'ունենանք լըսելու: Երգն ու ուրախութիւնը կեանքի քաղցրութիւնն են, ես կը ցանկանայի քաղցր կեանք ունենաք, մարդկանց մեծամասնութիւնը զուրկ է դրանից, քաղցրութիւն է որոնում...

Մայրը լսում էր որդուն ուշադրութեամբ: Նա խօսում էր հանդարտ: Կարծես քարոզ է խօսում, մտածում էր Լեոնը: Մընօն զարմացած նայում էր բոռլրին և չէր հասկանում, ինչ է կատարւում: Լաւ աղա կը դառնայ, մտածում էր նա:

Վարդը վեր կացաւ ու մօտեցաւ պատուհանին. սկսեց նայել անորոշ խաւարին: Անահիտը սեղանի պարագաներն էր հաւաքում: Ուրախութիւնն ու բարկութիւնը տեղի էին տւել լռութեան: Լեոնը, Կարծես, ինքն էլ զարմացած իր բացւելու վրայ, նայեց շուրջը, նայեց ու Կարծես զղջաց արածը ու դուրս գնաց: Քիչ յետոյ Վարդն էլ անցաւ իր սենեակը:

— Ինչպէս են աղաներդ, Մնօ, հարցրեց տիկինը նրանց գալուց յետոյ:

— Էլ խօսք կայ, խանութ: Համա մեծը տէրտէրից էլ գիտուն ա, տեհմը, ոնց էր խօսում, կասենաս, ժամըմն բնէր:

— Տէրտէր, այդ էր պակաս, ինժինէր պերի լինի, ինժինէր, յիմար:

Ամառայ շոգերն սկսել էին: Շատերը գնացել էին ամառնոց: Քաջագունիները տանը այդ մասին խօսք էլ չեղաւ: Տիկինը քիչ էր դուրս գալիս տանից, ներսը աշխատում էր, յաճախ ինչ որ, խնամքով ծալած թղթեր էր դարսում սեղանի վրայ և հաշիւներ էր անում: Լեոնը անձնատուր էր եղել պատանեկական խաղերի. ձուկն էր որսում, թռչուն էր խփում իր փոքրիկ հրացանով և ամենևին ականջ չէր դնում մօրը, որ նրան խրատում էր, թէ ամառը թռչուն չեն սպանի, ձագերն որը կը մնան: Մնօն պարտիզում ժրջանութեամբ աշխատում էր, ալեւոր մագերը յաճախ քրտինքով թրջում:

Այդում խաղողի տախտակների մէջտեղ ընկած էր մի ընդարձակ խամ հող, ուր կար մի սուէրախիտ մեծ ընկուզենի: Մի փոքրիկ առւակ քջքջալով վազում էր նրա տակով: Ծառի տակ դրւած էր մի փոքրիկ փայտեայ սեղան և մի աթոռ: Վարդը օրւայ մեծ մասը անցնում էր այդտեղ, կարդում էր: Անահիտն երեկոյան հովերին, երբ արեգակը թեքւում էր դէպի սարը, գալիս էր եղբօր մօտ: Նա մի օր խնդրեց, որ իրան էլ գրքեր տայ կարդալու: Վարդը մի փոքրիկ հարց ու փորձ արեց: Անահիտը բաւական գրքեր էր կարգացել, մեծ մասամբ վէպեր: Վարդը նրան

յանձնեց մի փոքրիկ գրադարան: Անահիտը վարժաւծ էր հաստ վէպերին, ուստի սկզբում արհամարանքով էր նայում այդ փոքրիկ գրքոյկներին. սակայն նա որքան կարդում էր այդ գրքոյկները, այնքան հետաքրքրութիւնը սաստկանում էր: Գրքերը ազդեցութիւն էին անում. նա յաճախ երկար մտածմունքների էր ենթարկւում, մտամուրթ ման էին գալիս պարտիզում: Նրա մէջ կուռն էին երկու հասկացողութիւն. մէկը այն, որ երկար ժամանակ սերմանել էր մայրը, և որին ինչ որ բոմանտիկական ուղղութիւն տւել վէպերի ընթերցանութիւնը, միւսն էլ փոքրիկ գրքերի ներշնչածը: Բոլորը նկատում էր Վարդը, որի օգնութեանը յաճախ էր դիմում Անահիտը: Նա պարզութեամբ բացատրում էր քրոջը զանազան անհասկանալի կտորներ, բայց ձգտում էր սառն առարկայական դիրք բռնել, չխախտել քրոջ ինքնուրոյնութիւնը: Վարդն երբեմն դուրս էր գալիս տնից և վերադառնում ուշ: Եթէ առաւօտեան էր գնում, մինչև ճաշ հազիւ էր գալիս. եթէ ճաշից յետոյ էր ելնում, ուշ երեկոյան էր վերադառնում: Նա պտտում էր քաղաքի բոլոր մասերը, ամենախուլ անկիւնները. մինչև անգամ խրմիչքների գործարանները, արհեստանոցները չը վրիպեցին նրա աչքերից: Տուն վերադառնալուց յետոյ նա կամ երկար նստում էր ծառի տակին, կամ մտնում էր իր սե-

նեակն և մահճակալի վրայ պառկած՝ մտածում:

Տիկին Վարվառէն անհանգստանում էր: Սեպտեմբերը մօտենում էր: Վարդը պաշտօն գտնելու մասին չէր մտածում, գոնէ նրան այդպէս էր թւում: Նա ամեն բանի վրայ նայում էր տնտեսական տեսակէտից: Եթէ Վարդի այդ շրջագայութիւնը նիւթական օգուտ չի խոստանում, աւելորդ է, մտածում էր նա: Վարդը, իհարկէ, հասկանում էր մօրը, նա տեսնում էր, ինչպէս մայրը ամեն օր հաշւում է պարտքերը, նա երբեմն երկար մտածում էր մօր մասին, խիստ տանջւում էր, որ հնարաւորութիւն չունի հանգըստացնել նրան: Երբեմն փորձում էր քաղցըր խօսքերով շահել մօր սիրտը. բայց նա ընդունակ չէր, թւում էր, որ կեղծ դրութեան մէջ է ընկնում: Պարտքերի խնդիրը ևս զբաղեցնում էր Վարդին. նա կուղէր, որ դրանք չըլինէին, չխանդարէին իրան, չըդառնացնէին մօր կեանքը: Սակայն չի կարելի ամբողջ էութեամբ տարւել այդ հաշիւներով, մտածում էր նա: Զէ, նա ուրիշ իղձեր էր գուրդուրում, ուրիշ ծրագիրներ էր կազմում:

Մի օր Վարդը հրաւեր ստացաւ աշխատակցելու մի ուսւ ամսագրի: Խմբագիրը խոստանում էր ամսական բաւական ձեռնարկու մի գումար, եթէ նա հասցնէր իւրաքանչիւր համարին մի յօդաւած: Նա համա-

ձայնեց: Անահիտը իմանալով այդ՝ հաղորդեց մօրը: Կարծում էին, որ այդ որոշ չափով կըհանգստացնէ տիկին Վարվառէին, սակայն երկու օրից յետոյ նա ձաշի ժամանակ զգալ տւեց Վարդին, որ ինքն այնքան էլ ուրախ չէ որդու այդ որոշմանը:

— Ինչ թւում է, որ դու փիլիսոփայ չես դառնայ, «գազեթ» գրողի անապահով արհեստը չես ընտրի,— ասաց նա Լեոնին, երբ վերջինս խօսում էր իր որսորդութիւնների, արկածների, իր անվախութեան մասին, խոստումներ էր անում մօրը ապագայի վերաբերմամբ:

Վարդը հասկացաւ մօր ակնարկը: Նա լուռ մնաց, չըպատասխանեց՝ հակառակ մօր ցանկութեան, որ ուզում էր նրան խօսեցնել:

Թէ ինչ է անում եղբայրը, պատանի Լեոնին շատ չէր հետաքրքրում, իսկ Անահիտն այդ մասին խորհում էր. նա զգում էր, որ եղբօր մէջ ինչ որ բան կայ, որ ինքը դեռ չի հասկանում. բայց այդ բանը մեծ է, ազնիւ. դէպի մայրն ունեցած հաւատը նւազում էր:

Սեպտեմբերը մօտ էր: Լեոնը պատրաստութիւններ էր տեսնում գնալու: Նա գրքերը կապել էր արդէն, գանազան կապոցներ էր շինել, փոքրիկ կողոփները տանձ, խնձոր, խաղող և ուրիշ մրգեր էր լցրել: «Լնկեր-

ներս շատ կուրախանան, խեղճերը մեռան անհաբը» — կրկնում էր նա:

Վարդ Բաջազնունին մոռացել էր ընտանիք, պաշտօն: Նա զբաղւած էր դրսի, հասարակական կեանքով: Անահիտը ամեն օր սպասում էր եղբօր վալուն, և ամեն անգամ նկատում էր, որ եղբայրը լինում է յուզւած, մռայլ, յոգնած: Երբեմն պարկում էր առանց թէյ խմելու: Իսկ առաւօտեան աչքերի մէջ երևում էր ինչ որ գոհունակութեան փայլ: Առաւօտեան թէյից յետոյ նա պարտիզում կամ կարգում էր, կամ գրում:

Մի կիւրակի օր Անահիտն ասաց Վարդին:

— Ձեռ համաձայնի այսօր նախաձաշից յետոյ զրօսանքի գնալ:

— Ուրախութեամբ, եթէ ուրիշ տեղ գընալու չըլինէի:

Անահիտը մի քանի բոպէ լուեց: Նրան վաղուց էին հետաքրքրում եղբօր բացակայութեան շարժառիթները: Նա շատ անգամ էր որոշել խօսել այդ մասին, խնդրել, որ իրան էլ մասնակից անի իր լուռ խոհերին, բայց միշտ էլ քաշւել էր, չէր համարձակւել: Այս անգամ նա աւելի սիրտ արեց ու ասաց.

— Վարդ, սիրում ես միակ քրոջդ:

— Ի՞նչ հարց է:

— Եթէ սիրում ես, կատարիր ցանկութիւնս, աստ, ինչ մտքեր են, որ քո ճակատը մռայլում են, որ քեզ տանջում են...

տանք ինձ աշխատեղ, ուր պիտի այսօր գնաս
և որտեղից պիտի վերադառնաս, անշուշտ,
յուզլաձ, գուցէ տխուր, բայց հաճութեան
զգացմունքով...

Քրոջ խօսքերը ազդեցին նրա վրայ: Իսկոյն
չըպատասխանեց, մի քանի րոպէ լուռ էր.
բայց որպէսզի Անահտին սպասողի անհա-
ճոյ դրութեան մէջ երկար չըթողնի, պա-
տասխանեց.

— Ձեմ մերժում. բայց իմացիր, ոչ թէ
սիրելուցս եմ անում, այլ վստահանում եմ
քեզ, սէրը գործերի հետ կապւած չէ:

Անահիտը չըպատասխանեց: Վարդը բա-
ցեց ձեռագիրը և սկսեց գրել: Անահիտը եր-
կար նայում էր եղբորը, որ խորասուզւած
աշխատանքի մէջ արագ-արագ լցնում էր
թերթերի երեսները: Նայեց, նայեց ու դան-
դաղ, մտածկոտ վերադարձաւ տուն: Նա մը-
տաւ մօր սենեակը: Մայրը մենակ չէր: Սե-
ղանի վերին ծայրին նստած էր Կոստանդին
Քաջաղնունին, տիկնոջ տաքըր: Նրանք խօ-
սում էին մի կարեւոր խնդրի առթիւ: Այդ-
պէս թւաց Անահիտին, որ մօտեցաւ ու
յարգանքով բարեկեց հօրեղբորը:

— Բարե, աղջիկս, ի՞նչպէս ես, առճիշդ
ես,—ասաց Կոստանդին Քաջաղնունին:

— Շնորհակալ եմ,—պատասխանեց ժրպ-
տերես Անահիտը:

— Անահիտը խելօք աղջիկ է, նա հաս-
կանում է իր մօր դրութիւնը, նա նամուս

ունի, դրա համար էլ շատ եմ սիրում նը-
րան,—ասաց տիկին Վարվառէն:

— Ես էլ գոհ եմ նրանից:—աւելացրեց
Կոստանդին Քաջաղնունին և իսկոյն հարց-
րեց,—որտեղ է Վարդը:

— Պարտիզում պարապում է,—պատաս-
խանեց Անահիտը:

— Ի՞նչ է անում:

— Գրում է:

— Ծառային ուղարկիր, թող նրան կանչի:

Անահիտը դուրս եկաւ: Մայրը նրան հաս-
կացրեց, որ սուրճ պիտի պատրաստել: Տի-
կին Վարվառէն ու Կոստանդին Քաջաղնու-
նին լուռ նայում էին իրար երեսի: Երկուսն
էլ այն մտքով էին զբաղւած, թէ ինչպէս
սկսեն Վարդի հետ խօսել այդ, իրանց կար-
ծիքով ամենալուրջ, խնդրի առթիւ:

Կոստանդին Քաջաղնունին մի միջահա-
սակ, բաւական հաստ, երեսը մաքուր ածի-
լած թուխ գոյնով մարդ էր: Նա կըթութիւն
չունէր, առևտրական հմտութիւն չունէր և
րոպական իմաստով, բայց փորձւած էր և
զգոյշ, ըիսկից վախեցող: Նրա դրամագլու-
խը բաւական բաւական արագ էր աճում:
Նա հագնւած էր մաքուր, եւրոպական տա-
րազով, երեսին խաղում էր կուշտ կեանքի
ժպիտը: Իսկապէս նա դարդեր չունէր. նրա
միակ վիշտն այն էր, որ մեծ յոյսեր չունէր
իր միակ որդու՝ Ռուբէնի վրայ, որը գիմ-
նազիան, մի կերպ, աւարտելուց յետոյ շա-

ըրունակելու տրամադրութիւն չունէր: Գոնէ վաճառականական շնորհք ունենայ, մտածում էր հայրը, բայց նա ահա մի տարի է ինչ խանութումն էր, սակայն առանձին ընդունակութիւն ու եռանդ չէր ցոյց տալիս:

Վարդը բաւականին սպասել տւեց մօրն ու հօրեղբօրը: Նա վերջացրեց գրեթէ, ծրարեց ու տւեց Մնօին պօստը տանելու և պատուիրեց նամակները շուտ հասցնել: Սրանից յետոյ միայն նա տուն եկաւ և սենեակ մտաւ այն ժամանակ, երբ նրանք սուրճ էին խմում: Բարեկեց բոլորին ու նստեց: Նա ինքն էլ չգիտէր, թէ ինչու հէնց փոքր հասակից առանձին սէր չէր տածում դէպի հօրեղբայրը, որը նրան ընդհակառակը վատ չէր նայում և մեղմ մարդ էր: Մի բոպէ սենեակում տիրում էր լուութիւն, որը խանգարւում էր սուրճի կուսների ֆուռոցով, բաժակներին վրայ տուող ճանճերի բզկոցով: Տիկին Վարվառէն աշխատում էր իր գոգից յետ մղել փոքրիկ կատուկին, որը իր կրակոտ աչքերը դէս ու գէն ուղղելով խցկւում էր այնտեղ:

— Ծիշտ է ասած, որ անբախտին շունն ու կատուն կըսիրեն,— ընդհատեց լուութիւնը տիկինը:

Ծանր լուութիւնը խղեց և առիթից օգտւելով՝ կոստանդին Գաջագնունին ասաց.

— Վարդ, եկել եմ քեզ հետ մի քիչ խորհրդակցելու:

— Համեցէք, հօրեղբայր, ինչի մասին:

— Ձեր ընտանիքի դրութիւնն ես իմ սրբաբնիկ մօտիկ է. ճիշտ է մարդու շապիկը ամենից առաջ իր մարմնին է մօտ, բայց բարեկամութիւնն ու ազգականութիւնն էլ մեծ բան են: Հանգուցեալ եղբայրս մեր քաղաքում անուն ու պատիւ ունեցող մարդ էր: Նրա մահից յետոյ որդիները փոքր էին, ընտանիքը բաւական նեղութիւններ քաշեց, բայց բոլորս էլ հաւատացած էինք, որ այդ տնցողական է, որովհետեւ դու թէ գիմնագիտութիւն և թէ Պետերբուրգում աչքի ընկնող առաջադիմութիւն էիր անում, և բոլորս էլ յոյս ունէինք, որ դու կը վերականգնես ձեր ընտանիքի նախկին դիրքը: Սակայն, եթէ չես նեղանայ, կասեմ, որ ինձ և թէ մայրիկիդ, որին պարտական ես ամբողջ կեանքովդ ու կրթութեամբդ, թւում է, որ դու մի քիչ անտարբեր ես դէպի ձեր ընտանիքի դրութիւնը:

Վարդը ներքուստ յուզւած էր, բայց աշխատում էր սառը լինել: Երբ հօրեղբայրը վերջացրեց, նա պատասխանեց.

— Ես չը գիտեմ, դուք ինձնից ինչ էք սպասում, բայց ես այս եմ և, կարծում եմ, բոնի կերպով ուրիշ տեսակ չեմ կարող լինել: Շնորհակալ եմ, որ դուք մեր տան մասին մտածում էք, նեղ ժամին մայրիկիս օգնութեան էք հասել, մենք անշուշտ վարձահատոյց կըլինենք: Բայց չեմ հասկանում,

ըունակելու տրամադրութիւն չունէր: Գոնէ վաճառականական շնորհք ունենայ, մտածում էր հայրը, բայց նա ահա մի տարի է ինչ խանութումն էր, սակայն առանձին ընդունակութիւն ու եռանդ չէր ցոյց տալիս:

Վարդը բաւականին սպասել տեց մօրն ու հօրեղբօրը: Նա վերջացրեց գրաւածքը, ծրարեց ու տեց Մնօին պօստը տանելու և պատւիրեց նամակները շուտ հասցնել: Սրանից յետոյ միայն նա տուն եկաւ և սենեակ մտաւ ափս ժամանակ, երբ նրանք սուրճ էին խմում: Բարեկց բոլորին ու նստեց: Նա ինքն էլ չգիտէր, թէ ինչու հէնց փոքր հասակից առանձին սէր չէր տածում դէպի հօրեղբայրը, որը նրան ընդհակառակը վատ չէր նայում և մեղմ մարդ էր: Մի ըոպէ սենեակում տիրում էր լուռութիւն, որը խանգարում էր սուրճի կուծիկի ֆուռոցով, բաժակներին վրայ տուղ ճանձերի բզզոցով: Տիկին Վարվառէն աշխատում էր իր գոգից յետ մղել փոքրիկ կատուկին, որը իր կրակոտ աչքերը դէս ու գէն ուղղելով խցկւում էր այնտեղ:

— Ծիշտ է ասած, որ անբախտին շունն ու կատուն կըսիրեն, — ընդհատեց լուռութիւնը տիկինը:

Ծանր լուռութիւնը խզեց և առիթից օգտւելով՝ Կոստանդին Քաջագնունին ասաց.

— Վարդ, եկել եմ քեզ հետ մի քիչ խորհրդակցելու:

— Համեցէք, հօրեղբայր, ի՞նչի մասին:

— Ձեր ընտանիքի դրութիւնն ևս իմ սըրտին մօտիկ է. ճիշտ է մարդու շապիկը ամենից առաջ իր մարմնին է մօտ, բայց բարեկամութիւնն ու ազգականութիւնն էլ մեծ բան են: Հանգուցեալ եղբայրս մեր քաղաքում անուն ու պատիւ ունեցող մարդ էր: Նրա մահից յետոյ որդիները փոքր էին, ընտանիքը բաւական նեղութիւններ քաշեց, բայց բոլորս էլ հաւատացած էինք, որ այդ տնցողական է, որովհետեւ դու թէ գիմնադիպու և թէ Պետերբուրգում աչքի ընկնող առաջադիմութիւն էիր անում, և բոլորս էլ յոյս ունէինք, որ դու կըվերականգնես ձեր ընտանիքի նախկին դիրքը: Սակայն, եթէ չես նեղանայ, կասեմ, որ ինձ և թէ մայրիկիդ, որին պարտական ես ամբողջ կեանքովդ ու կրթութեամբդ, թուում է, որ դու մի քիչ անտարբեր ես դէպի ձեր ընտանիքի դրութիւնը:

Վարդը ներքուստ յուզւած էր, բայց աշխատում էր սառը լինել: Երբ հօրեղբայրը վերջացրեց, նա պատասխանեց:

— Ես չըզդիտեմ, դուք ինձնից ինչ էք սպասում, բայց ես այս եմ և, կարծում եմ, բռնի կերպով ուրիշ տեսակ չեմ կարող լինել: Շնորհակալ եմ, որ դուք մեր տան մասին մտածում էք, նեղ ժամին մայրիկիս օգնութեան էք հասել, մենք անշուշտ վարձահատոյց կըլինենք: Բայց չեմ հասկանում,

ինչով եմ առիթ տւել կասկածելու որ անտարբեր եմ դէպի մեր ընտանիքը, չեմ ձգտում բարձրացնելու մեր ընտանիքի պատիւը, և վերջապէս մեր ընտանիքի պատիւը ամեննին ընկած չէ։ Աղքատութիւնը դեռ անկման նշան չէ. ընդհակառակը, բարոյապէս ընկածների թիւը ոսկու աշխարհում է շատ։ Մայրիկս կարող է հանգիստ լինել, որովհետեւ ես չեմ կարծում, որ նրա աշխատանքը մոռանում, կամ ստացած կրթութիւնս գործադրեմ Բաջադնունների անւանն անպատւաբեր գործերի համար։ Միայն թէ պատիւն ու անարգանքը մարդիկ զանազան տեսակ են հասկանում։

— Լսիր, Վարդ, որդիս,—մէջ մտաւ մայրը—ես, Գալուստ Ստեպանիչ Բաջադնունու կինը, ամեն նեղութիւն յանձն եմ առել, պարտքեր եմ արել,—գիտե՞ս, որքան անպատւաբեր է պարտքերով ապրելը,—որպէսզի դու թերուս չըմնաս, որ քո սիրտը չըկտորի, որ դու լաւ մարդ դառնաս, որ չի նոգնիլ լինես, պաշտօն ստանաս, որ քեզ մատով ցոյց տան, որ ուրիշները քեզ ծառայեն, հարուստները իրանց աղջիկները քեզ տալաւ համար գլուխ պատուեն, որ ինժինեքական փայլուն կոճակներդ թշնամինիրս աչքը ծակեն։ Այդ բոլորից յետոյ մայրդ կուրախանար, նոր իմ վերաւորւած սիրտը կաղոյշանար, նոր միայն կըմխի-

թարէր քո անբախտ մայրը... Ո՛հ, որդի, ազատիր ինձ պարտքերից...

Տիկին Վարվառէի ձայնը երեւաց, կոկորդը խեղդւեց, նա էլ չըկարողացաւ շարունակել... Կոստանդին Բաջադնունին գլխով տիկնոջ ասածներին հաւանութեան նշան տալուց յետոյ, ասաց.

—Այո, որդի, այո, անուն բարձրացնող զաւակը այդպէս պիտի լինի. պարտքերով ապրելը լաւ չէ. փառք Աստծու, ուսում ունիս, խելք ունիս, մտածիր քո ապրուստի մասին, քո վերջին օրւայ մասին. կարգին պաշտօն գտիր, թէ չէ «գաղեթ» գրելով մարդու փոք չի կշտանայ։

Վարդը յուզւած կանգնեց տեղից։

— Թող հանգիստ լինի մայրիկս, պարտքերը կը տրւեն, նոյնպէս հանգիստ եղէք, հօրեղբայր, մուրհակները չեն մոռացել, լաւութիւնը վատութեամբ չի հատուցել։ Ձեր մնացած առաջարկութիւնները ես մերժում եմ. թէ ինչ պաշտօն կըվարեմ, իմ գործս է. ես ուզում եմ բարձրացնել Բաջադնունիների պատիւը, բայց ոչ հօրս մունդիրով, կամ հօրեղբօրս արշինով։ Ես նամուսը այս տեսակ եմ հասկանում։ Ցտեսութիւն։

Ասաց ու, ժամացոյցին նայելով՝ դուրս գնաց։ Հարս ու տաքը իրար երեսի նայեցին. նրանք չըկարողացան հասկանալ Վարդի խօսքերի իմաստը։ Երիտասարդ է, խել-

քը դար ի դուս, մտածում էին նրանք:

Անահիտը, որ մինչև այդ ժամանակ լուռ լսում էր, նոյնպէս յուզւած էր: Ընտանեկան այդպիսի տեսարանը նա տանել չէր կարողանում, քիչ էր մնում՝ լայ: Վարդի յետևից, երկու ընկեր յետոյ, նա դուրս եկաւ և վազեց դէպի սանդուխքները: Վարդը դարձաւ մօտ էր:

— Վարդ,— ճշտաց Անահիտը,— իսկ ես: Վարդը յետ նայեց:

— Ներիւր, Անիւտա, քեզ մոռացել էի, եկ:

Շտապով մտաւ սենեակը, գլխարկը, հովանին առաւ հասաւ եղբօրը: Բայց մի միտք սկսեց տանջել նրան. մամային մենակ թողի, մտածում էր նա: Նրա երեսը կարմրել էր, փոսիկները աւելի էին գեղեցկութիւն տալիս կարմրած այտերին: Քոյր ու եղբայր դուրս եկան փողոց:

Քիչ յետոյ Կոստանդին Քաջազնունին խանութ գնաց, տանելով իր հետ այն յոյսը, որ իր փողերը կըստանայ: Տիկին Վարվառէն փակեց սենեակում:

Փողոցը բաւական շոգ էր: Թանձր փոշին բարձրանում էր երթևեկողների ոտի տակից ու կօշիկները հողոտում: Վարդն ու Անահիտը գնում էին լուռ և ամենևին ուշադրութիւն չէին դարձնում մրգավաճառ-

ների ու մանրավաճառների հրաւերներին: Խանութների դռների առաջ, այս ու այն ստերոտ անկիւնում մարդիկ խումբ-խումբ խօսակցում էին: Նրանք հասան քաղաքային այգուն: Նստարանները մեծ մասամբ դատարկ էին. միայն հասարակութեան այն մասը, որ սովորաբար հաստատուն զբաղմունք չի ունենում, որ արտադրում է ծոյլերի ու կասկածելի պարամունքների տէր բանակի անդամներ, այստեղ ունէր բաւական թւով յաճախորդներ: Նրանք ծոյլ-ծոյլ խօսում էին. ոմանք պարկած էին նստարանների վրայ չընդունած ձևերով: Փողբիկ պատանիները, որոնք սովորաբար կամ «սառը ջուր» են ծախում, կամ կօշիկ մաքրում, կանգնում էին այս կամ այն խմբի առաջ և իրենց ծառայութիւնն առաջարկում, սակայն միւսների կողմից մի հայհոյական, ցինիկ ու սուր պատասխան էին ստանում: Ապա հետևում էր ծիծաղ: Ծիծաղում էին և հայհոյողները:

Երբ Վարդն ու Անահիտը այգու կենդրոնին հասան, երկու կօշիկ մաքրող պատանիներ կուռում էին: Մինը սեւաչեայ, սուր-սուր գծերով հրեայ էր, միւսը, մի նիհար արարած, հայ: Նրանք աղմկում էին ու միմեանց վիրաւորում ամենավատ յիշողներով: Այս ու այն նստարանի վրայից քաջալերում էին նրանց ու զարճանում: Անահիտը այլայլւած նայում էր ու շշնջում, «խեղճեր, խեղ-

ճերձ: Հացի անողոք խնդիր, գոյութեան կուր, անցաւ Վարդի մտքով: Նրանք երկար զնացին, անցան այնպիսի փողոցներով, ուր Անահիտն առաջին անգամն էր լինում:

Արդեօք ինչպիսի մարդկանց շրջան է տանում ինձ եղբայրս, մտածում էր Անահիտը. հասկացող մարդիկ կըլինեն այնտեղ, գուցէ և քաղաքի դիրք ու կարողութիւն ունեցող երիտասարդները, հարկաւոր է նրանց հետ լաւ, ըստ պատշաճի ձևերով խօսել, որպէսզի «կոօի» տպաւորութիւն չըթողնեմ: Հայերէն է հարկաւոր խօսել, թէ ուսերէն, շարունակում էր զբաղուել նրա միտքը. սակայն ինքը ոչ լաւ հայագէտ է, ոչ էլ ուսական յարմար արտասանութիւն ունի: Ո՛վ է իմանում, ինչ թանկագին հագուստներ են հագած նրանք, իսկ ինքը հագնուած է շատ հասարակ: Նա ուզում էր իր մտացածների մասին հարցնել եղբորը, բայց չէր համարձակում: Վերջապէս մի դռան առաջ կանգ առան, մի խուլ փողոցում: Առանց դուռը ծեծելու ներս մտան: Բաւական երկար ու նեղ պարտիզի միջից անցնելով՝ մտան մի ընդարձակ սենեակ: Առաջին բանը, որ նկատեց Անահիտը, ժողովականների խայտաբղէտութիւնն էր և հասարակ դասից լինելը—բանւորներ, արհեստաւորներ ամենահասարակ հագուստներով. կային և կրթած երիտասարդ-

ներ, ուսանողներ, գիմնազիստներ, օրիորդներ, որոնց հետ Անահիտը ծանօթ չէր: «Քոյրս», ասաց Վարդը: Մի քանիսը ձեռք բռնեցին Անահիտի հետ, ոմանք բաւականացան գլխի շարժումով, կամ ժրպտալի նայածքով: Ամեն ոք մի որոշ տեղ բռնեց, իշխեց կատարեալ լռութիւն: Ժողովը սկսեց: Վարդը նախագահ ընտրեց: Սկսեցին խորհրդակցել զանազան հարցերի մասին: Այնքան պարզ էին այդ հարցերը, որ Անահիտին դարմանալի էր թւում, թէ ինչպէս են այսքան մարդիկ հաւաքել զրանց համար: Քիչ-քիչ նա կարծիքը փոխեց: Պօսում էին բոլորը, բայց կարգով. խօսում էին պարզ, ոգևորւած: Որտեղից են սովորել այսպէս խօսել այս գոեհիկ մարդիկ, մտածում էր Անահիտը: Պօսում էր և Վարդը, խօսում էր երկար, պարզաբանում էր այս կամ այն հասկացողութիւնը, այս կամ այն գաղափարը: Նա խօսում էր հանդարտ, սահուն, առանց կանգ առնելու, երբեմն միայն նրա ձայնը բարձրանում էր, և այն ժամանակ ժողովականներից մէկը կամաց հնչում էր «սը՛ս», և նա նորից ձայնը իջեցնում էր: Իսկ տանը դռան քշախօս է, մտածում էր Անահիտը: Անահիտին թւում էր, որ իր կարգացած փոքրիկ գրքերի և սրանց խօսածների մէջ ինչ որ կապ կայ: Ամենից վերջը դարձեալ խօսեց Վարդը: Բոլորը լսում էին նրան խորին ուշադրու-

Թեամբ: Ապա սկսեցին ցրւել: Վարդը, Անահիտը, մի պարոն և մի օրիորդ, որոնց հետ Անահիտը նորից ծանօթացաւ, միասին դուրս եկան: Պարոնը իրան Արշակ Բահաթրեան անւանեց, օրիորդը՝ Վիկտորիա Նազեան: Պարոնը ուսուցիչ էր, օրիորդը՝ կուրսիստկա և պատրաստուում էր մտնել դըպրոցական գործունէութեան ասպարէզը: Արշակ Բահաթրեանը միջահասակ, բարակ-մարակ, թուխ դէմքով, սև աչքերով պարոն էր, մաքուր ածիւած, բաւական երկար բեխերով: Նա հագնւած էր պարզ ու ճաշակով: Օրիորդ Նազեանը բարձր հասակով, շակահաւոր մազերով, մեծ-մեծ, կրակոտ բաց-կապոյտ աչքերով, երկար արտևանունքներով: Երեսը կլոր էր ու գրաւիչ, իսկ կանաչ քօղը, որ պատել էր ամառնային թեթև գլխարկը և մէջքի վրայ փռւել, աւելի դեղեցկութիւն էր տալիս նրան:

Այս չորսը, նախօրօք համաձայնութեան գալով, նախաճաշեցին քաղաքային այգու տաղաւարում, թէև ճաշի ժամանակն էլ էր անցել: Ապա փոխանակ տուն գնալու, դուրս եկան քաղաքից և ուղևորւեցին դէպի գետի ափը: Քաղաքի հիւսիսային կողմում մի բլուր կար: Բարձրացան բլրի գագաթը և, նստելով ժայռերի վրայ, նայում էին մայր մտնող արեւին, որ իր վերջին համբոյրն էր ուղարկում հեռում սպիտակին տևող բարձրաբերձ լեռներին: Հեռում երևում էին

երկու Մասիսները, որոնք ամառայ մշուշապատ օդի միջից բարձրացրել էին իրանց գլուխները: Մեծ Մասիսը սպիտակափառ ծերունու նման նայում էր հեռում լեռների տակով ծովը գլորող արեւին: Գետը բլուրից ցած, խոր ընկած ձորակով ոլորապտոյտ վազում էր դէպի ցած, դէպի հարաւ. տեղ-տեղ նա փայլում էր արծաթագոյն, տեղ-տեղ էլ թաղւում էր ծառատանների ու այգեստանների մէջ: Նրանք նայում էին այդ չքնաղ տեսարանին և հոգեկան բաւականութիւն էին ստանում: Քիչ ցած փռւած էր գաւառական փոքրիկ Ա. քաղաքը իր ծուռ ու մուռ փողոցներով. եկեղեցիների գմբէթների խաչերը փայլփրլում էին արևի վերջին ճառագայթների շողերից: Մին էլ յանկարծ սկսեցին զօղանջել եկեղեցիների զանգակները, որոնց ձայները հանդիսաւոր բնաւորութիւն էին տալիս տեսարանին և քնքոյշ ու բովանտիկ յոյզեր ներշնչում:

— Ո՛րքան գեղեցիկ է,—ասաց Բահաթրեանը:

—Մտքի շղթաների զօղանջներն են դրանք, ըմբոստ ոգու վրայ տարած յաղթութեան աւետիքն է, որ դարեր շարունակ գեղեցիկ գմբէթների վրայից, ամեն օր յայտարարում են մարդկանց:

Երկու օրիորդները, որ զրոյց էին անում, միմեանց երեսի նայեցին:

— Բայց և այնպէս տեսարանը կախարհելի է աւելացրեց Բահաթրեանը:

— Իսկ ես կասեմ, որ ամեն օր զանգակները յայտարարում են մարդկանց, թէ յիշէք, ինչպէս պիտի մեռնել դաղափարի համար, մարդկանց համար,—ասաց Վիկտորիան: Վարդը պատասխանեց.

— Սակայն այդ քնքոյշ հոգու տէր զօհը, մարդկանցից գուցէ ամենաբարին, ամենամեծը չըկարողացաւ ազատել իր սիրելիներին ինկելիղիթիայից, եղբիտներից, թէրեւս նպատեց: Բացի այդ, արդեօք նա իր հանդէս գալով հանգստութիւն տւեց վաստակեալներին ու բեռնաւորներին, թէ նրանց առաջադիմութիւնը յետ մղեց իր սիրուն խոտուններով, որոնք երբէք չիրականացան նրա քարոզած գլխաւորութեամբ...

— Ձէ, դու մեղանշում ես,—ընդհատեց Վիկտորիան,—պապերի ու եղբիտների տեղ նա, այն «կատարեալ մարդը», աստուածային սիրոյ կատարեալ արտայայտիչը չըպիտի պատասխանատուութեան կանչի:

— Է՛, շատ խթին բաներից սկսեցիք,—մէջ ընկաւ Արշակը,—դրան վերջ չի լինի, աւելի լաւ է ձայներդ կտրէք, և մենք տուն ուղևորենք, որովհետեւ մութը կընկնի շուտով:

Նրանք տեղներից շարժեցին, և որովհետեւ գլխիվայր էր ճանապարհը, ուստի Արշակն իր ծառայութիւնն առաջարկեց օրիորդ

Անահիտին: Նրանք գնում էին լուռ: Երբ քաղաքային այգուն հասան, արդէն լապտերները վառւած էին, և ժողովուրդը, մանաւանդ կանայք, շտապում էին զբօսանքի:

— Մնանք այդում,—ասաց Արշակը:

— Կըցանկանաս, Անահիտ, — հարցրեց Վարդը:

— Ոչ, գնանք տուն, մաման սպասում է, — եղաւ պատասխանը:

Եւ նրանք բաժանուեցին:

Երբ Վարդն ու Անահիտը տուն հասան, տիկին Վարվառէն պատշգամբում սպասում էր: Մնօն լուռ կանգնած էր նրա մօտ: «Ի՞նչ եղան, հէ՛ր գնացին», — շշնջում էր տիկինը:

— Կհագեա գնամ, մանգամ, գտնեմ նրանց, ասում էր Մնօն:

— Ո՛ւր գնաս, որտե՞ղ գտնես, գնալիս ոչինչ չմտային,—պատասխանում էր, անհանգիստ դարբասին նայելով: Այդ ժամանակ հէնց դուռը ճռւաց, և կիսախաւարի մէջ նշմարեցին երկու անձն, որոնք շտապով վեր բարձրացան: Վարդն ու Անահիտն էին դրանք: Երկուսն էլ հասնելով պատշգամբին, նկատեցին մօրը և, համարեա, միասին ասացին.

— Բարի երեկոյ:

— Աստու բարին,—ասաց տիկին Վար-

վառէն,—և չկարողանալով զսպել իրան, զայրացած ձայնով շարունակեց,—Խնչ եղաք դուք, մեռայ սպասելով, գոնէ տեղերդ յայտնէիք:

—Ներքի, մամա: Մենք երեխաներ չենք, փառք Աստծու,—ասաց Անահիտը:

—Մի ասի, աշխարհը փոխել է, հազար չար ու շատ կայ մարդու առաջ, հազար չար աչք է նայում ձեզ: Դուք միայն ձեր մասին էք մտածում, տեղեկութիւն չունէք մօր սրտից:

Վարդը ոչինչ չէր պատասխանում, իրան անյարմար դրութեան մէջ էր զգում: Իմ մասին, ոչինչ, բայց չէ որ Անահիտին էլ եմ տարել, մտածում էր նա, մայրս իրաւունք ունի անհանգիստ լինելու, Անահիտը գոնէ հասկանում է նրա սիրտը, նրա անհուն խստութիւն ունեցող մայրական սիրտը, որի գաղտնիքները տղամարդը զուցէ հասկանալու ընդունակութիւն չունի:

—Մամա, մի բարկանա, ներքի մեզ: Ես քաղցած եմ, մամա, բան կայ ուտելու,—ընդհատեց գանգատող մօրն Անահիտը:

—Կայ, իմ կոկորդովս բան կուլ կըգնայ, չենք ճաշել, բոլորը մեռւում է, ինչոր պատրաստել ենք, թէյն էլ է պատրաստ:

Երեքով էլ ներս մտան: Մնօն շտապից հասնել նրանց:

—Ներքի, մամա, որ Անիւտային տարել էի առանց քեզ յայտնելու,—ասաց Վարդը և

ինքն էլ չիմացաւ, ինչպէս որոշեց այդ ասել: Իսկ մայրը քաղցր բաւականութիւն դրաց:

Վարդը նոյնպէս շատ քաղցած էր: Նրանք այդ օրը չէին ճաշել: Մեծ ախորժակով ընթերելուց յետոյ, Վարդը գնաց իր սենեակը, որ ընդհանուրի սենեակի դիմացն էր, հարաւային կողմը: Փոքրիկ լամպը կապոյտ լուսամփոփով դրած էր գրասեղանի վրայ, որ բեռնաւորւած էր գրքերի գարսերով: Վարդն ինքը վառեց լամպը: Նա ուղեց մի գիրք վերցնել, կարդալ, բայց հազիւ մի քանի տող կարդացել էր, նորից ծածկեց գիրքը ու բաց արեց պարտիզին նայող երկու պատուհանը: Կանգնած սենեակի մէջ տեղում, նա երկար նայում էր պատին կպցրած բաղմաթիւ պօստկարտերին ու լուսանկարներին: Նայում էր հայ ու օտարազգի մեծ մտածողների, գեղարւեստագէտների կարտերի շարքերին, ու հազար ու մի տեսակ մտքեր լսաւ նւում էին նրա գլխում: Պատի վրայ, ամենից վերեւ փակցրած էր Շէքսպիրի պատկերը: Վարդը նայում էր նրա լայն ճակատին, մեծ-մեծ աչքերին, նայում էր, կարծես, ու մեծ-մեծ թափանցել նրա սրտի խորքը, գում էր թափանցել նրա ճակատի տակ թաղուում էր իմանալ լայն ճակատի տակ թաղուած հսկայ հանճարի անխմանալի զօրութիւնը, որն այնքան հրաշալի երկեր ու բարդ հոգիներ է ստեղծել: Նրա աչքի առաջով անցնում էր Տօլստոյի կարտը. ահա

հսկայ ծերունին, ուրոյն իր հոգով, ուրոյն իր տարազով, վիթխարի իր մեծութեամբ, ալեծուփ ծովի մէջ մենակ ու անյողգողդ իր գաղափարներով, իր սիրոյ քարոզով: Ահա Բակունինը իր մանր աչքերով ցած է նայում. նրա պատկերի մէջ անգամ արտայայտում է նրա անհանգիստ հոգին, միշտ շարժուն, միշտ աղմկող, միշտ կտրուկ. կարծես, պատի բարձրութիւնից անգամ թափւում են նրա խորտակող խօսքերը՝ ուղղւած պետութեանը, տիրող դասակարգերին ու իշխողներին, կարծես, նրա շրթունքները դարձեալ շնչում են. «Վոյտերը ասում էր, եթէ Աստուած չլկայ, պիտի նրան ստեղծել, իսկ ես ասում եմ, եթէ Աստուած կայ, պիտի նրան խորտակել»: Նայում էր Վարդը, նրա աչքերը անցնում էին նկարների այդ շարքերի վրայով, և նրա գլխում շփոթում էին մտքերը: Ահա նրա հայեացքն առաւ Շելլին. սրա քնքոյշ, կանացի դիմագծերը մի ըռպէ կանգ առնել տւեցին Վարդի մտքերին: Նա նայեց, նայեց ու շուռ գալով՝ պատուհանին մօտեցաւ, հայեացքն ուղղեց անորոշ խաւարին. մի քանի ըռպէ այդպէս մնալուց յետոյ, նա դարձաւ ու ընկաւ մահճակալի վրայ: Նրա սիրտը բաբախում էր, նա զգում էր, ուզում էր զսպել իր յուզումը, բայց չէր կարողանում: Նա արդէն հասուն տղամարդ էր, քսանհինգ տարին լրացրած: Ռբքան

ջանք է թափել նա, որպէսզի իրան հետու պահի կանացի հրապուրանքից, որ նրանք չըխանգարեն իր ծրագիրները: Պետերբուրգում եղած ժամանակ ճրքան զգոյշ էր, որ իդէալիստ ոռւս աղջիկները չը կաշկանդեն իրան: Բայց նա այլևս չէր կարողանում ընկճել սեռի զգացումը, տղամարդը հասունացել էր նրա մէջ, իր պահանջն էր անում, բողոքում էր այսքան տարիների ճգնաւորական ժուժկալութեան դէմ, և Վարդը յաղթահարւած էր այդ ժամին, նրա խփած աչքերի առաջ պարզ գծազրոււմ էր օրիորդ Վիկտորիա Նազեանի պատկերն իր երկար արտեանունքներով, երկնագոյն ու երկնքի պէս խոր աչքերով, ալ շրթուքներում էին բաւականութեան զգացում, և քանի անցնում էին ժամերը, նա այնքան աւելի սղմում էր՝ աչքերը, կարծես, վախնում էր, որ լոյսը թափանցելով աչքերը, ի չիք կը դարձնէ քաղցր անուրջները: Այսպէս Վարդ ֆաջադնունին սիրահարւած էր: Այդ գիշերը նա քնեց ջերմագին տենդով և առաջին անգամ առանց վաղայ առնելիքի մասին մտածելու: Նա նոյնիսկ չը նկատեց, որ սեղանի վրայ մի կնքած ծրար իրան էր սպասում:

Քաջազնունիների տանը խաղաղութիւն տիրեց: Տիկին Վարվառէն ընթրիքից յետոյ անմիջապէս անկողին մտաւ իր սենեակում, որն ընդհանուրին կից էր: Լեռնը տխուր տրամադրութեան մէջ էր, որովհետեւ վաղը գնալու էր: Նա սովորականից շուտ գնաց իր սենեակը, կից Վարդի սենեակին: Անահիտը սպասեց մինչեւ բոլորը քնեցին, ու ինքն էլ, որ բաւականին յոգնած էր, շտապով մտաւ իր մահիճը, որ մօր ննջարանումն էր: Սակայն քունը չէր մօտենում նրա աչքերին:

Դեռ գիմնազիան չաւարտած մայրն Անահտին դուրս հանեց այնտեղից: Ահա մի քանի տարի է, ինչ նրանից չէր բաժանուում: Նրա խիստ բնաւորութիւնը հանդուրժել չէր կարողանում աղջիկների չափազանց ազատութեանը: Բացի այդ, նա ամուսնու մահից յետոյ իրան չքաւոր դալով, չէր համաձայնում իր աղջկանը դուրս թողնել առանց վայելուչ ու բարձր հասարակութեանը յարմար շրջերի: Քանի որ չունենք, չըպիտի մարդամէջ գնանք, խրատում էր նա յաճախ Անահտին: Որդիներին քաղաքից դուրս ուղարկելով, տիկին Վարվառէն իր սիրով առարկան էր դարձրել Անահտին. սա էր նրա զրուցարնկերը, գաղտնիքների հաղորդակիցը, մխիթարողը: Տարիների ընթացքում այդ զգում էր Անահիտը և յաճախ իր այս կամ այն ցանկութիւնը, կամքի

թելադրութիւնը խեղդել էր, մօր հետ համակերպել, որպէսզի մայրը դառնութիւն չըզգայ: Անահտի միակ մխիթարութիւնն էր եղել բօմանների ընթերցանութիւնը: Նա դարձել էր դիւրազգաց: Վիպական հերոսները նրա մէջ ստեղծել էին մի խորհրդաւոր ու անորոշ հասկացողութիւն սիրոյ մասին: Իբրեւ արբունքի հասած աղջիկ նա զգում էր սիրելու ու սիրելու կարիք, բայց անորոշ. տղամարդը յայտնի չէր նրան, տղամարդի ոյժի գերազանցութիւնը դեռ նա չէր ճշակել: Բայց ահա գալիս է Վարդը և միանգամից յեղափոխութիւն է առաջացնում Անահտի կեանքի մէջ: Նոր զրքեր, նոր խօսքեր, զբօսանք, ժողով և նոր տղամարդիկ: Պարկած անկողնում դրանց մասին էր մտածում Անահիտը: Նա աշխատում էր վերականգնել ժողովում բոլոր լսածները, ուզում էր հասկացածներից մտքերի մի ամբողջութիւն կազմել, յիշողութեան մէջ պատկերացնում էր տեսած բոլոր դէմքերը: Ահա Վարդի կերպարանքը, ճրքան վեհ, ճրքան զրաւիչ, իսկ ձայնը ուժեղ, հնչուն: Սակայն այդ իր հարազատն է, մաքուր ու անարատ հարազատը. ուրիշ կանանց համար է նա, գուցէ մի երջանիկ Վիկտորիայի, կամ մի ուրիշի: Խառն ի խուռն պատկերների մէջ քիչ-քիչ պարզեց Արշակ Բահաթրեանի դէմքը, սեւիկ աչքերով, երկար բեխերով: Ահա նա, որի վրայ կանգ առաւ Անահտի

միտքը, իսկ սիրտը զգաց, որ մի անսովոր սարսուռ պատեց մարմինը:

Առաւօտեան ամենից շուտ վեր կացաւ տիկին Վարվառէն: Նա կանչեց Մնօին և պատուիրեց կառքի մասին հոգալ, ապա արթնացրեց Անահտին և շտապեցրեց թէյը շուտ պատրաստել: Ինքն իր ձեռքով զարսեց Լեոնի շորերը պայուսակում:

Վեր կացաւ և Լեոնը: Նրա սիրտը ճմլւում էր. մի ժամից յետոյ պիտի հեռանայ հարազատներից, պարտիզից, որսի հրացանից, մացառոտ ձորից: Նա տասնեօթ տարեկան էր, բայց մանկան պէս պարզ էր: Աշակերտի սիրտը բոլոր դասարաններում էլ մաքուր է ու զգայուն, մի մանկական գիծ ունի՝ սրտատրոփ սպասել տարւայ վերջին, թախծալից բաժանել ծնողներից արձակուրդի վերջին: Բայց չէ որ ես կարգալու եմ գնում և ոչ գերի, սիրտ էր տալիս նա իրան, բայց էլի քիչ էր մնում, որ լայ: Ես հօ անջիկ չեմ, տղամարդ եմ, տղամարդ, հանգստացնում էր նա իրան, որ խեղդի արտասուելու սրամաղբուրթիւնը:

Թէյը արդէն պատրաստ էր. կառապանը շտապեցնում էր, բայց Վարդը սենեակից դեռ չէր դուրս եկել: Տիկին Վարվառէն հրամայեց չըստասել, թէյ տալ, որ Լեոնը

չուշանայ: Թէյի ժամանակ տիկինն աշխատում էր ուրախ ձևանալ, որ Լեոնը չը տխրի: Անահիտը բաժակներն էր լցնում և նոյնպէս ձգտում էր, որքան կարելի է, սիրալիր երևալ Լեոնին: Թէյը վերջանալու վրայ էր, երբ Մնօն յայտնեց, թէ կառքը նորից եկաւ: Լեոնի կուրծքը ուռել էր, կոկորդը խեղդւում էր, նա չէր իմանում, ինչպէս սկսի հրաժեշտ տալ:

— Դէ, Լեոն ջան, մի ուշանայ,—ասաց մայրը:

Լեոնը մօտեցաւ մօրը: Մայրը բռնեց նրա գլուխը և մի քանի անգամ համբուրեց նրան: Մայրն զգացւած էր: Լեոնը լաց եղաւ: Նրա երեսը կարմրել էր, հազիւ սկացած բեղատեղերը կարմիր շրթուքների վրայ աւելի գեղեցիկ էին: Նա համբուրեց Անահտին ետ, որն սկսեց յանդիմանել:

— Չես ամաչում, լալիս ես, ապա երբեմն քաջութեամբդ ես պարծենում:

Լեոնը աշխատելով իրան զսպել՝ ասաց:

— Մամն, իսկ Վարդը:

— Գնա, տես նրան: Եթէ քեզ է, արթնացրու, քու եղբայրն է, մի ամաչի:

— Մամն, կըտեսնեմ, մամն, այդ չեմ ասում... մամն, մի չարանա, նրա վրայ, նա լաւն է, հասկանում ես, մամն, լաւն է,

— Նա նորից յուզեց: Մայրը Լեոնից այդ չէր սպասում: Փոքրիկ, քչախօս Լեոնն այս տարի ոչ միայն չարածձի էր դարձել,

ոչ միայն որսորդ էր ու քաջութիւններ եւրազող, այլ և խրատներ է տալիս մօրը: Հօր նման է, թէ խօսելը, թէ սիրտը, մըլմընջում էր մայրը զգացւած: Նորից համբուրեց ու ասաց.

— Գնա՛, որդիս, Աստուած քեզ հետ, գնա՛, Վարդին տես:

Լեռնը քաշելով ծեծեց եղբօր դուռը և ներս մտաւ: Վարդը արթնացել էր, բայց չէր հասնել: Լեռնի մտնելուն պէս նա նըստեց ու ասաց.

— Ա՛, դժւ ես, գնում ես հա՛, եկել ես միաս բարե ասելու, արի՛:

Երկու եղբայր համբուրեցին: Վարդը բռնեց նրա գլուխը, նայեց սև աչքերին, երկրորդ անգամ համբուրեց շրթունքներն ու ասաց.

— Լաւ սովորիր, որ մարդ դառնաս:

Լեռնը դուրս եկաւ, իսկ Վարդն սկսեց հագնուել: Մայրը, Անահիտը, Մնօն Լեռնին նըստեցրին կառքի մէջ, բարի ճանապարհ մաղթեցին: Կառքը շարժեց: Մինչև կառքի փողօցի ծայրը հասնելը նրանք նայում էին կառքին:

Դեռ շորերի կէսը չըհագած՝ Վարդը նըկատեց սեղանի վրայի ծրարը և շտապով բաց արեց, կարդաց: Կնքած թղթով մի հրաւեր էր այդ, որ ուղարկւած էր քաղաքի ծխական դպրոցների հոգաբարձութիւնից: Նրան հրաւիրում էին օրիորդաց և տղայոց դպրոցների տեսուչ: Տըւում էր վճռական

ձայն խումբը կազմելու խնդրում: Երկրորդ անգամ կարդալուց յետոյ՝ նա հրաւերը դրեց սեղանի վրայ, մտածկոտ հագաւ շորերը, դուրս եկաւ նախասենեակ, առաւ սրբիչը և այգի իջաւ: Ծանապարհին պատահեց Մնօնին:

— Աղա՛, երեկ մի նամակ էր եկել քեզ, դրի օթախիդ ստօլի վրայ, տեհմը,—հարցրեց Մնօն:

— Վերցրի, շնորհակալ եմ, բայց դու Մնօ՛, ինձ ինչո՞ւ ես աղա ասում, ես աղա չեմ, հասկանում ես:

— Բա ի՞նչ ասեմ, փառք Աստծուն, մենձ մարդ ես դառել, բա մեզ պէս նօքար մարդուն լայեաղ ա քեզ աղա չմտել:

— Չէ, Մնօ, ես աղա չեմ, ինձ Վարդ կասես, հասկանում ես, Վարդ:

Վարդն շտապեց առաջ գնալ: Մնօն նայում էր նրա յետևից և զարմանում էր նրա վրայ:

— Սաղ աշխարհքի մարդիկ ուզում են, որ իրանց աղա ասեն, ֆոքիներն էլ են տալի դրա համար, հմի սա էկել ա ու չի թողում, իրան աղա ասեն: Վայ թէ սրա խելքը տեղմը չընի, էնդդար կարդացել ա, խելքը պակսել ա, ով ա իմանում: Խի քոռ եմ, ըտուց ա, սր խանմի նօթերը հա կիտած ա:

Վարդն այգու առաւելում սառը ջրով լւացեց և սրբելով՝ տուն եկաւ: Անահիտն

սպասում էր նրան թէյի սեղանի մօտ։ Սովորական «բարի լոյսից» յետոյ նա նստեց սեղանի մօտ ու սկսեց ակորժակով թէյ խմել։

— Զբօսանքից յետոյ թէյ խմելը լաւ է, — ասաց Անահիտը։

— Այո, մանաւանդ այժմ, շոգերն անցնում են, առաւօտեան նոյնիսկ ցուրտ է լինում։

— Ի՞նչ նամակ ես ստացել, մաման ասում էր, նամակ կար երեկ։

— Գիղմս ինչ, ինձ մեր քաղաքի ծխական դպրոցների տեսուչ են հրաւիրում։

— Համաձայնում ես։

— Այո, ի՞նչ կայ որ. միթէ վատ բան է ծառայել ժողովրդին, իսկ դրա համար դըպրոցը ամենալաւ տեղն է։ Ես այսօր և եթ իմ համաձայնութիւնը կըտամ, իսկ վաղը կըգնամ տղայոց դպրոց, ուր պիտի լինի իմ առաջին ժողովը հոգաբարձութեան հետ։

— Գիտե՞ս ինչ, Վարդ, ինչ լաւ կըլինէր, որ ես էլ ուսուցչուհի լինէի։

— Եթէ ուզենաս, կըլինես, դու բաւական պաշար ունիս, կը պատրաստես, քննութիւն կըտաս։

— Լաւ կըլինի, սեպտեմբերից սկսեմ աշխատել։

— Ես էլ քեզ կօգնեմ։

— Շնորհակալ եմ։ Բայց, Վարդ, այս լուրը, չեմ կարծում, որ ուրախացնի մամային։

— Մենք մամաների հասկացողութեամբ չը պիտի շարժենք։ Նրանք իրենց ժամանակն անցրել են, այլ ևս դեր չունին, իսկ մենք ապրում ենք նոր ժամանակներում։ Մաման և նրա նմանները չեն կարողանում տանել մեզ։ Հները միշտ նախանձոտ են դէպի նորերը, դրա համար էլ բոլոր դարերում եղել է հնի ու նորի կռիւ։ Այժմ էլ մենք ենք շարունակում այդ կռիւը։ Մի տարբերութիւն էլ կայ, մեր ժամանակներում այդ կռիւ աւելի թունդ է։ Դու դեռ պարզ հասկացողութիւն չունես այդ պայքարի մասին. յուսով եմ, որ քիչ-քիչ կըհասկանաս, որ հների ու նորերի այժմեան կռիւը ձգտում է մեծ յեղափոխիչ հանդիսանալ մարդկանց համար։ Նա ուզում է ոչ միայն նորերին ազատել հների իշխանութիւնից, այլ և վերացնել աշխարհից անարդարութիւնը, տանջանքներն ու հեծեծանքները։ Դրան հասնելու համար նա արհամարում է մամաների խրատները, տենչում է ոչնչացնել շատ բաներ, որոնք մեր ժամանակներում սրբութիւն են համարում... Ստրկութիւնը վատ է, եթէ նոյնիսկ Աստծու իշխանութեամբ է պայմանաւորւած։

— Ի՞նչ, Վարդ, ի՞նչ։

— Այո, այո, հէնց Աստծու իշխանութիւնը, եթէ նա բռնակալական է։ Ամեն մի իշխանութիւն պահանջում է ստրկութիւն։

կամ պիտի մարդիկ ստրուկ լինեն, կամ ազատ...

— Վարդ, այդ անաստեղծութիւնն է,— զարմացած ու մի քիչ էլ վախեցած, և համարեա ճշալով, ասաց Անահիտը:

— Ա՛յ, տեսնո՞ւք, քո հոգին դեռ չի ազատուել հների ազդեցութիւնից, քո մէջ դեռ խօսում է մաման, և ով է իմանում, դու էլ մի մամա չես դառնալու և չես կուելու քո ապագայ զաւակների գէմ:

— Է՛, Վարդ, ի՞նչ բան ես ասում, ինչ զաւակ, ամօթ չէ:

— Ձէ, չէ, ամօթ չէ, հօ կուսանոց չես մտնելու, վաղ թէ ուշ զաւակ ես ունենալու, էլ ինչո՞ւ մեղ կեղծենք: Հա, դու լաւ մտածիր այդ կուլի մասին և աշխատիր նորերին միանալ, թէ չէ բանդ վատ կըլինի: Ուսուցչուհի լինելուդ մասին մտածիր: Ես գնում եմ, կարող ես մամային յայտնել պաշտօնիս մասին:

Նա դուրս եկաւ: Անահիտը մատծում էր նրա խօսքերի մասին. նրան թւում էր, որ գուցէ դրանք ճշմարիտ են, բայց ինքը չի կարող հաշտուել այդ անաստեղծութեան հետ:

Հետեւեալ առաւօտեան, թէյից անմիջապէս յետոյ Վարդը սև սիւրտուկ հագաւ, սպիտակ փողկապ կապեց ու դուրս եկաւ տանից: Ամբողջ ամառայ ընթացքում նա առաջին անգամն էր այդպէս հագնուում: Նա շատ դուր եկաւ Անահիտին, որ պատշգամբից նայում էր նրա յետևից մինչև նրա փողոց դուրս գալը:

— Ո՞ւր գնաց եղբայրդ,— հարցրեց մայրը Անահիտին, երբ սա ներս եկաւ:

Անահիտը գիտէր, որ մայրն անտարբերութեամբ չէր լսելու Վարդի ուսուցչութեան լուրը, ուստի նա դեռ չէր յայտնել այդ բանը նրան: Մօր հարցից յետոյ նա լռեց աւելորդ համարեց: Միևնոյն է, վաղ թէ ուշ իմանալու է, մտածեց նա և ասաց:

— Մամա, Վարդը քաղաքի ծխական դպրոցների տեսուչ է հրաւիրել. նա գնաց իր համաձայնութիւնը յայտնելու և խորհրդակցութիւն ունենալու հոգաբարձութեան հետ:

— Ա՛յդ էր պակաս,— ներքին զայրոյթով պատասխանեց տիկին Վարվառէն,— այդ էր պակաս, վարժապետ, այն էլ հայ վարժապետ. դուրս եկ դերեզմանիցդ Գալուստ Ստեպանիչ, դուրս եկ, Վարդդ հայ վարժապետ է, աչքդ լոյս, փառաւորեց քու անունը, արդարացրեց յոյսերդ: Գիտես ինչ, Անիւտա, — հրերաց տիկնոջ ձայնը, — հանգուցեալ հայրդ մեռնելիս ինձ ասաց, Վարվառէ, ուշ

դարձրու Վարդի վրայ, մուրացկան եղիր, նրան ուսում տուր, որ նա լաւ մարդ դառնայ, մեծ մարդ դառնայ, մեծ պաշտօն համար պատրաստիր: Ես արեցի, ինչ որ կարող էի. նեղ ու սև օրեր քաշեցի, պարտքի տակ մտայ, նրան ուսում տւի, իսկ նա վարժապետ դուրս եկաւ, սոված վարժապետ... Նա դաւաճանեց հօր կամքին, նա փոշ զաւակ է, աննամուս է... Այժմ պիտի սպիտակ վարսերով նորից սպասեմ, յոյսս Լեոնի վրայ դնեմ, որ գոնէ նա պահպանի մեր տան պատիւը, Քաջադնունիների մեծ անունը...

Տիկին Վարվառէն չէր հանգստանում, ներսից փոթոթում էր, նա ձեռքերն էր տրորում: Նա յիշում էր անցեալը, իր նեղ օրերը ու զղջում էր. նա պատրաստ էր այդ բոլորին նոյնիսկ անիծել Վարդին, բայց դարձեալ զսպում էր իրան: Անահիտը չէր իմանում, ինչ ասի, ինչպէս հանգստացի մօրը: Եթէ եղբորը պաշտպանէր, կրկնապատկելու էր, մօր տանջանքները, մօրը պաշտպանէր, զգում էր, որ ինքն եղբորը քննադատելու զօրութիւն չունի:

— Գնա, գնա, նորից սպասի, նորից աշխատիր, հին շորեր հագի, մոռացիր դրսի աշխարհը, մինչև Լեոնը մեծանայ, գուցէ նա հօր տեղը բռնի, թէ չէ Վարդը մեղ ուրացաւ, ամակաշխատանքս ջուրն ընկաւ: Դեռ շատ տարիներ աղջիկ կըմնաս, գնա,

ինձ մենակ թող,—շարունակում էր տիկին Վարվառէն:

Անահիտն առանց խօսելու դուրս եկաւ: Մայրը երկար ժամանակ չէր հանգստանում, նոյնիսկ հեկեկում էր: Ամբողջ օրը սենեակում փակւեց:

Մինչև ճաշ Անահիտը մի սենեակից միւսն էր գնում, պարտէզն էր իջնում, բայց էլի մի որոշ բանի վրայ կանգ առնել չէր կարողանում: Նրա մտքով հազար ու մի տեսակ բաներ էին անցնում: Մտածում էր եղբոր վարմունքի, մօր դրութեան մասին, մտածում էր հների ու նորերի այդ կուր մասին: Նրան թւում էր, որ եղբայրը ճշմարտախօս է, բայց անխիղճ է, սիրտ չունի: Չի կարելի հարազատ մօրը այդ դրութեան մէջ ձգել, կան անձինք, որոնց համար պիտի զոհել ամենաթանգ գործերն անգամ: Մէկ էլ նրա մտքում պատկերանում էր այն տեսարանը, երբ Վարդը սրտի խորին զգացումով խօսում էր թշուառների, հալածւածների մասին, խօսում էր ոգևորւած, վարագիչ ներշնչումներով: Մտածում էր այս բոլորի մասին, և նրան թւում էր, որ Վարդին դժւար է մեղադրել, որ նա մեծ զոհողութիւն է անում: Անշուշտ նա սիրում է մօրը: Ամեն անգամ նրա կամքը մերժելիս կսկծում է նրա սիրտը: Այդ երևում է նրա դէմքից: Անպատասխան թողնելով մայրական սրտին, անհամար

դժբախտների կոչին է արձագանք տալի,
ընդհանուրի համար է աշխատում: Սակայն
չէ որ մօրն էլ չի մոռանում, աշխատածի
մեծ մասը մօրն է տալիս: Այս մտքերից
նա անցնում էր իր անձնական դրութեանը,
խորհում էր իր վիճակի մասին, և նրա
աչքերի առաջ պատկերանում էր Արշակ
Բահաթրեանը: Նա մի ներքին, քնքոյշ
զգացում էր ունենում:

Ճաշը մօտ էր, երբ Վարդն եկաւ: Նա
բաւական ուրախ տրամադրութեան մէջ էր:
Անահիտը նոր միայն յիշեց, որ ճաշի մա-
սին պատրաստութիւններ չի տեսել, վա-
զեց, մի քանի կարգադրութիւններ արեց
Մնօին և եկաւ եղբօր մօտ:

— Ինչպէ՞ս եղաւ գործդ, — հարցրեց նա:

— Շատ լաւ, հոգաբարձութիւնը երի-
տասարդ մարդկանցից է կաղմաւած, ընհա-
նրապէս ապաւորութիւններս լաւ են, նը-
րանք ոգևորած են կրթական գործով:

— Ուսուցիչներ հրաւիրեցիք:

— Հարիւրի չափ խնդիրներ կային, ըն-
տրեցինք տասնութ հոգի:

— Բոլորը պարոններ:

— Ոչ, նաև տիկիներ ու օրիորդներ:
Օրիորդ նազեանը ընտրեցաւ ինձ օգնա-
կան օրիորդաց ղալրոցում: Տասը հոգի
տղամարդ են, ի միջի այլոց պ. Արշակ
Բահաթրեանը:

Անահիտն զգաց, որ կրծքի տակ սիրտն

սկսեց արագացնել զարկերը: Վարդը նկա-
տեց նրա երեսի կարմրութիւնը:

— Սակայն, սիրելի Վարդ, այդ բոլորը
լաւ, բայց մաման լսել անգամ չի ուզում
այդ մասին: Լաւ կըլինի, որ գնանք միա-
սին նրա մօտ, դու նրան մի քիչ մխիթարի,
հանգստացրու:

— Ես նրան երբէք ցաւեցնել չեմ կա-
մենում, ընդհակառակը, նրա տխրութիւնը
ինձ տանջում է, բայց ես հօ չեմ կարող
նրա խելքով գործել ու ապրել:

— Սակայն գնանք, թախանձում եմ,
Վարդ:

— Լաւ գնանք, բայց չըմոռանաս ասել
մամային, որ իմ ռոճիկը լրագրի փողի հետ
միասին մօտ 2000 բուբլի է, որի մեծ մասը
իրան եմ տալու: Ուզում է թող ամբողջը
վերցնի, միայն թէ ինձ չըխանդարի:

Քոյր ու եղբայր մտան մօր սենեակը:
Մայրը աշխատում էր անտարբեր ձևանալ:
Վարդի նոր հագուստը բաւական յարմար
էր, այդ չըվրիպեց մօր աչքերից: Նա նա-
յում էր նրան լի մայրական կորովով:

— Մամա, միթէ Վարդը ուսուցչի շորե-
րով գեղեցիկ չի, ընհակառակը, այդպէս ինձ
աւելի է դուր գալի: Բացի այդ, մամա,
Վարդն ստանում է 2000 բուբլի և մեծ
մասը քեզ է տալու, էլ ի՞նչ ես ուզում:

Վարդը մեղմ ժպտում էր քրոջ խօսքերի

վրայ: Բայց մայրը գլուխը շարժում էր դժկամակութեամբ:

— Ես ինձ համար չէ, որ ցաւում եմ, այլ իր համար, բայց որ ինքը այդպէս է կամենում, Աստուած իր հետ, միայն թէ սրտովը չի, իսկ հանգուցեալ հօր կտմբին բացարձակ հակառակ է: Նոր հաւեր են դուրս եկել, երկաթէ ձւեր են ածում, մենք հին ենք, հիւ է մեր երեսին նայում:

— Մամա, սիրելի մամա, ինչո՞ւ ես խանգարում իմ ազատութիւնը, ինչքան փող աշխատեմ, քեզ կըտամ, մամա. միայն մի բարկանայ, մի տանջիր ինձ էլ, քեզ էլ—ասաց Վարդը յուզւած ու քիչ շփոթւած:

— Աղաչում եմ, մամա, մի զայրանայ, ներիր նրան, օրհնիր, չէ՞ որ նա քու սրդին է, այն Վարդն է, որին տշխարհի հետ չէիր փոխի:

— Հիմա էլ չեմ փողի, ծնողը որդու վատը չի ուղի,— պատասխանեց տիկին Վարվառէն Անահտին:

— Ես պատրաստ եմ քու բոլոր ցանկութիւնները կատարել, միայն դու Վարդին մի խանգարի ապրել այնպէս, որպէս ինքն է կամենում. հաւատա, մամա, նա վատ գործեր չի կատարի. չէ որ դու նրան սիրում ես, էլ հիւ կայ մեզ համար աշխարհքի երեսին, Լեոնը դեռ փոքր է, մի Վարդ ունենք, ինչու տանջենք նրան, որին սիրում ենք...—ասում էր Անահտիտը:

Վարդը մնացել էր դարմացած քրոջ խօսքերի վրայ:

— Մայրը բոլոր որդիներին էլ սիրում է, լաւին էլ, անառակին էլ. այդպէս է մօր սիրտը, ինձ լսի էլ, պիտի սիրեմ, չըլսի էլ, բայց իմացիր, որ իմ նպատակս փորումս մնաց... գոնէ պարտքերը տուր, պարտքերը... Այդ յէկն ամպատճառ պահանջում եմ:

Նա չըկարողացաւ վերջացնել: Անահտիտը ևս յուզւած էր: Վարդն էլ չըկարողացաւ անդարբեր մնալ, թուլութեան չենթարկւելու համար դուրս եկաւ: Անահտիտը հետեւեց նրան: Դեռ միջանցքումն էին, որ Մնօն ասաց՝ կերակուրը պատրաս է:

Անցել էր ձմեռը, և սկսւել էին ապրիլեան կարմիր օրերը: Սարերի ձեան գօտիները աստիճան առ աստիճան բարձրանում էին դէպի վեր, կանաչը պատում էր երկրի երեսը. ժայռերի ծերպերում, արևերես տեղերում ցնձում էին մանուշակի կապագոյն փնջիկները:

Ձմեռւայ ընթացքում Քաջագնունիների ընտանիքում մի քանի աչքի ընկնող դէպքեր էին կատարւել: Անահիտը յաջողութեամբ ուսուցչութեան քննութիւն էր տւել և պատրաստւում էր յաջորդ ուսումնական տարւում ուսուցչուհի լինել ծխական դպրոցներից մէկում: Նրա և Արշակ Բահաթրեանի յարաբերութիւնը յանգել էր փոխադարձ համակրանքի ու սիրոյ: Նրանք պատրաստ էին ամուսնանալ, միայն քաշւում էին տիկին Վարվառէից, նրա դրական պատասխանն ստանալու յոյս չունէին: Վարդ Քաջագնունին իր պաշտօնավարութեան ընթացքում բացի համերաշխ գործունէութիւնից ցոյց էր տւել ուրիշ դրական քայլեր ևս: Բացի մանկավարժական գործերից, որից ինքն այժման էլ գոհ չէր, նա մասնակցութիւն էր ունեցել և մի շարք հասարակական հարցերում: Նա հոգեկան աւելի մեծ

բաւականութիւն էր ստանում հասարակական գործերի մասնակցութեան մէջ, ժողովների ու աղմուկների, քան դպրոցական միապաղաղ կեանքում: Ամենից շատ նա իր վրայ էր դարձրել ժողովրդի ուշադրութիւնն իր գրած մի քանի լուրջ յօււածներով, որոնք լոյս տեսան ողջական թերթերում: Այդ յօււածներով նա քննադատութեան էր ենթարկել քաղաքի հասարակական կեանքը, տնտեսական դրութիւնը. յարձակման էին արժանացել քաղաքային վարչութեան ու այլ հաստատութիւնների պաշտօնեաները: Բնականաբար այդպիսի ուղղութիւնը պիտի առաջացնէր յարգողներ, մանաւանդ հակառակորդներ: Քիչ-քիչ նրա դէմ հասունանում էր մի լուռ դժգոհութիւն քաղաքի հասարակութեան մէջ, մանաւանդ բարձր շրջաններում: Վարդն առանձին ուշադրութիւն չէր դարձնում նրանց վրայ, և կծու քննադատութիւններն ու պատասխան — նամակները շարունակւում էին: Բանակրօրէն անցել էր հայկական լրագիրներէ էջերը: Երիտասարդների, յատկապէս ուսուցիչների շրջանում, ընդհակառակը, աստիճան առ աստիճան բարցրանում էր համակրութեան տրամադրութիւնը:

Ժողովրդի մէջ զանազան տեսակի լուրեր էին պտտում և բազմապիսի երանգներով տիկին Վարվառէի ականջին հասնում: Վարդի վերաբերմամբ նա բոլորովին յուսա-

հատել էր, նրան ուղղելը անկարելի էր համարում, ուստի ներսից այրում էր, մաշում: Ամեն յարմար բոպէի ակնարկներով ու սուր խօսքերով յիշեցնում էր ու դառնութիւն պատճառում Վարդին, որը սակայն գործնական նշանակութիւն չէր տալիս մօր ցանկութիւններին և ամեն ամիս ռոճիկի մէծ մասը տալիս էր մօրը: Տիկին Վարվառէի միակ մխիթարութիւնը այն անդորրազրերն էին, որ նա ստանում էր պարտատիրոջից հատուցած փողերի փոխարէն: Վարդը երբեմն ուզում էր հանգըստանալ, գոնէ մի քանի ժամով, սակայն իրանց տանը հանգստութիւն գտնել չէր կարողանում: Նրա առաջ ցցւած էր մօր յանդիմանական հայեացքը, որ կարծես վարագել էր սենեակներն անգամ, սենեակում մենակ եղած ժամանակն էլ յանդիմանութիւն էր զգում: Երբեմն նրան այդ դրութիւնից հանում էր Անահտի հարցասէր հետաքրքրութիւնը, բայց Անահտին էլ զբաղւում էր կամ գրքերով, կամ ապագայի մտորումներով: Վարդն սկսել էր ուրիշ յարկի տակ որոնել իր հանգստութիւնը: Օրիորդ Վիկտորիայի մօտ էր լինում նա երբեմն: Քանի գնում էր, նրաց յարաբերութիւնը աւելի մտերմանում էր, Վարդը աւելի ու աւելի էր գրաււում այդ աղջկանով: Ամեն անգամ, երբ նա յոգնած վերադառնում էր դպրոցից նրա հետ, կամ պատա-

հում էր նրան փողոցում, նայում էր նրա բաց-կապոյտ աչքերին, սիրտը լցւում էր քնքոյ՜ զգացումներով, և այդ զգացմունքները թաղւում էին օրիորդի ծովի պէս խոր աչքերում: Այդպիսի բոպէներում Վարդն իրան երջանիկ էր զգում: Սակայն նա իր զգացմունքների մասին օրիորդին դեռ ոչ մի խօսք չէր ասել:

Ծաղկազարդ շաբաթ օրը, դպրոցն արձակելուց յետոյ՝ նա քնաց օրիորդ Վիկտորիայի մօտ: Տունը գտնւում էր քաղաքի կենտրոնում և մի համեստ շէնք էր: Բակից անցնելիս՝ Վարդի աչքովն ընկան լւացւած շուրերով բռնաւորւած երկար պարաններ: Փոքրիկ պատշգամբուհն էր նա և պատրաստւում էր դուռը ծեծել, երբ շտապով դուրս եկաւ մի աղջիկ և ամօթխած շարժւածքով ցած իջաւ: Նա հագնւած էր շատ հին, բայց մաքուր: Օրիորդ Վիկտորիան Վարդին սիրալիր ընդունեց:

— Ծատ ուրախ եմ, որ դուք եկաք. մայրիկս միշտ յիշում է ձեզ և դժգոհ է, որ յաճախ չէք լինում մեզ մօտ:

— Ծնորհակալ եմ: Դուրս եկողն հի էր:

— Տան տիրոջ աղջիկը, մի համեստ արարած, ընդունակ, բայց աղքատ, լւացք անողի աղջիկ: Նա ինձ մօտ սովորում է, եկել էր իմանալու, ոչ ոք պարապելի՞ւ եմ, թէ չէ:

— Ես ձեզ մօտ կարճ ժամանակով եմ

եկել: Երկու ժամից յետոյ քաղաքից գր-
նալու եմ. ուզում եմ իմանալ, տօնե-
րին այստեղ էք ֆնալու, թէ չէ. մի քա-
նի գործեր կան դպրոցում, ես բացա-
կայում եմ, ուստի կուզէի, որ բարի լինէր
ու կատարէք: Հեշտ բան է, գրութիւններ,
ուրիշ ոչինչ:

— Շնորհակալ եմ վստահութեան համար,
սակայն մի քիչ նստէք, խօսենք:

Վարդի սիրտը բաբախում էր. նա ուզում
էր նստել, խօսել, բայց չէր իմանում, ինչ
ասի, ինչից սկսի: Նա իրան վատ էր զգում,
որ ինքն այդպէս կապւում էր, անորոշ գրու-
թեան մէջ ընկնում օրիորդի առաջ: Կարծես
այդ զգում էր և Վիկտորեան: Վարդը, որ
շփոթութիւն ու անորոշութիւն չըգիտէր
ոչ պաշտօնական նիստում, ոչ հանդի-
սաւոր ժամերին, ոչ սկզբունքային վիճա-
բանութեան մէջ, որ ամենքի առաջ սառն էր
ու կտրուկ, այո, այդ Վարդը իր առաջ
շփոթւում էր, խուսափում էր իր աչքերին
ուղիղ նայելուց: Որպէսզի ժամանակ տալ
նրան մի քիչ կանոնաւորելու ներքին զգա-
ցունները, Վիկտորիան դուրս գնաց սենեա-
կից սրտի խորին բաւականութեամբ: Նա
զգում էր, որ այդ լաւ է, և որ ինքն էլ
նրա աչքերին նայելիս սառը լինել չի կա-
րողանում, որ իր մէջ էլ մի բան է
սկզբնաւորւում:

Վարդը նոր էր նստել ու նիւթ էր փըն-

արում խօսակցութեան համար, աշխատում
էր լուրջ կերպարանք ընդունել, երբ մտաւ
օրիորդը:

— Գիտէ՞ք ինչ, պ. Վարդ, — սկսեց նա, —
հիմա ինձ մօտ մի քանի ուսուցիչներ, ու-
սանողներ և ուրիշ երիգասարգներ կըգան,
որպէսզի խորհրդակցենք՝ տօներին որեւէ
գործ անելու համար: Ձեզ էլ պիտի կան-
չէինք. առանց հրաւերի էլ դուք եկաք,
սակայն ուզում էք գնալ:

— Մի քանի ժամով կարող եմ յետաձգել
գնալ:

Այդ միջոցին երկու պարոն պատշգամբ
բարձրացան և դուռը ծեծեցին: Օրիորդը
դուրս եկաւ: Ներս մտան մի ուսուցիչ և
մի ուսանող:

— Ա՛, բարե պարոն Վարդանեան, — ասաց
Վարդը:

— Դ՛հա էլ էք այստեղ, — հարցրեց Վար-
դանեանը, — ծանօթացէք, ուսանող Բաղրա-
մեան, նոր վերագործած, իսկ սա, պարոն
Վարդ Քաջազնունի:

Երկու անծանօթները միմեանց ձեռք բռնեցին: Ուսանող Արամ Բաղրեանը, միջահա-
սակ արծաթեթմբ մի երիգասարգ, «Քաջազնու-
նի» բառը լսելիս ուշադրութեամբ Վարդին
նայեց:

— Ինչո՞ւ զարմացար, — վրայ բերեց Նորայր
Վարդանեանը, — չէիր երեւակայում, որ քա-

ղաքի այսօրւայ խօսակցութիւնների առարկային այստեղ կը տեսնես:

— Ինչո՞ւ չես ասում, հերոսին, — պատասխանեց ուսանողը:

— Ես կարծում եմ, երիտասարդ, — մէջընկաւ Վարդը, — խօսքերը տեղին գործածելը լաւ է: Կողմնայի իմանալ, ինչո՞ւ եմ խօսակցութեան առարկայ լինելու առիթ տւել:

Ուսանողը զարմացած՝ ծանօթութեան առաջին ժամին ասաց այդպիսի պատասխանի վրայ, նայում էր նրան: Վարդանեանը պատասխանեց.

— «Եկեղեցին և ժողովուրդը» յօդածդ տպւած է արդէն: Հաւատացեալ բանակը, քահանաները, առաջնորդը յուզւած են: Քիչ գուցէ սպասում է ամբոխի յարձակում:

— Ոչինչ, թող յուզեն: Առաջին քարը կատաղեցնում է շների խմբին ևս, բայց երբ քարերը շատանում են, նրանք իրանց հռահրը պակսեցնում են. իսկ ժողովրդական կուրութիւնը թող հարւածի, մի օր կը զղջայ:

Այդ միջոցին հկան և ուրիշ մարդիկ: Ծանօթացնելու դերը նորայրն էր վերցրել: Նա դեռ պատանեկութիւնից երիգասարդութեան փոխուող մի ուսուցիչ էր, լայն կզակով, չաղլիկ հրեսով, ամբողջ անմօրուք. երբ աչքերը ծոմաւում էր ու կօմիկութիւն անում, նրանք ստանում էին բոված սուրճի նմանութիւն: Վիկտորեան ներս ու դուրս էր անում: Դրա

արդիւնքն հղաւ սուրճի գաւաթներով լեցուն մատուցարանի ներս բերելը: Եկաւ և օրիորդի մայրը, մի նիհար, ծեր կին: Բոլորին էլ օրհնեց, նստեց սեղանի վերին ծայրին ու սուրճ համեցէք արեց:

— Ես իբրեւ գործնական մարդ, խնդրում եմ, նախ խմելուն անցնէք. ամենամեծ խընդիրը ստամոքսի հարցն է, ամենահրաշալի պրօցեսը մարսողութիւնը, — ասաց Նորայրը:

Բոլորը ծիծաղեցին ու բաժակներն առաջ քաշեցին: Երբ խմեցին ու բաժակները տաւրան, օրիորդի մայրը նորից օրհնեց նրանց ու գնաց:

— Տղերք ջան, գործնական եղէք, — դարձեալ ասաց Նորայրը:

Իւրաքանչիւրը բռնեց մի տեղ, և սկսեց ընդհանուր խօսակցութիւն: Առանձին ձեականութիւն չըկար: Ամեն ոք խօսում էր ցանկացած բովէին, այդ պատճառով էլ երբեմն իրար էին խառնւում: Երբ Վարդն ըսկսում էր խօսել, առաջանում էր ընդհանուր հետաքրքրութիւն, որին հետևում էր լուսթիւն: Որոշեցին տօների ընթացքում մի ներկայացում տալ և մի քանի դասախօսութիւններ կարդալ: Քաջադնունին խոստանալով երկու դասախօսութիւն կարդալ վերջին օրերում, դուրս գնաց՝ ցտեսութիւն ասելով: Վիկտորիան դուրս եկաւ պատշգամբ և բաւականութեան ու թախծի մի զգացումով նայում էր նրա յետևից: Երբ նա ներս մը-

տաւ, հետեւեալ խօսակցութիւնն էր լինում:

— Լուրջ մարդ է երևում,—ասաց ուսանողներին մէկը:

— Բացառիկ անձն է,—պատասխանեց մի ուսուցիչ:

— Դա այդպէս է,—մէջ ընկաւ Նորայրը, —մէկի մէջ յարգանք ու զարմանք է ծնեցնում, մի ուրիշի մէջ առեւտրութիւն. մէկը պաշտում է նրան, միւսը քարկոծում, մէկը գաղափարական է անւանում, մի ուրիշը եղբիդ. մենք նրան ամենախելօք մարդն ենք ճանաչում, կան այնպիսիները, որոնք վերջին խելագարի տեղ են գնում. եթէ դրա վրայ աւելացնեմ, որ օրիորդները հալ ու մաշ են լինում նրա համար, տիկիներն աւնիծում նրան, աւելի հասկանալի կըլինի, թէ ինչ է դա:

Օրիորդ Վիկտորիան, գուցէ ընդունելով որ ակնարկն իրեն է ուղղւած, կարմրեց: Ոչ ոքի աչքից չը վրիպեց, որ նրա երկնագոյն աչքերը այլուում էին ներքին բոցից:

Վարդ Գաջազունին ոտքով գնում էր կայարան: Նա որոշել էր ամբողջ ճանապարհորդութիւնը, երկաթուղի եղած տեղերից բացի, ոտքով կատարել: Բազմաթիւ մարդիկ երթեկում էին ոտքով, կառքերով ու ձիաքարշով: Նա գնում էր բաւական շտապ և առանց ուշադրութիւն դարձնելու պատահողների վրայ, որոնք երբեմն բարձրացնում էին իրանց գլուխները, մի հայեացք ուղղում շտապող պարոնի վրայ և էլի իրանց ճանապարհը շարունակում:

Երբ Վարդը կայարան հասաւ, արդէն առաջին զանգը խփել էին: Նա շտապով երրորդ կարգի տոմսակ գնեց, անցնելով երրորդ կարգի դահլիճով դուրս եկաւ մայթի վրայ, ուր անթիւ մարդիկ խառն ի խուռն ման էին գալիս: Կանայք գարնանային թեթեւ շրջագգեսաներով, նորաձեւ լայնեզր գլխարկներով խայտարդէտ գոյն էին շնորհում ամբողջին: Մի քահանայ, ոսկէ լանջախաչով, կարմիր թաւշեայ կամիլաւկայով, զրօնում էր մայթի վրայ ճաշակով հագնւած, բաւական գեղ մի պարոնի հետ: Սրանք, երբ տեսան Վարդին, արհամարական եղանակով ժպտացին ու նկատեցին իրար հրել:

— Լաւ հայիր, լաւ, սա է այն ասպետը, —ասում էր քահանան—«Պիտի այնպիսի

սերունդ պատրաստենք, որ կուռքերը խորտակեն», — ծաղրական տոնով ասում էր գեր պարոնը:

— «Ճամբայ տւէք, ժողովուրդը գալիս է», — վրայ բերեց քահանան, և երկուսն էլ իրար ուսի խփելով քահ-քահ ծիծաղեցին: Այդ կտորները, որ նրանք արտասանեցին հեգնանքով ու ծաղրով, քաղել էին Վարդի մի ճառից, որ նա արտասանել էր թեմական ժողովում:

Մինչ այդ խփեց երկրորդ զանգը, ուղևորները շտապեցին գնացքում տեղ բռնել: Վարդը մտաւ երրորդ կարգի մի վագոն: Քահանան ու գեր պարոնը, որ շտապում էին դէպի առաջին կարգը, նորից ծիծաղեցին:

— Խելագար, — ասաց քահանան՝ ուղղելով խաչը:

— Դոնքիշոտ, Լամանշի ասպետ, — աւելացրեց պարոնը, և երկուսն էլ ներս մտան:

Երբ Վարդը վագոն մտաւ, տեղերը, համարեա, բռնւած էին, սակայն ճամբորդներն էլի ներս էին թափւում: Դրանք, համարեա, բոլորը գիւղացիներ էին, բանւորներ, որոնք շտապում էին տուն՝ Յարութեան տօնը իրանց ընտանիքի հետ կատարելու: Շատերը փոքրիկ կապոցներով բաներ ունէին, գուցէ նւէրներ իրանց կանանց ու երեխաների համար: Սկզբում ոչ ոք առանձին ուշադրութիւն չը դարձրեց Վարդի վրայ, իւրա-

քանչիւրն իր ու իր կապոցի համար էր տեղ որոնում: Վարդը, բռնած փոքրիկ սակա-յեաժը կանգնեց լուսամտի առաջ և դուրս էր նայում: Հնչեց երրորդ զանգը, և գնացքը շարժեց: Երբ ամեն ինչ հանդարտեց, ամեն մէկը տեղ գտաւ, նոր միայն գիւղացիներն ուշք դարձրին կանգնած Վարդի վրայ: Մի երիտաւարդ գիւղացի առաջարկեց Վարդին, տեղ բռնել իր մօտ: Վարդը շնորհակալութիւն յայտնեց և սակայեաժը դրեց ցոյց տւած տեղը, իսկ ինքը շարունակեց նայել կանաչ արտերին, որոնք ցնձին էին տալիս ապրիլի տաք արևի ճառագայթների տակ: Ճանապարհից քիչ հեռու արծաթագոյն փայլով ու նազանքով ոլորւում էր մի գետ, հանդարտ ու կամաց լաշալով: Մի պատանի մերկ նստած գոմշի ուսերին՝ ջուրն էր մըտնում: Գնացքն անցաւ, մի սուր գագաթ գըծագրեց հեռում եղած շղթայի մէջ: Ձիւնը դեռ պառած էր լեռան գագաթը...

— Տոմս ցոյց տւէք, — հնչեց հակիչի սուր ձայնը: Վարդը հեռացաւ պատուհանից և իր տոմսը ցոյց տւեց: Երիտասարդ գիւղացին նորից կրկնեց իր առաջարկը: Վարդը նստեց: Փայտէ նստարանների վրայ թափթըփւած էին ճամբորդները, որը փոքր վրայ էր փռւել, որը մէջքի վրայ, ոտերը ցցած պատի ուղղութեամբ. ոմանք իրար վրայ էին յենւած, մէկի մէջքն էր միւսին բարձի տեղ

ծառայում, միւսի ոտքերը՝ երրորդին: Մի քանիսը՝ իրար գլխի հաւաքեած, զւարճախօսում էին: Մի թուրք ընկերոջ թևին թիկնած՝ երգում էր մի թուրքական սիրային երգ: Նրա ձայնը, բարձր ու մեղմադձիկ, տարածւում էր վազոնում ու խեղդւում թանձր օդի մէջ:

— Որտեղի՞ց ես գալիս, — հարցրեց երիտասարդ գիւղացին, մի յաղթանդամ, լայնթիկունք մարդ:

— Մօտակայ քաղաքից, — պատասխանեց Վարդը:

— Ո՞ւր եո գնում:

— Գիւղերը:

— Գիւղացի՞ ես:

— Ոչ:

Երիգասարդը մի քանի րոպէ լռեց: Նա մտածում էր, թէ ո՞ւր է գնում այս մարդը, որ գիւղացի չէ: Զատկին ամենն իր տունն է գնում, սա գիւղը:

— Աղա, մեծաւոր չես երևում, չին չունիս, կըլինի, որ վաճառական ես, տալացուկները հաւաքելու ես գնում:

— Ճիշտն ասացիր, մեծաւոր չեմ, բայց ոչ աղա եմ, ոչ վաճառական:

— Հարցնի՛լն ամօթ չըլինի, ի՞նչ գործի ես քաղաքում:

— Ուսուցիչ եմ:

— Վարժապետ ես, ապա ինչո՞ւ ես գիւղերը գնում:

— Գնում եմ, տեսնեմ, ինչպիսի ապրուստ ունին գիւղացիք:

— Քո գնալուց մի օգուտ ունին գիւղացիք, — մէջ ընկաւ միւս հարեանը:

— Ի՞նչ օգուտ պիտի ունենան: Գնում եմ մի լաւ ծանօթանամ նրանց նիստ ու կացի հետ, ուզում եմ իմանալ, ինչպէս են ապրում մեր գիւղացի եղբայրները:

— Գիւղացու և քաղաքացու մէջ ինչ եղբայրութիւն կարող է լինել. ահա երեք տարի է Բագուսն եմ, ես քաղաքացիներից ոչ մի եղբայրութիւն չըտեսայ, — ասաց երիտասարդ գիւղացին, — էլի մենք՝ բանւորներս ու գիւղից եկած մարդիկս ենք իրար պէտք գալի:

— Թէ մի օգուտ ունի քո գնալը գիւղացուցոյ համար, գնա, թէ չէ դատարկ գնալու ես գալու, զուր նեղութիւն մի քաշի, նրանց հալը մի հալ չի, քու սիրտն էլ կըկոտրւի, — ասաց միւս գիւղացին:

Հարեան նստարանների վրայի գիւղացիները լսելով, որ գիւղացիների մասին է խօսքը, մօտեցան նրանց: Սկզբում նրանք չէին վստահանում խառնել խօսակցութեանը: Նրանք զարմանում էին Վարդի վրայ. նրա պարզութիւնը, ընկերական վերաբերմունքը լաւ ազդեցութիւն էին անում նրանց վրայ: Երբ իմանում էին, որ նա գիւղ է գնում ոչ թէ պարտքեր հաւաքելու, կամ հարկեր ժողովելու, այլ վարժապետ է, մի-

այն տեսնելու է գնում, սիրտ էին անում
և խօսակցութեանը մասնակցում: Երկար
ժամանակ խօսում էին: Վարդն առանց ձան-
ձրանալու պատասխանում էր իւրաքանչիւ-
րին, բացատրում էր ամենին այս կամ այն
խնդիրը: Երկու թուրք, ոտերնին քարշ արած,
հետաքրքրութեամբ լսում էին նստարանի
վրայից, առանց խմբին մօտենալու: Վագոնի
հսկիչը, որ վրացի էր, բռնել էր գուռը և
էլի լսում էր հալ գիւղացիների և անձանթ
աղայի վիճաբանութիւնը:

Երբ հիւրերը գնացին, օրիորդ Վիկտորիան նստեց սեղանի մօտ, գլուխը ձեռքերի մէջ տեղաւորելով, երեսը մօտեցրեց սեղանին ու ընկաւ մի հոգեկան անորոշ դրութեան մէջ: Չէր իմանում, ինչ է կատարւում իր ներսը, որ ալեկոծւած էր խուռն զգացումներով: Նա, կարծես, ուզում էր հաշիւ տալ իրան: Ո՞վ է այս Բաջազնունին, որ հանդիպեց իրան և նրա կեանքի մէջ յեղաշըրջում մտցրեց: Մի երիտասարդ, անսպահով ապրուստով, առանց յուսալի ապագայի, մի անանկացած այրու որդի: Ի՞նչ են պատմում նրա մօր ու նրա յարաբերութեան մասին: Ինչո՞ւ է ապա վրդովւել իր կեանքը, ինչո՞ւ գիշերները անկողնում երկար նրա մասին է մտածում, ինչո՞ւ երբ նրա դէմքը պատկերանում է իր մտքում, սիրտը սկսում է թրթռալ, արիւնը արագացնում է իր հոսանքը, և ինքը մի հերքին քաղցր բաւակահութիւն է զգում: Հայ ու օտարազգի բազմաթիւ երիտասարդների հետ ինքը ծանօթութիւն ունի, նրանցից շատերը յայտնի դիրքի, կարողութեան տէր են, մեծամեծ պաշտօնների ակնկալութիւն ունին, ինչո՞ւ, անպատճառ այս Բաջազնունին պիտի գրաւի իրեն: Այս հարցերին օրիորդ Վիկտորիան պատասխանել չէր կարողանում, միայն ըզգում էր, որ Վարդ քաջագնունին մի ինչորդ գրաւիչ, ինչ որ բարձր, ուրիշներին հպա-

տակեցնող արարած է, մի վեհանձն, մի հը-
պարտ անձնաւորութիւն: Արդեօք այդ ան-
մատչելի հոգին կիջնի իր բարձրութիւնից,
իր ծրագրների, իդէալների աշխարհից, մի
աղջկայ, նոյնիսկ ամբողջ կեանքով իրան
նւիրւած աղջկայ փարւելու, բաւականութիւն
տալու համար: Վիկտորիային թւում էր, որ
Վարդն էլ իրան տեսնելիս մի տեսակ ան-
սովոր դրութեան մէջ է ընկնում, կարծես
շփոթւում է, և նրա մէջ յուսոյ նշոյլներ էիդ
ծնւում: Մէկ էլ Վիկտորիան կարծում էր,
որ Վարդը կարհամարի իրան, կըխզդի
իր միջի զգացումները, կըյաղթէ կեան-
քի պահանջին յանուն իր գաղտնի, իդէա-
լական գործերի, որոնցով զբաղւած է նրա
միտքը մշտապէս: Պատմում են, որ նա ար-
համարհում է մայրական սէրը, հասարակա-
կան կարծիքը, միթէ չի՞ կարող արհամար-
հել օտար աղջկայ սէրը: Մտածում էր Վիկ-
տորիան և վերջնական լուծում գտնել չէր
կարողանում. բայց մի յուզում քիչ-քիչ իշ-
խում էր նրա էութեանը: Արդէն արեւը մը-
տել էր, ու բարակ քամին բայ պատուհանից
ներս էր մտել և խշխշացնում էր սեղանի
վրայ թափւած գրքերը, ցաք ու ցրիւ ա-
նում նրա քանդւած մազերը: Քանի գնում,
քամին ուժեղանում էր: Վիկտորիան սեղանի
վրայից վերցրել էր Քաջապնունու այցետուսը
և ամուր սեղմել էր կրծքին: Մի տաք ջերմ
բռնել էր նրա մարմինը, նա դողում էր յու-

զումից, իսկ քամին շականակագոյն մազերի
հիւսը բոլորովին քանդել էր ու մազերը փը-
ռել մէջքի ու երեսի վրայ...

«Վիկտորիա», լսեց մօր ձայնը միւս սեն-
եակից, և օրիորդը ոտքի կանգնեց, բայց չէր
իմանում, ինչ պիտի ասի և մնաց կանգնած
այցետուսը ձեռքին:

«Վիկտորիա», կրկնեց ձայնը, և սենեակի
դուռը բացեց:— Ի՞նչ ես անում ներսը այս-
քան ժամանակ,—ասաց մայրը շէմքի վրայ
կանգնելով ու մի սուր հայեացք ձգեց աղ-
ջկայ վրայ: Վիկտորիայի ցրիւ եկած մազե-
րը, այլալուծ դէմքը շփոթեցրին մօրը:

— Վիկտորիա, դու հիւանդ ես, ինչո՞ւ ես
այդպէս կանգնած շէմի:

— Ո՛չ, հիւանդ չեմ, կարդում էի:

— Չէ, դու լաւ չես զգում, տուր ձեռքդ
տեսնեմ,—ասաց մայրը և մօտենալով՝ մի
խոր հայեացք ձգեց աղջկայ աչքերին, որոնց
վրայ արցունքի հետքեր էին երևում: Գուցէ
մայրը հասկացաւ աղջկայ վիշտը, կասկա-
ծանքով նայեց նրան ու սեղանի երեսին,
ուր ոչինչ չըկար, բացի փակ գրքերից:

— Այդ ի՞նչ ես բռնել ձեռքիդ,—հարցրեց
մայրը՝ նկատելով մատների մէջ թաքցրած
այցետուսը:

— Ոչինչ, թուղթ է:

— Տեսնեմ,—ասաց նա և առաւ ձեռքից
այցետուսը, մի քանի անգամ դէս ու դէն
շրջեց ու հազիւ, գիր կապելով կարդաց

«Վարդ Բաջադնունի»։ Մի լուրջ կասկած մտաւ մօր սիրտը. նա վախեցաւ այդ մըտքից, քիչ էր մնում յուզումից ճշայ աղջկայ վրայ, բայց զսպեց իրան, ասելով.

— Դու ջահիլ չես, հասակդ առած աղջիկ ես, զգոյշ պիտի լինես։ Պատուհանն էլ բաց է մնացել, մըսած կըլինես, գնանք իմ սենեակը։

Վիկտորիան հնազանդւեց և, բռնած մօր ձեռքից, դուրս գնաց։

Արեւը գլորւում էր բարձր լեռան թիկունքից, երբ Վարդը հասաւ մի սարահարթի։ Նրա դիմաց, հիւսիս-արեւմուտքում ցցւած էր մի լայնատարած սար, որի չորս երկնասլաց, սպիտակափառ գագաթները մի խորին վեհութիւն էին տալիս բնութեանը։ Վարդը կարծում էր, թէ մի հսկայական տաճար է մտնում, բնութիւնից կերտւած, բնութեամբ գեղեցկացրած տաճար։ Պատկառանքի ու հիացմունքի զգացումներ էին ծնում նրա հոգում։ Արեւելեան կողմից սկսւում էր մի լեռնաշղթայ, որի պար բռնած ճիւղերը տարածւում էին դէպի հիւսիս ու հարաւ։ Հարաւային կողմում կանգնած էր կոնաձև, թփուտներով ծածկւած մի գագաթ, որ, կարծես, կուշ էր եկել վիթխարի հարեանի առաջ։ Մանրիկ գետակները զանազան ուղղութեամբ թափւում էին լեռներից ցած ու դաշտի մէջտեղից հոսող գետին միանում։ Ուղիղ հիւսիսում երևում էր լեռների անցքը, որի միջով անցնում էր խճուղին ու ազատում ուղևորին այս լեռնաշխարհից։ Կանաչը դեռ նոր էր գլուխ բարձրացնում հողի տակից։ Դաշտի երկու կողմերում, լեռների ընթացքին զուգահեռական, ձգւած էին գիւղերը իրար մօտիկ-մօտիկ։ Գիւղացիները վերադառնում էին դաշտից իրանց արօրի ու եզների հետ, փոքրիկ մա-

նուկներն ու աղջիկները դէպի տուն էին քշում իրենց ուղիներն ու գանուկները: Վարդը գտնւում էր, որ մաքուր օդով շրջապատւած այդ երկրամասը մի այլ աշխարհ է, բոլորովին տարբեր իր տեսածից: Որտեղ է իսկական կեանքը, քաղաքում, մայրաքաղաքի ժխորում, թէ այս լայնորմ պարիսպներով շրջապատւած, քաղաքակրթութիւնից բոլորովին զուրկ լեռնաշխարհում: Ո՞վ է երջանիկ, այս կիսամերկ ու դալուկ մշակները, այդ կոպիտ մարդիկ, թէ քաղաքի բնակիչները: Նա մտաւ առաջին պատահած գիւղը: Նրան սպասում էր թշուառութեան, յետամնացութեան գունեղ պատկերներ, կենդանի նկարներ:

Անահիտ Քաջագնունին շատ մտածկոտ էր: Անա երկու օր էր, Վարդը գնացել էր գիւղերը: Անահիտը չէր իմանում եղբոր գնալու պատճառները. բացի այդ, գիւղ ասածը նրան այնքան էլ հասկանալի ու պարզ չէր երևում: Կեղտոտ փողոցներ, մութ, գետնափոր տներ, անհասկացող մարդկանց բաղձութիւն, ահա այն բոլորը, ինչ որ գիտէր գիւղի մասին: Այո, Վարդը գեղեցիկ բաներ կըխօսի, բայց ինչ օգուտ դրանից, անկիրթ են, չեն հասկանայ: Որքան լաւ է, երբ մարդ նոր-նոր բաներ է ասում, և իրան

լսում են, լսում են ուշադրութեամբ: Անահիտը մտածում էր և ման գալիս այգում. տուն դալ չէր ուղում: Մայրը բարկացած էր Վարդի վրայ և շարունակ գանգատում էր: Քանի գնում էր, տիկին Վարվառէն շատախօս էր դառնում և ձանձրացնում իր զաւակներին: Անահիտ մտածկոտութեան դիւաւոր պատճառը սակայն, Արշակ Բահաթրեանն էր: Նրանց վիճալը անորոշ էր: Տիկին Վարվառէի համաձայնութիւնը չէր ստացել դեռ: Արշակը հարուստ չէր, այլ մի չքաւոր ուսուցիչ. սակայն նրանք իրար դուր էին եկել, առանց երկար ու բարակ, գաղտնի տանջանքներ կրելու բացատրել էին, ուղում էին ամուսնանալ և միասին պաշտօն գտնել սեպտեմբերին: Անահիտը գիտէր, որ մայրը հեշտութեամբ չի բաժանւի իրանից, հասկանում էր, որ ինքը մօր համար այլ է, որդիներն՝ այլ: Տիկին Վարվառէն տարիներով կըբաժանէր Վարդից, Լեւոնից, բայց իր Անահիտից, երբէք: Կար մի ուրիշ արգելք: Տիկին Վարվառէն, եթէ նոյնիսկ հաշուէր Անահիտին մարդու տալու մտքի հետ, դարձեալ կըվշտահարւէր, եթէ իմանար, որ Անահիտը հասարակ ուսուցչի կին է լինելու: Նա երբէք չէր հաշուում այն մտքի հետ, որ իր զաւակներն աշխատաւորի, աղքատի կեանք վարեն: Եթէ Անահիտը հարուստ բժշկի, փաստաբանի չի առնելու, թող հարուստ վաճառականի առնի, իսկ հակառակ

դէպքում, թող մօր մօտ մնայ: Մօր հասկացողութիւններին լաւ ծանօթ էր Անահիտը, ուստի դժարանում էր խօսք բանալ: Առաջ նա պատրաստ էր զոհել մօրը փոքրիկ բաւականութիւն պատճառելու համար, բայց այժմ ամուսնութեան միտքը պաշարել էր նրա ուղեղը: Անահիտը պակաս չէր զարմանում մի այլ հանգամանքի վրայ: Նրա հասկացողութեամբ իւրաքանչիւր ամուսնութիւն կապած է սիրային տանջանքների, հոգեկան երկար յուզումների, գուցէ և դժբախտութիւնների հետ: Բայց յայտնում է Արշակ Բահաթրեանը և, առանց երկար տատանումների, յայտնում է իր պատրաստականութիւնը՝ ամուսնանալ: Դրան յաջորդում է երկու երիզասարդ սրտերի մեղմ ու անուշ փափազը՝ ամուսնանալ, միայն այդ առանց փոթորիկների...

Այսպիսի մտքեր ունէր Անահիտը, երբ Մնօն մի ծրար բերեց:

— Ո՞վ տւեց,— հարցրեց Անահիտը:

— Վարժապետենց գեաղան էր:

Անահիտը բաց արեց, կարդաց: Արշակը նրան խնդրում էր, որ հէնց այս երեկոյ խօսի մօր հետ, և եթէ յուսալի է, յայտնի, որ ինքն առաւօտեան գայ ու մօրից խնդրի նրա ձեռքը:

— Մնօ, ձեր կողմերում երբ աղջիկ են ուղղում, ո՞վ է առաջին անգամ խօսք բաց անում:

— Էդ խի՞ ես հարցնում որ:

— Հէնց այնպէս:

— Առաջ տղատէրն ա ուղղմ: Համա որ քու հմար ա խօսքը, խանմը կամք տւող պտուղ չի, թող զուր տեղը իրանց չը թեթեացնեն:

Անահիտը քմծիծաղ տւեց ու չըպատասխանեց: Մնօն հեռացաւ՝ կասկածելի հայեացք ձգելով Անահիտի վրայ: Անահիտը այդ օրն էլ չը կարողացաւ մօրը բան ասել:

IV

Ձատկի ուրբաթ օրն էր, մի անձրևոտ օր։ Փողոցները ծածկւած էին գորշագոյն ցեխով։ Մառախուղը թանձր քօղի պէս իջել երկրի վրայ և նոյնիսկ փողոցները թափանցել։ Մարդ մի քանի քայլի վրայ ոչինչ չէր նկատում։ Տները ծածկւել էին այդ բնական ծածկոցով, կտուրները կորել էին աչքից, կարծես, ձուլւել էին մառախուղի մոխրագոյն քուլաների մէջ։ Գործի մարդիկ շտապում էին քաղաքի փողոցներով, երբեմն նայում էին իրանց ցեխոտած անգրավար տիկներին և անէծք ու դժգոհութիւն թափում բնութեան գլխին։

Այդ վատ եղանակին տիկին Վարվառէ Քաջաղունին գնում էր փողոցով, փաթաթւած սև վերարկւի մէջ։ Նա կրկնակօշիկներ էլ էր հագած, բայց դժգոհ էր, ներքուստ խիստ յուզւած էր։ Նրան զբաղեցնում էր այն միտքը, թէ ուր է գնացել Վարդը այս քանի օրերս, և արդեօք այս մէկ-մառախուղին նա մի շէն տա՞ն է, թէ դաշտում, ենթակայ բնութեան արհաւիրքներին։ Նա կուզէնար կառքով գնալ, որ իրան ցեխոտ փողոցի տանջանքներին չենթարկէր, բայց ամեն ինչ հաշուող կին լինելով, իրան աւելորդ ծախսեր չէր թոյլ տալիս։ Տնտեսութեան այս

անաշտութեան համար ևս նրա սիրտը դառնա՞նում էր։ Նրա մէջ մի ուրիշ զգացում էլ կար։ Նա գնում էր տաքեր՝ Կոնստանդին Քաջաղունու մօտ։ Տաքը սաստիկ հիւանդ էր, նրան կանչել էին։ Գուցէ կրմեանի, ահգին հարստութիւնը կըմնայ Ռուբէնին, նրա փչացած ու անհաշիւ ծախսող որդուն, ափսոս, ափսոս, անցնում էր նրա մտքով։ Նրա սրտում ինչոր կասկածներ էին ծագում, կասկածներ, որոնք եթէ իրականութիւն դառնային տիկնոջը մեծ միւիթարութիւն կըլինէր։ Հարստութեան հիմքը հնից է գալիս, միատեղ ժամանակից, ուստի անարդար ոչինչ չի լինի, մտածում էր նա։ Հասաւ տաքեր տուն։ Պատշգամբում նրան հանդիպեցան մի քանի մարդիկ։ Ոմանք շտապ-շտապ խօսում էին, կարգադրութիւնների անում, ոմանք հիւանդի առողջութիւնը հարցնելու էին եկել, որը բարի դիտաւորութիւնից դրդւած, որը լոկ հետաքրքրութեան համար։

Նախասնեակում նրան պատահեց Կոնստանդին Քաջաղունու միակ աղջիկը՝ տասնչորս տարեկան Վարդանուշը։ Նրա մաղերը առանց սանրելու թափւած էին մէջքին, ուսեւրին, աչքերը տխուր էին, գէմքը լալկան։ Սիրունիկ աչքերի կոպերը կարմրել էին անբնութիւնից և արտասւելուց։ Տեսնելով հօբեղօր կնոջը, կարծես զգացւեց, առանց խօսելու բռնեց նրա ձեռքը ու համբուրեց։ Տիկինն բռնեց նրա համբուրեց։ Այդ ժամանակ էլ նրա երեսը համբուրեց։

հիւանդի սենեակից դուրս եկան երկու ան-
ծանօթ մարդ ու գնացին: Տիկնոջ հարցին
Վարդանուշը պատասխանեց, որ մէկը նո-
տարն է, իսկ միւսը, չգիտէ: Տիկինը ներս
գնաց:

Երկու պատուհանով, պատերը երկնադոյն
պաստառով ծածկւած սենեակի, որի ձախ
կողմում, պատուհանների դիմացի պա-
տի առաջ, երկաթեայ ծանրագին ու մեծ
մահճակալի վրայ պառկած էր հիւանդը:
Նուրը փետուրով լի, փափուկ բարձի մէջ
ընկղմւած գլուխը հալւած ու մաշւած դէմք
ունէր: Հալւած էր նաև հիւանդի ամբողջ
մարմինը, այնպէս որ վերմակի տակին,
կարծես, մարդ չէր պառկած. սակայն եր-
կու խորն ընկած աչքեր երբեմն բացւում
էին ու մոլորւած հայեացքներ ձգում ներ-
կայ եղողների վրայ. իսկ վերջիններս իւ-
րաքանչիւր այդպիսի դէպքում իրանց աչ-
քերն ուղղում էին հիւանդի շաղւած աչքե-
րին և, կարծես, հարցնում էին, թէ նա ինչ է
ուզում: Բայց հիւանդը այլևս ոչինչ չէր ու-
զում: Թէև կէս ժամ առաջ նա գրեւ տեսց
իր կտակը, բայց նա այդ արեց բժշկի հո-
գատար ջանքերով միայն. քիչ յետոյ բժըշ-
կական գիտութիւնը այլևս զօրութիւն չու-
նէր նրա գիտակցութեանը նոր-գարկ, մըտ-
քերին պարզութիւն, աչքերին ճիշտ տես-
նելու ու ճանաչելու ընդունակութիւն տա-
լու:

Հիւանդի մօտ նստած էին կիսն ու որ-
դին, որոնք սակայն կտակի գրութեան ժա-
մանակ ներկայ չէին և նրա բովանդակու-
թիւնն էլ չէին իմանում: Բացւելու էր մա-
հից երեք օր յետոյ: Ասլի-խանումը նստած
էր հիւանդի հէնց գլխի մօտ, ընկած տխուր
ու չարատանջ մտքերի մէջ: Այլևս յոյս չու-
նէր, թէ ամուսինը կ'առողջանայ, ուստի ա-
պագայի մասին յոռետես մտքեր ունէր, ար-
ցունքները խեղդում էին նրան, բայց աշ-
խատում էր իրան զսպել: Նա դեռ որդի չի
պսակել, անմուրաղ մեռաւ, մտածում էր նա:
Ռուբէնը, անխ, Ռուբէնը, ինչ պիտի դուրս
գայ, Տէր Աստուած. եթէ չըփոխի իր ճամբան,
անբախտ կ'ըլինի. իսկ Վարդանուշս, ան,
ինչ կանի սևաւոր մօր հետ, անառակ եղբօր
ձեռքին...

Հիւանդի ոտքերի մօտ նստած էր Ռուբէն
Քաջաղունին, Կոստանդին Քաջաղունու
միակ որդին, մեծ հարստութեան ժառանգը:
Նա էլ էր տխուր, բայց այդ տխրութիւնը
ընազդական էր: Նա պատրաստ էր լալ,
բայց նրա ուղեղը այլ եղանակով էր մտա-
ծում: Սիրտը տխուր էր, հայրը մեռնում էր,
այդ վատ էր ըստ սովորոյթի, ընդհանրա-
պէս, իսկ նրա միջի երկրորդ ձայնը ասում
էր, որ այդ մահը, միևնոյն է, մի օր լինելու
էր, այդ բնական է, հայրերը մեռնելու են
որդիներից առաջ, դարդ անելու կարիք չը-
կայ: Միւս կողմից նրա առաջ պատկերա-

նում էր հարստութեան անմիջական տէր
լինելու դրութիւնը. նա այլևս վիզը չի ծռի
հօր առաջ ու փող չի խնդրի. նա չի ստո-
րանայ այլևս գործակատարների առաջ, այլ
նրանց հրամայողը կըլինի. նրա հրամանի
տակ՝ են թէ փողերը և թէ մարդիկ, ի՞նչ ուզի,
չի անի...

Մտածում էր և հիւանդը: Նրա մտքերը
խառն ի խուռն էին: Արդէն երկու օր առաջ
նա համոզւած էր, որ բժիշկներն իրան օգ-
նելու չեն, որ ինքն անպատճառ կըմեռնի:
Ահա այդ գիտակցութեանը հասնելուց յե-
տոյ նա ընկղմւել էր մտքերի խոր աշխարհը:
Նրա գիտակցութիւնը քիչ-քիչ նւազում էր,
բայց հոգին հանգիստ չէր, դեռ բաբախում
էր նրա սիրտը, դեռ զառանցում էր նրա
ուղեղը:

Երիդասարդ է նա, միջակ կարողու-
թեան տէր բայց, բռնւած հարստանալու
տենչանքով, բաժանւում է եղբօրից՝ Գա-
լուստ Քաջապնունուց, որը պաշտօնեայ էր
և նրա ձգտումները չէր ըմբռնում: Բա-
ժանւում է և սկսում իր առևտրական
գործունէութիւնը... Նեղ օրեր, ճանապար-
հորդութիւններ բուք-փոթորիկներին, օրե-
րով քաղցած ու միշտ գործերի մէջ... աշ-
խատանք, աշխատանք... ընտանեկան ընդ-
հարումներ, կռիւ կնոջ հետ, խնայողութեան
քարոզներ ու խրատներ...

Բաց է անում խանութներ, անդադար

հսկողութիւն... հրամաններ գործակատար-
ներին... հազար մեղք... հազար տանջանք...
և մեծ հարստութիւն... Ահա Ռուբէնը գը-
նում է գիմնադիւ, աշխոյժ, կայտառ... Ու-
զում է որդուն անպատճառ լաւ կըթուլիւն
տալ, դարձնել առևտրական բառի իսկական
իմաստով և փող գիզել, փող... Բոլորն ի-
զուր, Ռուբէնն արհամարհում է հօր տեն-
չանքները և հինգերորդ դասարանից սկսած
բացարձակ հակառակորդ է դառնում նրան.
գիշերային թափառումներ, կասկածելի անձ-
նաւորութիւնների ընկերակցութիւն, կարտ,
գինի, քէֆ ու, ճհ, ուրիշ գործեր...

Ինքը մեռաւ, տարան, թաղեցին... Ահա
Ռուբէնը մտնում է խանութ, բաց է անում
փողարկղը, հարիւրանոցները դնում գըր-
պանը, նստում պատահած կառքը, պա-
տահողին մի մի թղթադրամ պարգևում և
կառքը քշում... Նրան պատահում են ըն-
կերները, տանում են, տանում խմացնելու
և ապա...

Նստած է տանը Ասլին, սե հագած, նըս-
տած է նրա մօտ Վարդանուշը, իր սիրուն
ծաղիկը... նրանք մտածում են, դարդ են
անում, վշիշում են...

Գործակատարները գողանում են, խա-
բում են Ռուբէնին... Աճուրդ է, ծախում
են Ռուբէն Քաջապնունու տունը պարտքի
տեղակ... Ասլին ու Վարդանուշը հին շորեր

հագած, վզներնին ծուռը, ձեռքերնին խա-
շած նայում են մի կողմից և արցունքները
թափում են նրանց աչքերից...

Ո՛հ, զառանցեց հիւանդը ու աչքերը
բաց արեց: Այդ ժամանակ տիկին Վար-
վառէն կռացաւ նրա վրայ: Հիւանդի աչ-
քերը մի վայրկեան նրա երեսին առան,
փայլեցին, գիտակցելու արտայայտութիւն
ստացան: Այդ կարճ տեւեց. նա մի ան-
հասկանալի բացազանչութիւն արձակեց
ու նորից ընկաւ մոլոր մտածմունքների մէջ:
Երկու օձ սպառնական, սիրտ ծակող հա-
յեսցքով սողում են դէպի ինքը, ահա մըտ-
նում են անկողնու տակ, բաց են արել բե-
րանները և ուզում են խայթել: Վրայ է հաս-
նում Ասլին, ուզում է գրկել նրան, փախց-
նել օձերից... Մէջ է ընկնում Վարդանուշը,
օձերը փաթաթւում են նրա մէջքին, ոտե-
րին: Ա՛խ, ձայնարկեց հիւանդը և ձեռքը
թափահարեց: Ներկայ եղողները նրան նա-
յեցին հարցական և վշտոտ հայեացքով:

Փախչում է ինքը: Գրպանումն են բոլոր
փողերը, մուրհակները, բանկի տոմսերը...
Ուզում է պահել անշարժ քարի տակ, խոր-
խոր այրերում, ձորի կիրճերում... Լաւ է
անշարժ մնան, ամենքից գաղտնի, քան
ծախսեն անհաշիւ, ոտքի տակ ընկնեն...
Ինքը վազում է, վազում է... ահա ձորը, խոր-
խոր անդունդներ, խօլ-խօլ ժայռեր... վա-

զում է, թրքի, ընկնում է ժայռից, անհուն
անդունդի տարածութեան մէջ...

Մտքերը խառնեցին, այլևս ոչինչ չէր
տեսնում, նա ինչ որ անորոշ բացազանչու-
թիւններ արձակեց մի քանի անգամ, ձեռ-
քերը թափեթափ տեւեց: Նրան ջուր տւին:
Անցան մի քանի րոպէ, նրա գիտակցութիւնը
մարեց, աչքերը սառեցին ու անշարժ դար-
ձան. նա արձակեց վերջին հառաչանքը և
յաւիտեանս քնեց...

Ներկայ եղողները հասկացան այդ: Ասլի-
խանումը մի ձիչ արձակեց ու գլխին տեւեց:
Տիկին Վարվառէն ձայնակեց նրան ու ըս-
կեց շարժել սառչող դիակի գլուխը և ձեռ-
քերը: Ռուբէնի սիրտն էլ փուլ եկաւ, թախ-
ծոտ տխրութիւնը նրան էլ պատեց: Մահ-
ւան առաջ ամեն ինչ թուլանում է, հաշիւ-
ները կորչում: Միւսները լալիս էին: Ռու-
բէնն էլ յենւեց պատին, դէմքը ուղղեց պա-
տուհանին, արցունքները առատ-առատ թափ-
ւում էին աչքերից: Մետաքսէ նուրը թաշ-
կինակը հանեց ու դրեց աչքերին: Արցունք-
ները թրջում էին թաշկինակը, և նա մըր-
մնջում էր, «հայրիկ ջան, հայրիկ ջան»: Նա
մոռացաւ իր հաշիւները, ուղեղը չէր գործում,
սիրտն էր բաբախում ու ճմլւում: Դռնե-
րը բացեցին, շտապով ներս մտաւ Վարդա-
նուշը, փաթաթեց մօր վզովը ու բարձրա-
ձայն աւաց. «Հայրիկ ջան, անուշ ջան, մեղ

անտէր թողեցիր, հայրիկ ջան, հայրիկ ջան...»

Դուրսն էլ խաւար էր: Թանձր մառախուղը աւելի էր խտացրել խաւարը: Ձիւնախառն անձրև էր գալիս: Իսկ աւագ ուրբաթի տխուր զանգերը ղողանջում էին, խուլ-թախծոտ հնչիւններ տարածում քաղաքում: Կոստանդին Քաջագնունին մեռաւ: Լուրը տարածւում էր խանութից խանութ:

Անցան մի քանի օրեր: Վարդ Քաջագնունին կատարեց իր ծրագրած շրջանը և յետ դարձաւ: Նստած երկաթուղու մի շատ երկրորդական կայարանում, սպասում էր գնացքի գնալուն: Թաղւած մտքերի մէջ, նա ուշ չէր դարձնում ապրիլի ծաղկոտ արևի վրայ, որ կարծես, գրգռւում էր ու ճառագայթները աւելի ու աւելի սաստիկ խրում նրա հագուստների արանքը և դէպի մարմինը ուղղում: Շրջակայքը գեղանկար տեսարան էր ներկայացնում: Յորհնի արտերը ծածկւած թզաշափ կանաչով, ձրգւում էին երկար ու նեղ հողակտորներով, իսկ դեռ հասկը չըհանած ցորենափնջերը ամենևին ուշ չէին դարձնում արևին, աշ-

խոյժ կենդանութիւն էին տարածում իրանց շուրջը: Կայարանի մօտ, փոքրիկ լճի ափին կարգով շարւած ուռիները սկսել էին իրանց դալար ճիւղերը դէպի ցած, դէպի ջուրն ուղղել, խոստանալով, աշնան ամիսներին սաղարթախիտ գեղանի հովանոցներ պարգևել վաստակած ճանապարհորդներին: Երկինքը պարզ էր, ամպերը երևում էին հեռու, շատ հեռու, սպիտակ ու դիզացած լեռների կատարներին:

Վարդը, սակայն, անտարբեր էր դէպի այդ բոլորը: Նա նստած էր փայտեայ փոքրիկ նստարանի վրայ, մտածում էր և երբեմն-երբեմն հայեացքն ուղղում էր երկաթագծերի ուղղութեամբ, դէպի այն կողմը, որտեղից գնացքն էր գալու: Դէմքը քիչ փոխւել էր, դարնան արևն ու քամիները սկսեցին էին նրա նուրբ կաշին: Կօշիկները, անգրավարտիկի ծայրերը ցեխոտւած էին: Սակայն նա այդ բանի վրայ ուշադրութիւն չէր դարձնում, միայն մտածում էր իր տեսածներին, իր տպււորութիւնների մասին: Ճիշտ է, նա զաւառական մի հասարակ քաղաքի գաւազ էր, սակայն գիւղը չէր ճանաչում, ուսանողական տարիները նրան աւելի էին հեռացրել գիւղից: Կոնստանդնուպոլսում ու մօայլ ճակատների մի շարք էր տեսել նա, համբ հայեացքների, կոացած մէջքեր, ջլոտ բազուկներ... Ահա ինչեր էին

պատկերանում նրա ուղեղում: Այդ բոլորը լուռ խօսում էին դարձող ցաւերից, փակ-
ւած որտեղում ամբարւած ծանր վշտերից: Գետնափոր տներ, ծուռ, կեղտոտ փողոցներ
և բոլոր դժբախտութիւնների թագաւոր քաղ-
ցը իր զուգակից խաւարի հետ... Մարդիկ,
որոնք ամբողջ տարին տնքում են բեռան
տակ, այրւում արեւից, հալւում աշխատանքի
ծանրութիւնից, բայց էլի քաղցած, էլի տը-
գէտ: Մտածում էր Վարդը, իսկ գնացքը
դեռ չէր գալիս: Նրա մտքերը դարձան դէ-
պի իրանց տուն: Մի քանի օրւայ բացակա-
յութիւնը նրա մէջ տռաջացրել էր կարօտի
մի քնքոյշ լար դէպի իր հարազատները:
Իր թափառումների ժամանակ, երբ նստում
էր ձորակների ափերին, աչքերը դէպի սա-
րերն ուղղում, իսկ հոգու հայեացքը դէպի
սրտի գաղտնի խորքերը, նրա մէջ արթնա-
նում էր մի լալկան զգացում դէպի մայրը,
քոյրը: Մօր մասին մանաւանդ վերջերս շատ
էր մտածում: Նա խեղճ է, քաղցր խօսքերի
պահանջ ունի, հարկաւոր է նրան սփոփել,
անցնում էր նրա մտքով, սակայն ինքը
պահանջւածից աւելի սառն է և մօր լաւու-
թիւններին դրամական հատուցում է տալիս
միայն: Նա կծու զղւանք զգաց դէպի փողը,
մոռացաւ սովորած տէօրեաները, կապիտա-
լի կործանող ու վերաշինող դերը մարդկա-
յին կեանքում: Զղջման մի զգացում պա-
տեց նրա սիրտը: Ինչն է աւելի քաղցր,

քան այն գիտակցութիւնը, որ մի անկաշառ
սիրտ միշտ բաբախում է իր համար, մի սիրտ,
որ չի դաւաճանի: Ո՛չ, մայրական սիրտը
անդաւաճան է: Մայր, մայր... Սա այն
էական է, որ ապրում ու շնչում է իր դա-
ւակների համար: Զաւակները մօր էութեան
մասնիկներն են: Գործել համոզմունքներով,
բայց չըմոռանալ մօր սիրտը, մօր սէրը...
Գուցէ կոյ մի ուրիշ սէր, որը կարող է դա-
ւաճանել, թէ կայ մի ուրիշ սէր, բոլորովին
տարբեր մայրական սիրուց, աւելի փոթոր-
կոտ, դրականապէս վճռեց Վարդի գլխում,
բայց թէ այդ սէրը դաւաճանող է, Վարդը
պատասխան գտնել չըկարողացաւ: Մի ցըն-
ցում անցաւ Վարդի մարմնով: Դէպի մէկը
նա մի ուրիշ տեսակ սէր է տածում, մի
սէր, որ բորբոքում էր նրան: Էլէքտրական
մի հոսանք անցնում էր երակներով: Մի գե-
փիւռ շարժում էր նրա սրտի լարերը, հոգու
վարդերը, որոնք տատանւում էին, իրենց
տերևներով սրտի պատերին հալում: Այդ
հալումից բաւականութեան ալիքները ծփում
էին նրա հոգում... Ո՛հ, սրբան քաղցր է
զգալ ու մտածել:

Շեւից լսեց շոգեկաթսայի սուր սուլոցը,
որ մի անգամից ճեղքեց լուսթիւնը: Վարդը
սթափւեց մաքերից, պատրաստեց մեկնելու:

Երբ Վարդը տուն հասաւ, արեւի մտնելու ժամանակն էր: Բակում նրան դիմաւորեց Մնօն: Պարտիզի աշխատանքից էր վերադառնում: Արեւամտի թոյլ ճառագայթները ընկել էին նրա երեսին, քրտնքի մանրիկ կաթիլներին բիւրեղեայ փայլ տւել: Վարդը յիշեց իր նոր ծանօթութիւնները: Մնօն ուրախացաւ, երբ նրան տեսաւ: Վարդի տրամադրութիւնն էլ լաւ էր:

— Բարեւ, Մնօ,—ասաց նա:

— Աստծու բարին:

— Քանի՞ աշխատես, որքան ծերանում ես, այնքան եռանդով ես դառնում:

— Դրուստ ա, մարդ ինչքան մենձանայ, էնքան կը թամահակալի: Հողեղէնի աչքը հա եդ ա, նա չի կշտանայ, ինչքան ուզես, տո՛ւ, նա չէ չի ասի:

Ինչո՞ւ սկսեց փրկիսփայել, մտածեց Վարդը: Մնօն շարունակում էր:

— Համա մարդու ախրը փուչ ա, փուչ էս աշխարհքից հէջ դադ չի տանում, իրա թամահովը ինքը չարչարւմ ա, տապալելւմ, համա զուր ա: Այ քեզ Կոստանդ անդէն, հաւաքեց, դիզեց, հազար ու մի ճամբէքով փող հաւաքեց, ի՞նչ օգուտ, սաղ թողաց ու գնաց:

— Ի՞նչ ես ասում, Մնօ, ո՞ւր գնաց:

— Բեխարմը ես. Կոստանդ աղէն մեռաւ, թաղեցին, ֆողը դրին: Էնքան փողերն էլ մնացին Ռուբէն աղին: Այ քէֆ կանի հա:

— Հօրեղբայրս մեռաւ, երբ, Մնօ, երբ,— շփոթեց Վարդը:

— Մի շաբաթ առաջ: Խանըմն էլ տանը չի, ընդի ա:

Վարդն շտապով վեր բարձրացաւ, մտաւ իր սենեակը: Չը գիտէր, ինչ զգացմունքներ ծնեցին իր մէջ: Չէր կարողանում որոշել, ցաւո՞ւմ է այդ բանի համար, թէ ուրախ է, բայց մի անախորժ տրամադրութիւն պատեց իր սիրտը: Նա չըգիտէր, ինչ անել: Այս պատուհանին նայեց, այն պատուհանին, դռներ վերցրեց, նայեց առանց կարգալու, առանց հասկանալու, վերջը շորերով ու կեդտոտ կօշիկներով ընկաւ մահճակալի վրայ: Մի տեսակ դատարկութիւն կար նրա մէջ: Կէս ժամից յետոյ մտաւ Անահիտը: Վարդը նստեց մահճակալի վրայ: Արեւ մտել էր, արեւմուտքը շառագունել: Վերջալոյսի ոսկեգոյն ճառագայթները խաղում էին միջանցքի պատուհանի ապակիների վրայ և անդրադարձել էին դէպի միջանցքի ներսը: Երբ Անահիտը դուռը բաց արաւ, ճառագայթները, կարծես, թեքւեցին դէպի սենեակ:

— Բարեւ, Վարդ ջան, յոգնած ես:

Վարդը կանգնեց: Բարեկեցին, համբուրւեցին:

— Այս ի՞նչ է եղել, Անիւստա, հօրեղբայրս մեռել է:

— Այո, մի շաբաթ առաջ թաղեցին,— տխրեց Անահիտը:

— Ինչպէ՞ս եղաւ, պատմիր մանրամասնութիւնները:

— Հիւանդութեան մասին ուշ իմացանք: Մաման իսկոյն զնաց, կանչել էին: Բայց նրա գնալուց մի ժամ յետոյ մեռաւ:

— Իսկ հարստութիւնը, կտակ կա՞յ:

— Վարդ, դու զգացմունք չունես, իսկոյն հաշիւների մէջ ընկար:

— Գիտես, Անիւտա, երբ Մնօն ինձ այդ յայտնեց, ես վատ զգացի. դուցէ մէջս խօսեց արիւնալեցական զգացմունքը. սակայն հարկաւոր է սառը լինել: Նախ մեր հօրեղբայրը երիտասարդ չէր, բաւական ապրել էր. երկրորդ նա մի մարդ էր, ուրիշ ոչինչ: Բոլոր մարդիկ նոյն ճանապարհով են գնում, մահը մարդու անխախտ վախճանն է: Մեծ մարդկանց մահւան դէպքում ցաւ են զգում, այդ էլ մեծ մասամբ ձեռի համար է: Երբ մարդ ծեր է, եթէ նոյնիսկ նա մեծ մարդ է, մահը նրա համար ընական վախճան է:

— Սակայն նա մեռնելիս հասարակութեանը չի մոռացել:

— Ի՞նչ է արել:

— Կտակ է թողել, բաւական խոշոր գումար է յատկացրել դպրոցներին, քահանաներին,

— Հին երգ է: Դպրոցներին թողածը որոշ նշանակութիւն ունի, թէև այդ էլ նրա աւելորդ կոպէկներէն կը լինեն: Իսկ ամէրը, խանութները...

— Բոլորը որդուն է թողել:

— Տեսնո՞ւմ ես, հարիւր հազարները՝ փշաքաճ որդուն:

— Ուրիշները այդքան էլ չեն տալիս հասարակութեան: Չըմոռանամ ասել, որ մեր պարտքերն էլ են ոչնչացած, վերջապէս մաման իրան լաւ կգգայ:

— Հարկաւոր չէ ողորմութիւն ընդունել: Կտակը անաջող է. բոլոր անշարժ կայքերն որդուն ես ֆաւստել. իսկ որդին, մեր հօրեղբայր յարգելի որդին, այդ բոլորը կ'ոչնչացնէ. նա չունի հօր ընչասիրութիւնը, նա փող ծախսել գիտէ, մէկ էլ քէն պահել, ուրիշ ոչինչ:

— Այդ մասին յետոյ կը խօսենք, շորերդ փոխիր, հանգստացիր, հարկաւոր է այս երեկոյ նրանց մօտ գնալ...

— Դարձեալ պառաւների շարքը մտա՞ր:

— Այդ հարկաւոր է: Առ այժմ հանգստացիր: Ես իսկոյն մաքուր շորեր կը բերեմ:

Անահիտը դուրս գնաց: Մութն ընկել էր: Պատուհաններն այլևս թափանցկութիւն չունէին: Վարդն աշխատում էր անտարբեր լինել, բայց դարձեալ անտարբեր չէր. խաւարը մեղմադճոտ ներշնչումներ էր անում:

Առաւօտեան շորերը հագնելիս՝ Վարդը վճռեց այդ օրն անպատճառ տեսնել Վիկտորիային, որին յիշելիս, ջերմութիւն էր ըզգում նա: Թէյ խմելիս, նա իմացաւ, որ

հօրեղբոր որդին՝ Ռուբէնը, շատ դժգոհ է հօրից նրա արած կտակի պատճառով, և որ կտակը կարդալուն պէս՝ նա յայտնել է մօրն ու ազգականներին, որ հայրը հիւանդ դառանցանքների մէջ է արել կտակը, և որ ինքն այդ իսկական համարել չի կարող, ուստի դատաստանական ճանապարհով կը քանդի այդ կտակը, չի թոյլ տայ, որ իր տասնեակ հազարները կորչեն: Այդ լուրը քաղաքում ամենահետաքրքրական նորութիւնն էր: Վարդն զգաց, որ եթէ Ռուբէնի յայտարարութիւնը ճիշտ է, որոշ չափով դպրոցին յատկացած գումարն է նրա դժգոհութեան պատճառը. գուցէ իր անձնաւորութիւնը՝ իբրեւ տեսչի, նոյնպէս դեր է խաղում այս խնդրում:

Ռուբէն Քաջաղնունին Վարդին չէր սիրում: Դեռ աշակերտական հասակից նըրանք անհաշտ էին: Վարդը երկու տարով մեծ էր Ռուբէնից, գիֆնազիստ ժամանակ նկատողութիւն էր անում նրան: Սակայն Ռուբէնն ամենեւին տրամադրութիւն չէր ցոյց տալիս, ենթարկւելու նրա խրատներին, այդ պատճառով էլ նրանք յաճախ ընդհարւում էին իրար հետ: Շատ վաղուց նրանց յարաբերութիւնները դարձել էին արհամարհական: Փոխադարձ ատում էին իրար: Վարդը Ռուբէնին համարում էր թեթեամիտ, զւարճամոլ, դրական աշխատանքի անընդունակ: Ռուբէնը Վարդի մասին այն

կարծիքն ունէր, որ նա մեծամիտ է, անձնասէր, երեակայող: Վարդի մասին խօսելիս միշտ հեգնանքով անւանում էր նրան «մեր փրկափան»: Վարդը լաւ էր հասկանում այս բոլորը, ուստի և նրա կասկածը, թէ Ռուբէնի դժգոհութեան մէջ իր անձն ևս նշանակութիւն ունի, աւելի հաւանական էր թւում: Թէյից յետոյ նա դուրս եկաւ արեւելեան կողմի փոքրիկ պատշգամբը: Ծիրանիները թափում էին իրանց ծաղիկները, իսկ դեղձենիները, նարջի գոյներով դարգարւած, փայլփլեցնում էին իրանց ծաղկազարդ ճիւղերը՝ արևի առաջին ճառագայթների տակ: Գարնան առաւօտը փռւած էր պարտիպում, տարածում էր վերածնութեան և կենդանութեան կենսաբարձունչ: Սարեակները, նստոտած ուռենիների ու բարձրաբերձ բարդենիների վրայ, սկսել էին իրանց վաղօրդեան մեղեդիները. հազար ու մի ձվլոցներով գուրգուրում էին իրար: Վարդը հասկանում էր, որ գարնան արագահոս արիւնն է կենդանական աշխարհում ձայների այդպիսի դիւթիչ փնջիկներ առաջացնում, որ իւրաքանչիւր թռչուն երգում էր բռնւած երկրային մեծ կրքի, բնփոյշ սիրոյ ալիքներով: Թռչունները սէր էին երգում, կեանքի ընկեր էին որոնում. ընկեր, որ զգար իրանց երգի գաղտնիքն ու նպատակը: Տեսարանը սաստիկ ազդում էր քսանուկից տարեկան տղամարդու վրայ:

Նրա հոգում արթնանում էին գաղտնի, մինչև այժմ լուսթիւն պահած, զգացմունքներ. նա տենչում էր, ինքն էլ հրգի, ինքն էլ սիրի ու որոնի: Միւս կողմից նրա մէջ ծրագրւում էր գործունէութեան նոր ասպարէզ: Նա քիչ-քիչ համոզւում էր, որ ինքը պատրաստուելու է կուլի և կուով միայն կը յաղթանակէ իր հակառակորդներին: Իսկ կարմիր արեւը ամբողջովին դուրս էր եկել բլուրի տակից, բարձրացել էր մինչև բարդենիների կատարներն և աւելի ու աւելի դէպի բարձրն էր ձգւում: Նրա ոսկեգոյն ճառագայթները ամենայաղթ ուժով ընկնում էին երկրի, ծառերի, ծաղիկների վրայ...

Այո, կարմիր արեւ էր պարզ ու վճիտ, կապուտակ երկնքում, կանաչադարձ այգում սիրուն ծաղիկներ, սիրոյ տենչանքներ թըրթռուն սրտում, նոր մարտի կոչը նրա յաղթ կրճքում: Վարդ Քաջաղնունին զգում էր, որ իր համար նոր օրեր են սկսւում, փոթորկոտ օրեր, նոր ճանապարհ է բացւում:

V

Ամիսներ անցան, ամառն եկաւ: Ասլի ու Վարվառէ Քաջաղնունիների ընտանիքն աւելի ու աւելի մօտենում էր, մտերմանում: Երկու այրիներն այժմ շատ սիրով էին: Ասլի-խանումը միշտ թախանձում էր տիկին Վարվառէին, գալ իրանց մօտ, ամիսներով ապրել, բայց տիկին Վարվառէն, սգոյ օրերն անցնելուց յետոյ, շաբաթը մի կամ երկու անգամ հազիւ էր գնում տաքերկնոջ մօտ՝ միսթարելու: Նրա հպարտ բնաւորութիւնը չէր հաշտւի ամիսներով ուրիշի տանն ապրելու հետ: Նա պարտքերի մասին այնքան էլ չէր մտածում այժմ: Վարդը կը վճարի: Հակառակ դէպքում էլ անհանգիստ լինելու կարիք չըկայ: Հարուստ տաքեր փողերից շատերը բաժին պիտի ստանային, անարդար չէր լինի, որ ինքն էլ ստանար, մանաւանդ, որ կտակն այդ խնդիրը լուծել էր նրա օգտին: Կտակը գրւած էր օրէնքով, քահանայի վկայութեամբ հաստատւած: Անարդար ոչինչ չըկայ:

Անահիտ Քաջաղնունին էլ երբեմն յայտնւում էր հօրեղբօր տանը: Ամենից ուշադրաւը Լևոն և Վարդանուշ Քաջաղնու-

նինքերի մտերմութիւնն էր: Լեոնն աւելի էր մեծացել: Նրա դէմքը պատանեկութիւնից անցնում էր առնականութեան. դիմագծերը հաստատուն ձևակերպումն էին ստանում, ձայնը հաստացել էր, բեղատեղերը կանոնաւոր սևացել: Բոլորը զարմանում էին նրա այդքան շուտ մեծանալու վրայ: Մի տարի առաջ նա, համարեա, մանուկ էր, բայց այժմ կատարեալ երիտասարդ էր: Մայրը, քոյրը ուղղակի հիանում էին նրա գեղեցկութեան վրայ: Փոխել էր նաև նրա բնաւորութիւնը: Նա լրջացել էր, կանոնաւոր կերպով հոգում էր իր կրթութեան մասին, միշտ կարդում էր: Վարդանուշն այս ամառ անակընկալ կերպով մտերմացել էր Լեոնի հետ: Վարդանուշն էլ գեղեցիկ էր: Նրա երկար մազերը, կրակոտ աչքերը, կարմիր այտերը աննկատելի մնալ չէին կարող: Երկուսով միասին զբօսնում էին, միասին գիրք կարդում: Ազգակցական այս համերաշխութեան մէջ բացառութիւն էին կազմում Վարդն ու Ռուբէնը, որոնք ընդհակառակն աւելի ու աւելի էին թշնամանում: Ռուբէնը ուզում էր քանդել կտակը, Վարդը ջանքեր էր թափում հաստատել տալ, որպէսզի դպրոցը չը կորցնի իր խոշոր գումարը, զորով նա յոյս ունէր կարգի բերել այդ հաստատութիւնը:

Ռուբէն Գալաղսոնին արդէն տէր էր ամբողջ կարողութեան: Թէև տանը մօր ու քրոջ խաթրին կաշելու փաստեր չէր տալիս,

ընդհակառակը, աշխատում էր նրանց սիրալուրախ պահել, մանաւանդ փողի խնդրում, բայց դուրսը, խանութում, կալածներում ծառայողների հետ պայքար էր սկսել: Նա տուն քիչ էր գալիս, շատ օր գիշերներն էլ չէր վերադառնում: Թէ ուր էր լինում, տանը ոչ ոք չը գիտէր: Ասլի-խանումը դժգոհ էր, փորձում էր խրատել նրան, բայց միշտ էլ Ռուբէնը պատասխանում էր, թէ ինքը երեխայ չէ, որ պառանքների խորհրդին լսի, որ ինքը լաւ գիտէ, ինչ է անում: Նա գիտէր, որ կտակի գործում մօր համակրութիւնը Վարդի կողմն է, շատ դժգոհ էր և յարմար գէտքերում յիշեցնում էր այդ:

— Ապա ի՞նչպէս, դու ուզում ես հօրդ կամքը խախտել,— ասաց նրան մի անգամ մայրը:

— Ասում եմ, դարձեալ կասեմ, որ հայրս մեռնելուց առաջ խելքը կորցրել էր: Եթէ նրա խելքը տեղը լինէր, ահա, որ կենդանի ժամանակ մի կոպէկ իզուր չէր ծախսում, ոչ ոքի մի բուբլի չէր հաւատում,— հաղարները կըտա՞ր դատարկ բաների:

— Ա՛յ որդի, ամօթ չէ, որ ուզում ես խայտառակեւել հօրդ, խենթ ես հրատարակում, խլում ես եկեղեցուն, էջմիածնին տւած փողերը:

— Ես եկեղեցի ու էջմիածին չեմ ճանաչում, հաւատացողները թող իրանց եկեղեցուն էլ փող տան, քահանաներին էլ, մենք

պարտական չենք բոլորի փոխարէն վճարել: Էջմիածինն, հը՛, այն սեպուղիներին: Ես վարդապետներին չեմ սիրում: Էջմիածինն էլ զաւակներ չունի, որ փողի կարօտութիւն ունենայ:

— Ի՞նչ ես ասում, Ռուբէն, Աստուած կը բարկանայ, ամեն մարդու մեղքն իրանից կուզեն: Էջմիածինը Լուսաւորչի ազգի մայր Աթոռն է, հայի տունը, մեր ազգը պահող-պահպանողը...

— Ես ազգ չեմ հարցնում, ամեն մարդ ապրում է իր համար. եթէ ամեն մարդ իր մասին մտածի, ազգն էլ լաւ կը լինի: Ես Վարդը չեմ, որ տուն ու տեղս մոռանամ. ես ազգի փրկիչը լինել չեմ ուզում:

— Այո, դու Վարդին հասնել չես կարող: Նա աշխատում է, իր հօր պարտքերն է տալիս: Լսե՛լ ես, նա վճարելու է մնացածը ես, կտակի այդ կէտում համաձայն է քեզ հետ, իսկ դու քանդում ես հօրդ կտակը, նրան խելացիոր ես հրատարակում:

— Մայրիկ, ես Վարդը չեմ, ես ուրիշի փողով չեմ մեծացել, որ վճարելու մասին էլ հոգամ: Հէնց նրա պատճառով եմ ես այսպէս անում, որ նրա խօսքը չըլինի: Բաւական չի հօրս փողով ուսում առաւ, այժմ էլ իմ փողով բարեգործութիւն է անում, ազգի համար դպրոց է շինում: Ո՛չ, նա, այն ծակ փրկիստիան իր նպատակին չըպիտի հասնի: Իտի քանդեմ այդ կտակը, այդ փողով

քէֆ պիտի անեմ, պիտի շաղ տամ ոսկիները, թող իմանայ, որ փողի կարօտութիւն չունիմ:

— Ռուբէն, Ռուբէն, ամօթ է, մեղք է— ասաց Ասլի-խանումը և շարած մնաց: Նա չէր հասկանում որդու, դէպի Վարդն ունեցած, ատելութեան պատճառը, այլ միայն ցաւում էր և վախճնում, որ երկու ընտանիքների յարաբերութեան մէջ այդ պատճառով սառնութիւն կարող էր առաջանալ. բայց աւելի սաքսափում էր այն մտքից, որ կտակը կարող է քանդել, որ հանգուցեալ ամուսինը կարող է խելագար հրատարակել: Նա դողում էր այդ մտքից: Իսկ եկեղեցի՞ւն, Էջմիածինը... Աստուած բարկութիւնը կը թափւի իր տան վրայ:

— Այդպէս, մայրիկ, — ասաց Ռուբէնը, — խելքիդ խելք ասա, հարազատ որդուդ կողմը պահիր, Վարդը քեզ չի պաշտպանի նեղ օրին. նա, նա է մեր, Քաջազնունիներին, անունը խայտառակողը: Քանի վերադարձել է Պետերբուրգից, ի՞նչ է անում, ի՞նչ գաղտնի, անմիտ գործերով է զբաղւած. ամբողջ քաղաքը խառնել է իր յիմար յօդւածներով... Այժմ էլ, ասում են, սիրահարւել է, հա՛, հա՛... ես նրան սիրահարութիւն ցոյց կը տամ:

Ասլի-խանումը ոչինչ չը պատասխանեց: Նա նայում էր Ռուբէնի երեսին: Ռու-

բէնը լռեց: Ապա մի քանի րոպէ այդպէս
Ֆալուց յետոյ, դուրս գնաց:

«Կանօք», կանչեց Ռուբէնը փողոցում: Ա-
մեն կողմից կառապաններն շտապեցին ի-
րանց ծառայութիւնն առաջարկել: Նա նըս-
տեց ամենալաւ կառքերից մէկն ու սլացաւ
մեծ ու երկար փողոցով դէպի վեր: Ապա
անցաւ մի այլ փողոց ու սե, սրբատաշ
քարերով շինած, երկյարկանի մի տան ա-
ռաջ կանգ առաւ:

Երեքանոցը կառապանին տեց ու, առանց
զանգահարելու, ներս մտաւ: Երկրորդ յարկի
պատշգամբում չերկեսկա հագած երկու
պարոն դիմաւորեցին նրան:

— Հազիւ, թնչու ուշացար,—ասաց նրան-
ցից մէկը՝ երեսն ամիս անցած երկարահասակ մի
պարոն:

— Էլ թնչ լեշով էին ընկել,—վրայ բե-
րեց երկրորդը, լայն երեսով, անբեղ, ան-
մօրօն, սպիտակ գոյնով, հաղիւ քսան տա-
րեկան մի երիդասարդ:

— Ի՞նչ լեշ, եղբայր, անձնական գործե-
րով էի զբաղւած, հանգստութիւն չըկայ,—
ասաց Ռուբէնը և երկուսին էլ բարեկց:
Երեքն էլ ներս մտան:

— Համեցէք,—ասաց երեսն ամիս անցած պա-
րոնը,—ինձ պէս մարդը սրանից բացի ու-
րիշ բաներով պատուել չի կարող:—Նա

ցոյց տեց սեղանի վրայ շարւած շիշերը՝
լի զանազան խմիչքներով: Ռուբէնը, նախ
քան նստելը, սեղանի վրայից մի պա-
պիրոս վերցրեց, սկսեց ծխել ու քայլել
յետ ու առաջ: Միւս երկուսը կանգնած
էին:

— Բան է պատահել քեզ, տխուր ես,—
ասաց տանտէրը:

— Ո՛հ, ինձ տանջում են, հոգիս հանում
են այդ գործերը: Զըգիտեմ, ճիշտ հասնեմ,
խանութիւն, տանը, թէ միւս կալւածներին:
Դատարկ բան է, ես վաճառական չեմ դառ-
նայ, ցանկութիւն չունեմ, այս ամառւայ
շոգին նստել խանութում ու մուշտարու
սպասել: Այդ անտէր մուշտարին էլ իսկոյն
չի գալիս, սպասելուց մարդու գլուխ ու-
ռում է. չէ եղբայր, ես ճանձ կուլ տալու
ցանկութիւն չունեմ...

— Տօ, դու իմ աղբերացեղն ես. իմ հետ
հաց ուտողն ինչպէս կարող է խանութպան
լինել. մենք ստեղծւած ենք, այս արծւի
կաթի համար—ցոյց է տալիս շիշերը—թէ
չէ մենք համբերութիւն ունենք՝ առաւօտից
մինչև երեկոյ խանութում նստելու: Այդ-
քան համբերութիւն, որ ունենայինք, այժմ
համալսարան էլ էինք աւարտել, դեռ պրօ-
ֆեսոր էլ էինք եղել, այն ինչ գիմնազիայի
կիսիցը հազիւ ազատեցանք,—ասաց տան-
տէրը:

— Սխալւում ես, ես գիմնազիան ամբող-

ջովին վերջացրի,—վրայ բերեց Ռուբէնը:

— Ի՞նչդ աւելացաւ. իմ ու քո պէս մարդկանց համար համալսարան աւարտելը, կամ գիւղական դպրոցը, միեւնոյն է, մենք ուրիշ տեսակի մարդիկ ենք, մենք ոչ փիլիսոփայ կը դառնանք, ոչ գրող,—շարունակեց տանտէրը:

— Տօ, գրելը ձեր ինչ բանն է, այդ Վարդ Գալազնունու գործն է: Փաջ է մարդը, ամենեւին երկիւղ չունի, այսօր դարձեալ մի ուսուաց թերթում տակն ու վրայ է արել,—վրայ բերեց լայներես երիզասարդը:

Ռուբէնի գէմքը քիչ խոժոռուեց: Ընկերները գիտէին, որ Ռուբէնն իր և հօրեղբոր որդու մէջ եղած յարաբերութեան մասին չի սիրում ուրիշների հետ խօսել: Նրա կարծիքով, այդ իրանց տանու գործն է, և ուրիշներին ասելն աննամուսութիւն է: Նա ոչ միայն այդ մասին չէր խօսում, այլ և եթէ ընկերներից մէկն ուզէնար ակնարկներ անել Վարդի հասցէին, նա պատրաստ էր անպատեւ ընկերոջը, կուէլ նրա հետ: Մենակ ինքն իրաւունք ունի Վարդի գէմ կրուելու, ուրիշների դաշնակցութեան կարիք չի զգում: Նա շարունակում էր քայլել ու ծխել: Ծխախոտի ծուխը պալան-պալան դուրս էր գալիս նրա բերանից, քթածակներից ու լցում սենեակը:

— Թողէք գրողներն իրանց համար հանգիստ մնան, մենք մի սրա համը տեսնենք,—

ասաց երկարահասակ պարոնը: Լցրեց օղու բաժակն ու Ռուբէնին մեկնեց:

— Ո՛չ, ես գինի պիտի խմեմ,—պատասխանեց վերջինս:

— Որ գինուց ես սկսում, գործերնիս թոյլ կը գնայ:

— Ոչինչ: Իսկապէս այսօր ամենեւին ախորժակ չունեմ:

— Տօ, մարդու ախորժակն իր ատամի տակին է: Ա՛ռ, ճու, մի կոնձիր:

Մի բաժակ էլ միւս ընկերը վերցրեց: Երեքով բաժակները չըխկացրին ու խմեցին:

— Մի՛ն էլ, ասաց երկարահասակ պարոնը:

— Մի՛ն էլ,—պատասխանեցին միւսները, և բաժակները նորից լցեցին ու դատարկեցին:

— Երրորդութիւնը լաւ բան է,—նորից խօսեց երկարահասակ պարոնը:

— Դու երրորդութիւնից ի՞նչ ես հասկանում,—ասաց լայներես երիտասարդը:

— Ճիշտն ասած, մեռած Տէր-Մարկոսի դասերից գլխումս շատ բան չի մնացիլ: Յիշում ես, Ռուբէն, նա ամեն դասի հարձած էր գալիս և շատ ոգևորւած էր պատմում Կանա քաղաքի հարսանիքի պատմութիւնը, շրթունքները ծածկացնում էր գինու անունը տալիս: Գինին Աստուծոյ օրհնած

բանն է, ես սրա ստեղծողի հոգուն մեռնեմ:

Բաժակները երրորդ անգամ դատարկեցին: Նրանք նստեցին սեղանի շուրջը և սկսեցին խմել: Ռուբէնն այլ ևս մտայլ չէր, զարթացել էր: Շշերը դատարկուած էին, զարնուած յատակին, փշուր-փշուր լինում: Նրկար հասակով պարոնը երբեմն դուրս էր գալիս սենեակից, և երբ ներս էր մտնում, նրա յետևից մտնում էր երիտասարդ սպասաւորը, որը մատուցարանով նոր շիշեր և ուտելիքներ էր բերում: Լայներես երիտասարդը բարձր ու սուր ձայնով ոռուներէն մի սիրային երգ էր երգում և աթոռի թիկնոցի վրայ կոտրատում: Նրա աչքերը մի տեսակ ճպճպում էին ու ջրակալում: Ռուբէնը գլուխը տատանում էր երգի ելեէջներէ հետ, նրա այտերը փայլում էին ու այրում:

— Զան, ջան, ձեզ պէս աղբէր տղերքանց հոգուն մեռնեմ,— երբեմն բացազանչում էր տանտէրը:

— Երգիր, երգիր, ձայնդ անսպառ: Վառում է, վառում: Այդ ցաւին դիմանալ կը լինի:— Աչքերը շողաժառանգում էր Ռուբէնը:— Միւրոյ կրակը քո ջանն էլ է ընկել: Մարդ իմանայ, այդ ինչիցն է, որ տասնութ տարին հասնում է թէ չէ, մարդու սիրտը մի կրակ է ընկնում, փոթոթւում: Աղջիկ ասածը ուրիշ բան է: Ամեն

անգամ, երբ մարդու սիրտ բորբոքում է, հէնց իմանում է, որ աշխարհի երջանկութիւնը պտնւում է սիրտը հովացնելու մէջ: Բայց որ մարդու սիրտը կաշում է մէկին, քիչ է մնում խելագարւի:

— Զէ, սրան էլ է կպել, նրա կենացը,— բացազանչեց երիտասարդը՝ դադարեցնելով երգը: Երեք լիք-լիք բաժակներ ձօնեցին Ռուբէնի երեւակայական սիրածին:

Օրն անցնում էր: Նրանք դեռ շարունակում էին իրանց խրախճանքը: Երբ Ռուբէն Քաջազնունին դուրս եկաւ փողոց՝ հագիւ էր կարողանում ոտի վրայ կանգնել, գլուխը պտտում էր, սիրտը խառնում: Մի կերպ կառք բարձրացաւ ու քթի առկին մոմալով՝ հրամայեց տուն քշել:

Ռուբէն Քաջազնունին սիրած չունէր, նա հէնց այնպէս ասաց: Դեռ աշակերտ ժամանակ նա օրւայ մեծ մասն անցնում էր աղջիկների յետևից քարշ գալով: Նա յաճախ էր ժամերով կանգնել օրիորդաց գիմնազիայի առաջ և սպասել աշակերտուհիների դուրս գալուն: Դեռ չորրորդ դասարանում նա մի սկանդալ առաջացրեց այդ հարցի շուրջը:

Հանգուցեալ հայրը մի թուլութիւն ունէր, չէր կարողանում խիստ լինի որդու վերաբերմամբ, թէև նրան չէր հաւանում, բայց սիրում էր, ուստի և Ռուբէնը փոքր ժամանակից սովորել էր փողերի հետ խաղալ: Թղթադրամները նրա համար նոյն էին, ինչ որ վեգերը այլ մասկան համար: Մայրը մանաւանդ չէ ասել չէր իմանում: Իսկ Ռուբէնի խաղերի մեծ մասը պատուում էր կանանց շուրջը: Տարեկան մի քանի անգամ սիրահարւում էր ու թողնում: Նա մէկի վրայ չէր կենդրոնանում. ով վերջին անգամ դուր էր գալիս, նրա վրայ էլ սիրահարւած էր համարում իրեն:

Մի քանի օր առաջ նա քաղաքային այգում տեսել էր օրիորդ Վիկտորիային, և նրա մէջ ծնւել էր մի հետաքրքրութիւն դէպի օրիորդը: Վերջին ժամանակներս նա ինչ-քիչ համոզւում էր, որ կտակը հաստատւելու է, ուստի և նրա ատելութիւնը դէպի Վարդը աւելի ու աւելի էր սաստկանում: Վարդի մասին դեռ շատ խուլ լուրեր էին պտտւում, թէ սիրահարւած է Վիկտորիայի վրայ: Այդ լուրը հասել էր և Ռուբէնի ականջին, և ահա նա մի քանի օր էր ինչ ծրագիրներ էր մտաւորում՝ տիրանալու օրիորդ Նադիանին և այդ ճանապարհով վրէժ լուծելու Վարդից:

Պարկած մահճակալի վրայ, հարբած, կիսագիտակցական դրութեան մէջ, նա բռնւած էր այդ զգացումներով: Մարմինն այր-

ւում էր ալքոհոլի ազդեցութիւնից: Նա երբեմն ձեռքերով պատին ու մահճակալին էր խփում: Ընկած էր ցնորքների աշխարհը: Հազար ու մի գայթակղեցուցիչ պատկերներ նկարւում էին նրա առաջ և աւելի ու աւելի գրգռում նրա ջղերը:

Միւս սենեակում տխուր նստած էր մայրը՝ Ասլի խանումը: Երբ Ռուբէնը տուն դարձաւ հարբած, մայրն զգաց, որ մի սարսուռ անցաւ իր մարմնով, կարծես, մէկը հարւածեց իր գլխին, աչքերի առաջ խաւարը պատեց: Մի տասը բոպէ չէր հասկանում, ինչ է կատարւում իր շուրջը: Ծառաները Ռուբէնին տարան իր սենեակը և պարկեցրին: Ասլի խանումը արտասաթոր աչքերով՝ գնաց որդու մօտ:

— Ռուբէն, այդ ի՞նչ ես եղել, — հարցրեց նա Ռուբէնը ոչինչ պատասխանել չը կարողացաւ, աչքերը բաց արեց, հայեց մօր երեսին մի այնպիսի հայեացքով, որը, կարծես, ասում էր, մայր, ինձ ազատ թող, ես ամաչում եմ: Աչքերը հորից խփւեցին, ցնորքները հորից շրջապատեցին: Ասլի խանումը հասկացաւ այդ հայեացքի իմաստը, հրամայեց, որ սրբիչ թացացնեն, ճակատին ձգեն: Ինքը անցաւ միւս սենեակը, նստեց այնտեղ, սպասելով, մինչև անցնի գինու ազդեցութիւնը: Նրա սիրտը այնքան էր տխուր, այնքան, որ կարծես, երկինքը քանդւելու էր գլխին: Նա գիտէր, որ այս

առաջին դէպքը չի, վերջինն էլ չի լինելու: Մի նախադգացում պատկուում էր նրա հոգում, թէ Կոստանդին Քաջագնունու ամբողջ աշխատանքը իզուր պիտի անցնի: Ռուբէնը բոլորը փչացնելու է: Ասլի-խանումի համար այդ մահից էլ վատ էր, աւելի լաւ կը լինէր, գետինը պատուէր, և ինքը ներս գնար: Ներս մտաւ Վարդանուշը: Նրա մազերը հիւսած չէին. նա սիրում էր այգւէս շըրջել, իսկ ճակատի վրայի պսակաձև խոպոպիքները, կարծես, հովանի լինէին նրա աչքերի վրայ: Նա լսել էր, որ եղբօրը տուն են բերել հարբած, և զիտէր, որ մայրը շատ տխուր կը լինի:

— Ո՞ւր է Ռուբէնը, մայրիկ:

— Քնած է, իր սենեակումն է:

Այլ ևս ոչինչ չըհարցրեց, հասկացաւ, որ մայրը թագցնում է իրանից, ուզում է, որ ինքը չը վշտանայ: Քիչ առաջ նա զբօսնում էր Լևոնի հետ: Ի՞նչ լաւ տղայ է, որքան խելօք, ուրախ, անկեղծ, իսկ նրա աչքերն ի՞նչ գեղեցիկ են, սև ու գեղեցիկ, մտածում էր նա Լևոնի մասին և գտնում էր, որ եթէ Լևոնն իր եղբայրը լինէր, կամ այնպէս լինէր, որ իր կեանքը նրա հետ անցնէր, շատ երջանիկ կը լինէր: Այդ միտքը նրան շատ քաղցր էր թւում: Մութն էլ ընկնելու վրայ էր: Արևի վերջին ճառագայթները խաղում էին պատուհանի ապակիների վրայ, նրանց ոսկեգոյն փայլ էին տւել, կարծես,

ճրագներ էին վառում ապակիների առաջ: Երկուսն էլ լուռ էին. մայրն սարսափում էր սև ապագայից, դուստրը երջանիկ կեանքի մասին էր երազում, իսկ միւս սենեակում Ռուբէն Քաջագնունին քիչ-քիչ ուշքի էր գալիս:

VI

Պարզ, վճիտ գիշեր էր: Փոքրիկ գետակը ձգւած էր ձորն ի վար. ջուրը, խըշ-խըշ, գալիս էր վերից, գալիս սարերից, փարւում ցից-ցից ժայռերի կրծքին, բայց անզօր, գլխիկոր գնում դէպի ցած, գնում դէպի գիւղ: Ձորը շատ նեղ չէր, բայց պնտառի խիտ-խիտ ծառերը իրար մօտեցել, իրար փաթաթել, հիւսել են, հիւսել: Իսկ նեղ կածանը բարձրանում է դէպի վեր, խեղդւում ծառերի սաղարթների տակ, անհետանում, էլի "յայտնում, բարակում ու անցնում ժայռի ու ծառի նեղլիկ արանքով: Լուսինը վերից փայլում է, փայլում, լողում անհունի անեղր ովկիանում: Ի՞նչ քաղցր է կաթնագոյն լուսով ծառերին նայել, նայել ու լսել, ինչպէս անտառում սոխակն է երգում, նրան ձայնակից առուն խոխովում: Իսկ սաւերները, երկար ու սև այդ ուրականները միշտ լուռ են, տխուր: Ո՛հ, ի՞նչ վիշտ, ի՞նչ զաղամիք կայ թագընւած այդ սևութեան տակ:

Բարձր լորենու տակ ցցւած ժայռի վրայ երկու մարդ են նստած: Մարդ, ի՞նչ մարդ, կրակի բոցեր: Բաբախուն սրտով հպւած

իրարու՝ խօսում են նրանք, կամաց շշնջում: Եւ նրանք համբուրեցին դողդոջուն շրթերով: Երկու սիրտ, թըկ-թըկ, բարախում են արագ:

Համբոյրը կրկնեց, նրանք լռեցին. նրանց հոգում մտքերը, յոյզերն էին խօսում, անձայն, անշշուկ:

Սէր, ի՞նչ ես դու. անտեսանելի մի կրակ: Սէր, դու գեղեցկութեան ստրուկն ես, բայց յաղթահարում ես տիրուհուդ: Սոխակը զարնւում է փշերին, արիւնոտւում, երգում քո դիւթիչ մեղեդին, տանջւում ու մաշւում:

Սէր, անյաղթ ես դու: Առիւծն ընկճւում է քո առաջ, խորհում, մտորում, արջը որճից դուրս վազում անհանգիստ, խոր-խոր ձորերի մթին անտառում փնտրում, որոնում: Տես, սարի մարդը, անյաղթ հովիւը, ինչպէ՞ս է երգում, ինչպէ՞ս մրմնջում իր սրնգի հետ. իսկ վեհ արծիւը սաւառնում է, պտտւում բարձր լեռների հպարտ գագաթին: Սէր, այդ դու ես, դու...

Սէր, ռւր ես դու: Տասնվեցամեայ գարուն պատանին, վերին շրթունքը սևիկ-սիրունիկ, նստած է անկողնում, սպիտակ շապկով, բացւած աչքերով: Քունը չի տանում: Փոքրիկ զարգարուն մահճակալի վրայ, ոսկեգոյն մազերը բարձերին փռած, նազելի աչքերը կիսով չափ խփած, նորատի, չքնաղ աղջիկը, թախիծը կրծքում, խոկում է, զգում: Անողորք ես, սէր:

Սպիտակ, մաքուր երկու աղաւնի քանձաւի սեմի վրայ գուրգուրում են, շոյում, համբուրւում: Նաշխուն թեւերով երկու թիթեռնիկ ծաղկից ծաղիկ են ուտոտաւում, սուզւում ծաղկանց բուրմունքների մէջ:

Այդ էլ դու ես, սէր:

Այո, Վարդն ու Վիկտորիան սիրում էին իրար:

VII

Ամառանոցի լայն պատուհաններով մի սենեակում, կէս գիշերին նստած է Վարդ Քաջազնունին: Քունը չի տանում: Սիրոյ վայելքից հարբած է, կարծես: Նա իրեն երջանիկ է զգում:

Անցնում էր մարդու կեանքի այն սակաւթիւ կարճ ժամերից մէկը, երբ մարդ հոգու ուժերով ուզում է կանգնցնել ժամանակը, որ չանցնի. մէկն այն ժամերից, երբ մոռացւում են արտաքին բոլոր կապերն ու հարցերը, և ուշադրութիւնը կենդրոնանում է իր ներքին աշխարհի, իր հոգու դուրաւի վիճակի վրայ, զգացմունքների, բաւականութիւնների վրայ: Ո՛հ, որքան քաղցր է այդ ժամը: Վարդը, գուցէ, կեանքում առաջին անգամն էր ունենում այդպիսի բոպէսներ: Մի ժամից աւել նա նստած էր մահճակալի վրայ, ոտները դէպի պատը մեկնած, անշարժ ու անխօս: Լուսինը թեքւում էր գէպի արեւմուտք: Փողոցում կառքերը սլանում էին դէպի կայարան: Ամառանոց եկողները սովորութիւն ունեն գիշերը կառքերով կայարան դնալ, որը ճանապարհորդելու, որը բարեկամին զիմաւորելու, որը հէնց զբօսնելու համար:

Վառքերի անընդհատ չխչխկոցները Վարդին հանեցին անշարժ դրուժիւնից: Նա վեր կացաւ ու սկսեց սենեակում ման գալ: Գնում էր, գալիս, և նրա ստւերն արագ-արագ մէկ ղէպի ձախ էր ընկնում, մէկ ղէպի աջ, նայեած լամպի որ կողմումն էր նա:

Վճռ, լաւեց երկաթուղու գնացքի սուլոցը: Վարդը կանգ առաւ, յիշեց, որ նամակ ունի, մտաբերեց, որ Ռուբէնը այսօր եկել է ամառանոց, որ երեք օր առաջ կտակի դատն էր նահանգական դատարանում: Նամակը Անահտից էր, քոյրը խնդրում էր Վարդին երկու օրով տուն դառնալ: Վարդն սկսեց մտքում կշտամբել իրան, որ ինքը, ահա մի ամիս է, տարւել է անձնական բաւականութիւններով: Նա վայրկեանաբար վճռեց՝ իսկոյն գնալ կայարան: Մի թղթի վրայ ինչ որ բան գրեց, ծրարեց, կանչեց ծառային, պատւիրեց տալ Վիկտորիային: Ինքն շտապով հագաւ ամառայ վերարկուն, դուրս եկաւ, նստեց առաջին պատահած կառքը և ուղիղ կայարան դիմեց:

Մարդկանց ահագին բազմութիւն կար ճանապարհին. ոմանք կառքով, ոմանք ոտքով, ուրախ-ուրախ, երգերով, խօսելով, բարձր քրքշալով ղէպի գիւղը, կամ ղէպի կայարան էին գնում: Կայարան հասնելուն պէս՝ Վարդը տոմս առաւ: Հէնց նոյն րոպէին խփեց երկրորդ զանգը: Նա շտապով վազոն

մտաւ: Խփեց երրորդ զանգը, հնչեց շոգեկաթ-սայի սուր սուլոցը, լաւեց նրա արձագանքը մօտակայ ձորակում, և գնացքը շարժւեց: Նոյն րոպէին Վարդի սիրտն սկսեց բարախել, նա մօտեցաւ պատուհանին: Կայարանի և գիւղի ճրագները վառւում էին ու աւելի ու աւելի փոքրանում, հետզհետէ ոչնչանում: Մի տխուր, թախծոտ զգացում բռնել էր նրա սիրտը, կարծես, Կեանքի կէսն ամառանոցումն էր թողել, և միւս մասը տխրում էր կարօտից: Նա կուգէր, որ գնացքը կանգնի, ինքը իջնի, յետ դառնայ, սակայն գնացքը սլանում էր ճեպընթաց ու խրոխտ, ամենեին չէր էլ մտածում իր միջի բազմաթիւ ճանապարհորդներից մէկի զգացմունքների մասին: Ծրագները չքացան, գիւղը ծածկւեց հեռաւորութեան մէջ, բայց Վարդը չէր հեռանում պատուհանից, նայում էր ղէպի այն կողմը, ուր թողել էր իր սիրածին, այն արարածին, որն ստիպեց նրան շեղւել գծած ճանապարհից, շարժեց նրա զգացումները, հոգու լաւերը:

Ռուբէն Քաջագնունին շատ էր զայրացած: Գործը տանուլ էր տւել, դատարանը հաստատել էր հանգուցեալ Կոստանդին Քաջագնունու՝ Ռուբէնի հօր կտակը: Ռուբէնը

այնքան փողերի մասին չէր մտածում, որ-
քան այն մասին, որ Վարդը յաղթող հան-
գիստացաւ։ Աւելի կատաղեց նա, երբ մի օր
Վարդից նամակ ստացաւ։ Վարդն ուղարկե-
լով նրան մի մուրհակ՝ խոստանում էր շա-
քունակել հօր պարտքերի հատուցումը։
Ռուբէնը զայրացած ձգեց մուրհակը սեղա-
նի վրայ։ Ուրեմն Վարդը դրանով ուզում է
ասել, որ ինքը երբէք պարտապան մնալ
չի կամենում, որ հասարակական փողերի,
գաղափարական գործի համար էր իր պայ-
քարը։ Լաւ, թող այդպէս լինի, մտածում
էր նա։ Զը կարողանալով համբերել և մա-
նաւանդ նեղելով շոգից՝ նա գործերի դե-
կավարութիւնը յանձնեց կառավարչին ու
պատրաստեց ամառանոց գնալ։ Թէ ուր,
նա վաղուց էր մտածել։ Նա գիտէր, որ
Վարդը Ղ. գիւղումն էր, որ նա այնտեղ է
գնացել յատկապէս Վիկտորիա Նազեանի
պատճառով, որ նրանք սիրահարւած են։
Ինքն էլ վճռեց գնալ այնտեղ։ Իր մըտ-
քում որոշ ծրագիր էր կազմել, Վարդին
մրցակից հանդիսանալու համար։ Երկու
նպատակ էր գծել նա, տիրանալ Վիկտո-
րիային և դրանով վրէժ լուծել Վարդից։
Առանց մօրը մի բան ասելու՝ նա եկաւ ա-
մառանոց, վարձեց ամենագեղեցիկ տներէից
մէկը։ Մի գործակատար միայն լուր տարաւ
տուն, որ Ռուբէնը ամառանոց է գնացել։
Այդ շատ վշտացրնց Ասլի-խանումին, որի

կարծիքով հօր մահւան առաջին տարին,
որդին տնից չըպիտի հեռանայ, բացի այդ,
նրա հեռանալով գործերը կը փչանան։

Սկզբում նա ամառանոցում տանից դուրս
չէր գալիս, հանգստանում էր իր հասկացո-
ղութեամբ։ Օրական բերել էր տալիս, մի
քանի տասնեակ շիշ գարեջուր, լիմոնաթ և
ժամը մի քանի անգամ խառնում էր այդ
երկու խմիչքները և անյազ ծաւաւով խը-
մում։ Մի քանի օրից յետոյ, սկսեց օրական
մում։ Մի քանի օրից յետոյ, սկսեց օրական
մի քանի անգամ շորերը փոխել և դուրս
գնալ, հիացնել ամբոխին, հրապուրել կա-
նաց, ընկերներ ճարել։ Այդպիսի մարդ-
կանց համար ծանօթներ ճարելը դժւար չէ,
տասը օրից յետոյ նա արդէն իր շրջանն
ունէր։ Ամեն տեսակ ընտանիք մուտք ու-
նենալ կարող էր նա. բաց սիրտ էր, հպարտ
չէր, ամեն տարազով հագնւել գիտէր, ամեն
տոնով խօսել և փող ունէր։ Նա կարող էր
փեսացու համարւել բարձր, միջին և սո-
րին ընտանիքների ակշիկներին։

Ամառանոցի կեանքի անհրաժեշտ կողմե-
րից մէկը հանդիսանում է ակումբը, որ
որոշ օրեր ժողովուրդը զւարճանում է ներ-
կայացումներով, գրական երեկոյթներով,
պարերեկոյթներով։ Սակայն ակումբին կից
միշտ գոյութիւն են ունենում երկու՝ մի-
մեանց բոլորովին հակառակ նպատակներով,
հաստատութիւն ևս։ Գրադարան-ընթեր-
ցարանը և խաղաթղթի սենեակն են դրանք։

Մի կիւրաքկի երեկոյ, երբ սովորաբար շատ մարդիկ են ակումբ գնում, որը պարելու, որը նայելու, որը ընկերներ, ծանօթներ տեսնելու,—Ռուբէնը շուտ հրաժարեց կանաչ սեղանից ու մտաւ դահլիճ, որը լիքն էր հանդիսականներով: Գազէ լապտերի լոյսի տակ, սպիտակ զգեստներով աղջիկները հրեշտակների էին նմանում: Բուրում էր անուշահոտ իւզերի հոտը: Գիմնագիտաներն ու գիմնագիստակաները, ուսանողներն ու կուրսիստակաները զոյգ-զոյգ սպասում էին նւագածութեանը: Ուրախ ծիծաղները թընդացնում էին դահլիճը: Բոլոր աթոռներն

Օրիորդ Վիկտորիան էլ էր այնտեղ: Վարդի գնալուց յետոյ, նա մի քանի օր տխուր էր և զբօսանքի չէր դուրս գալիս, բայց քիչ-քիչ հանգստացաւ, մանաւանդ, որ մի նոր նամակ ստացաւ Վարդից, որը մանրամասնօրէն բացատրում էր նրան իր յանկարծակիս վճռի պատճառը և իր զգացումները ճանապարհին: Նա մի քիչ բարակած էր հրեւում, Գոնէ աղպէս թւած Ռուբէնին, որի սուր աչքերը, կանաց վերաբերմամբ մանաւանդ, հազիւ թէ սխալէին: Հնչեց նազածութիւնը, և զոյգերը սկսեցին շարժել: Մի չաղլիկ ուսանող, համազգեստ հագած, բաւական ճարպկօրէն կառավարում էր պարը, Ռուբէնը մի ակնարկով նկատեց այդ, բայց առանձնապէս կանգ չառա՝ պարի թոյլ կողմերը գտնելու վրայ: Նա աշխատում էր մօտենալ Վիկտորիային, որը դահլիճի վերին ծայրին, բեմի մօտ նստած խօսում էր մի ուսանողի ու մի օրիորդի հետ: Ռուբէնը գեռ նրան չէր հասել, նկատեց, որ Վիկտորիան ու խօսակից ուսանողը հրապարակ մտան ու սկսեցին պարել: Վայսի ելեէջներին հետ ծածանւում ու ոլորասի ելեէջներին հետ ծածանւում ու ոլորասի պտոյտ ֆոֆուում էին դամանների ամառնային մետաքսեայ զգեստները: Կաւալերները:

ոտներն դոփեւնները, պարի կառավարչի հնչուն ձայնը նւագի ու պարի վայելչութեան հետ կազմել էին մի ներդաշնակութիւն: Ռուբէնի ուշադրութիւնը կենդրոնացել էր միայն Վիկտորիայի վրայ: Պարել էլ գիտէ, աւելի լաւ, մտածում էր նա: Քիչ-քիչ առաջ շարժելով նա արդէն կանգնած էր բեմի առաջ: Հնչեց վայլսի վերջին կտորը, և պարը վերջացաւ: Վիկտորիան շտապեց իր տեղը, որ պահպանել էր խօսակից օրիորդը:

— Հիանալի է, հիանալի, սքանչելի էք պարում,—ասաց օրիորդը:

— Դու էլ հաճոյախօսութեան ժամանակ գտար,—պատասխանեց Վիկտորիան, և երկուսն էլ քահ քահ ծիծաղեցին:

Ռուբէնը տեղումն էր, անշարժ, աչերը սեւեռել էր Վիկտորիայի երեսին: Օրիորդի երկնագոյն աչքերն աւելի էին խորահայեաց դարձել: Թափանցիկ ծովի նման էին ճրագի լոյսի տակ: Երիտասարդ տղամարդու սիրտը, այդ աչերին նայելիս, խորասուզում էր կապոյտ խորութեան մէջ: Սրտի ծփումը կապոյտ աչերում երանութեան ժամ է ծնում: Ռուբէնը մոռացել էր վրէժխնդրութեան ծրագրները, ուրիշ զգացումներ էին շարժել նրա մէջ: շւարեւ էր, չէր իմանում, ինչպէս սկսի իր ծանօթութիւնը Վիկտորիայի հետ: Նա չընկատեց, ինչպէս սկսեցին նւագել սաղանդարները, միայն թառի

կրակոտ նւագը, արեւիկան խոնդոտութեամբ, աւելի ու աւելի էր լարում նրա զգացումները: Երբ նւագախումբը կադրիլ սկսեց, Ռուբէնի մտքում մի միտք ծնեց՝ հրաւիրել Վիկտորիային պարելու, գուցէ չը մերժէ: Ռուբէնը հազնւած էր եւրոպական շորեր, ճաշակով, վերջին տարագով: Նա ուղղեց շորերն ու գլուխ տեց օրիորդին: Մի րոպէ Վիկտորիան չէր իմանում, ինչ պատասխանի: Հրաւերը կրկնեց, և Վիկտորիան, առանց երկար մտածելու, կանգնեց: Ուրախութեան մի հզօր հոսանք անցաւ Ռուբէնի սրտով: Նա ձախ ձեռքով գրկեց օրիորդի իրանը, աջով բռնեց նրա ձեռքը: Համապատասխան եղանակի տակաւ ու կառավարչի հրամանների շարժում էին գոյգերը:

— Դիտէք անշուշտ, օրիորդ, որ ես Ռուբէն Գալագնունին եմ:

Զարմանքի ու վախի մի շարժում արեց Վիկտորիան: Նա, կարծես, կամեցաւ դուրս գալ շրջանից, սակայն Ռուբէնը արտամաղիք չէր թողնելու նրան:

— Զարմանալու ոչինչ չկայ, անհանգիստ մի լինէք, չը կարծէք, թէ ես անքաղաքավարի կըլինեմ:

Լաւեց կառավարչի ձայնը, և գոյգերը քանդակեցին կտր շրջան բռնելու:

— Խնդրեմ, օրիորդ, չը գնաք, պարը մինչև վերջը տանենք:

Պարի երկրորդ մասում Ռուբէնն աւելի
ևս ամուր բռնեց նրա ձեռքը:

— Հաւատացէ՛ք ազնւութեանս, ընտա-
նեկան թիւրիմացութիւնը պատճառ չի
դաւնայ, որ ես Վարդի՝ հօրեղբօրս որդու,
սիրածին վատ նայեմ, չէ՛ որ դուք նրան
սիրում էք, մի՛ շփոթէք, խնդրում եմ, ես
ամեն ինչ գիտեմ...

Վիկտորիան շփոթեց, ոտքը սխալ դրեց:
Շատերը նկատեցին, որ պարը խանգարեց:
Երբ վերջացնելու նշանը տւին, Ռուբէնն
ասաց.

— Լիայոյս եմ, որ մեր ծանօթութիւնը
կը շարունակւի, ես այնքան էլ վատ չեմ,
որքան, գուցէ, ձեզ հաւատացրել են:

Վիկտորիան ամբողջ երեկոյ այդ մասին
էր մտածում: Իսկապէս նա շատ բաներ էր
լսել Ռուբէն Քաջազնունու մասին, չէր ու-
զի նրա բարեկամութիւնը, բայց հանդի-
պումն ու ծանօթութիւնը պատահեց այնքան
անակնկալ, որ նախօրօք ոչինչ մտածել չը
կարողացաւ: Երբ հասարակութիւնն սկսեց
ցրել, Ռուբէնը նորից մօտեցաւ Վիկտոր-
իային:

— Ես ձեզ կառքով տուն կը տանեմ, հա-
ւատացած եմ, որ չէք մերժի, չէ որ ես ձեզ,
համարեա, բարեկամ եմ:

Վիկտորիան պատրաստ էր մերժել, բայց
չը կարողացաւ ընդիմանալ: Նրանք կառք
նստեցին:

— Դուք իմ հարսն էք լինելու, ես ձեր
տաքըրը, հա, հա,— ծիծաղեց նա բարձրա-
ձայն:

— Թոյլ տւէ՛ք հարցնել, դուք ճրտեղից
էք հանել այդ եզրակացութիւնը, գուցէ բո-
լորովին սխալոււմ էք. վերջապէս միթէ
կարելի՞ է, լուրերի վրայ հիմնւած, անծա-
նօթ օրիորդին այդպիսի բան ասել:

— Այդ հարցին սպասում էի: Իմացէ՛ք,
որ ինձնից գաղտնի բան մեր ազգականների
շրջանում, եթէ կուզէք մեր քաղաքում, քիչ
է պատահում: Ես փաստեր չեմ յիշում, ո-
րովհետեւ գիտեմ, որ դուք հաւատում էք
ասածիս ճշմարտութեանը, բայց հակառա-
կում էք հէնց այնպէս, համեստութեամբ:
Սակայն անկեղծ խօսելը լաւ բան է: Ես
կուզէի, որ իմ մասին վատ բան չը մտա-
ծէք: Ես ձեզ վաղուց եմ ճանաչում, և որ-
քան դուք ինձ վատ կողմից, նոյնքան ես
ձեզ լաւ կողմից: Ես շատ էի ցանկանում
ծանօթանալ ձեզ հետ: Զէ՛ որ հարկաւոր է
մի մարդ, որ մեզ, այսինքն ինձ ու Վար-
դին, հաշտեցնի: Հաւատացէ՛ք, որ չէք զղջայ
ինձ հետ ծանօթանալու համար:

Վիկտորիան ինքն էլ չը գիտէր, թէ ին-
չու չի կարողանում նրան կանոնաւոր պա-
տասխան տալ: Մի տեսակ խեղճացել էր
նրա առաջ: Արդե՞ծք նրա մասին լսած շատ
վատ տեղեկութիւնները, թէ մեծատան որ-
դու ներկայութիւնն էր ազդում նրա վրայ:

Ռուբէնը շարունակում էր խօսել: Որքան խօսում էր, այնքան տաքանում էր: Նրա խօսքերը ազդում էին օրիորդի վրայ, որ մտածում էր. գուցէ սա այնքան էլ վատ չի, որքան պատմում են: Ո՞վ է իմանում, գուցէ թշնամութիւնը, անձնական ատելութիւնը, դէպի նրա հարստութիւնն ունեցած նախանձն է դեր խաղում այդ խընդրում: Երբ տուն հասան, Ռուբէնը քաղաքավարութեան ամենանուրբ ձեերով իջեցրեց օրիորդին ու մինչև դուռն առաջնորդեց նրան:

— Ո՞ւմ հետ էք ապրում, օրիորդ,— հարցրեց նա:

— Մօրս,— եղաւ պատասխանը:

— Բարի գիշեր, հաւատացած եմ, որ մեր ծանօթութիւնը կը շարունակենք:

— Բարի գիշեր, դէմ չեմ:

Բաց սիրտ տղայ է երևում, մտածում էր Վիկտորիան սենեակ մտնելիս:

Չը նայեած, որ Ռուբէնն արդէն մի քանի նստակներ էր ստացել կառավարչից, որը նրան քաղաք էր կանչում գործերի համար, բայց նա անտարբեր էր դէպի այդ գործերը, ուշ ու միտքը այդ ժամանակ կենդրոնացրել էր օրիորդ Վիկտորիայի վրայ: Քանի գնում էր, այնքան Ռուբէնը

մոռանում էր վրէժի զգացումը: Նա նոյնիսկ մի օր պատռեց Վարդի ուղարկած մուրհակը: Չէ որ նա Վարդին սիրում է, իմ սիրածիս սիրոյ համար թող հազարները կորչեն:

Նա երբեք մտածում էր երկար, շատ երկար: Նրան թւում էր, որ իր բազմաթիւ ծանօթութիւններից ոչ մէկը նրա համար այնքան երկար ժամանակ գուրգուրանքի, մտածմունքների առարկայ չէր եղել, որքան Վիկտորիան: Նա շատ կանաց ու օրիորդների էր հետամուտ եղել, սակայն նրանցով հետաքրքրւել էր լոկ ժամանցի, հաճոյքի, սեռական կրքերի մղումներով, եթէ յաղթանակել էր, լաւ, հակառակ դէպքում էլ ցաւ չէր զգացել: Սակայն շատ քչերը կարող էին խոյս տալ նրա հրապուրանքներից: Վիկտորիայի վերաբերմամբ նա ուրիշ տեսակի ցանկութիւն էր զգում: Նրան մօտ լինելը, նրա ձայնը լսելն ու լուռ նրա խոր աչքերին նայելն աւելի էին բաւականութիւն տալի, քան ուրիշ գիտաւորութիւններ, ուրիշ յոյգեր: Նրա գլխում սկսել էին ամբարւել զանազան ծրագիրներ ու ձեռնարկութիւններ: Ինչպէս անել, որ Վիկտորիան էլ իրանով հետաքրքրւի, դեռ աւելին, թողնի Վարդին և իրան սիրի: Ռուբէնին այդ թւում էր մի դժարին հարց, որի լուծման համար նա պիտի ուժեղ կոխմղէր: Երբեք նրան թւում էր, որ բաւա-

կան է հանդէս հանի փողերը, ծախսի հազարներ, տասնեակ հազարներ, և Վիկտորիան կը շլանայ փողի փայլից, Բայց չէ որ ինքն ուզում է, որ Վիկտորիան իրան սիրի և ոչ փողին: Նրան թւում էր, որ դրա համար այլ բան է հարկաւոր: Վարդը կրթած էր, ամուր կամք ունէր, հասարակական դիրք: Այս բոլորը բաւական է իդէալիստ աղջկան գրաւելու համար: Կանայք միշտ պարծենում են իրենց ամուսինների հասարակական դիրքով: Կանայց մէջ ահագին թիւ են կազմում և այնպիսիները, որոնք պաճուճանքները ամեն բանից գերադասում են: Սակայն Վիկտորիան առաջինների թւին է պատկանում, գոնէ այդպէս էր թւում Ռուբէնին:

Երբեմն Ռուբէնը գիշերները վեր էր կենում, հագնում ընտիր կտորներից կարած չէրկեսկան, երկար ծոպերով ոչխարենու գլխարկը ծածկում, գնում անտառ, ման գալիս մենակ, ապա գիւղ դառնում, անցնում այն փողոցով, ուր Վիկտորիան էր ապրում: Նա կանգնում էր պատուհանի առաջ, նայում լուսաւորած ապակիներին: Սակայն նրանք բարձր էին, և Ռուբէնը ոչինչ տեսնել չէր կարողանում, միայն մտքով էր ներս թափանցում և երևակայութեամբ պատկերացնում այն դիրքը, որի մէջ պարկած քնած էր Վիկտորիան, սպիտակ, անթիւ շապկի մէջ փաթաթւած, աչքերը կիսա-

խուփ, մազերը շող անցած: Մէկ նրա մտքով անցնում էր՝ ներս մտնել, ծռնել չոգել նրա գեղեցկութեան առաջ, ամբողջ կեանքն ու հարստութիւնը նրա առաջ դնել ու աւսել՝ այս բոլորը քեզ, միայն թոյլ տուր նայել քեզ, թոյլ տուր գէթ մի անգամ համբուրել: Նրա մտքերը ուրիշ, աւելի յանգուզն ծրագիրներով էլ էին զբաղւում. փախցնել Վիկտորիային, Գիշերւայ խաղաղութեան մէջ կառք բերել, դուրս քաշել նրան, դնել կառքի մէջ, նստել կողքին, գրկել ու փախչել հեռու, բարձրանալ լեռները, մտնել անտառների մէջ: Չէ որ ինքը փող ունի, անտառների մէջ, ամենքի բերանը ամենքին փող կը տայ, ամենքի բերանը փողով կը փակէ, թէ կառապանի, թէ ձիաւորի, թէ լեռան հովիւ: Այս բոլորն իրականացնելու համար դորձնական ճանապարհի չէր դիմում, այլ մտորում էր, մտորում, զգում ու տանջւում:

Երբեմն այդ աղղեցութեան տակ սկսում էր խմել: Այդ ժամանակ նա աւելի էր տաքանում ու իրան կորցնում: Դուրս էր գրնում փողոց, վարձում պատահած բոլոր կառքերը և հանդիպած ծանօթներին կառք նստեցնում, հրամայում, սրարշաւ քշել գէպի կայարան, ապա գէպի գետ: Եւ այդպէս շարունակում էր մինչև յոգնածութիւն, ապա գալիս էր տուն և պարկում դառանցանքների մէջ:

Նրա ամենամեծ բաւականութիւնը պար-

երեկոյթներն էին: Նա այժմ քիչ էր խաղում և մեծ մասամբ տանուլ էր տալիս: Պարբերեկոյթների ժամանակ խաղի մասին չէր մտածում: Ամեն անգամ ակումբ էր գալիս նոր շորերով, սպիտակ մանիշկաւոր փողակապով, թանկագին վարատնիկով: Պարահանդիսում միայն հնարաւորութիւն ունէր տեսնել Վիկտորիային, որը նրանից այլ ևս չէր քաշուում և քիչ-քիչ այն համոզմունքն էր կազմում, թէ հաւանօրէն Վարդն իր սովորական սառնութեամբ Ռուբէնի հոգին չի ըմբռնում, և այդ պատճառով էլ պատանի հասակի արհամարանքը քիչ-քիչ թշնամութեան է փոխել: Նա մտքում որոշում էր, անպատճառ Վարդին ու Ռուբէնին հաշտեցնել: Ռուբէնն ու Վիկտորիան ամեն երեկոյթի միասին էին պարում: Չէ որ նա էլ Քաջազնունի էր: Շատերը այդ երեկոյթի վրայ զարմանում էին և անպատճառ Ռուբէնի յարաբերութեան մէջ վատ միտում տեսնում: Երբեմն ընկերները նրան ակնարկում էին այդ մասին, բայց Ռուբէնը միշտ սառնութեամբ էր պատասխանում: Ընկերները զարմանում էին, որովհետեւ Ռուբէնը սիրում էր խօսել կանացի վրայ տարած իր յաղթութիւններից, իր սիրային արկածներից: Այս մէկի վերաբերմամբ նա լուռ էր, ոչ միայն այդքան, այլ և՛ յաճախ բարկացած աչքեր էր ցոյց տալիս նրանց, որոնք վատ կարծիքներ էին յայտնում իր և Վիկ-

տորիայի յարաբերութեան մասին: Մի անգամ նա մի ծանօթ ուսանողի քիչ էր մնում վերաւորի արժաթապատ դաշոյնով, որ միշտ կրում էր իր հետ:

Այն, այդպէս է սէրը: Նա կեանքի արիւնն է, զգացմունքի թափը: Հեզը հերոս է կրտում, ուժեղը խոնարհւում նրա առաջ, խելօքին գլխահան է անում, ամբարտաւանին ճանապարհի բերում: Նրա բնակարանը մարդկային սիրտն է, արձագանքը անտառի խորքում, բարձրաբերձ կաղնու սնամէջ բնում: Անդունդոտ ձորի մութ քարանձաւում քամիները նրա համար համերգ են կազմում, ծմակների աղբիւրակների փրփրուն ակներից խողովող ջուրը նրա համար ողջոյն է բերում անտեսանելի յաւերժահարսից:

Անցաւ մի ամիս, բայց Վարդը դեռ չէր վերադարձել: Վիկտորիան անհանգիստ էր, վերջերս նոյնիսկ նամակ չէր ստանում: Վիկտորիան գիտէր, որ Վարդը գործերով է զբաղւած, մանաւանդ կտակի հաստատութիւնից յետոյ: Սակայն սիրող սրտի առաջ բոլոր հոգսերն ու գործերը մոռացւում են, զգացմունքները լուցնում են միտքն ու տրամաբանութիւնը և ենթարկւում յուզող ու քնքոյշ բաւականութիւնների՝ զուրկ ինտերեսներից ու կեանքական հաշիւներից: Վիկ-

սորիան կարծում էր, որ եթէ իրանք սիրում են միմեանց, ուրեմն Վարդը պիտի չը հեռանայ: Դեռ հարկաւոր է, որ իրանք իրար մօտ լինեն, հոգով ու մտքով իրար հետ ձուլեն: Ինքը պատրաստ է իր ամբողջ կեանքը, ապագան նւիրել Վարդին, ուրեմն նոյն էլ Վարդը պիտի անի: Նրան թւում էր, որ եթէ այդպէս չը լինի, ինքը շատ կը տանջւի, ամբախտ կը լինի:

Միւս կողմից նոր աշխարհ էր բացւել Վիկտորիայի առաջ: Այդ Ռուբէն Քաջագնունու աշխարհն էր, նրա շրջանը, նրա հոգեկան կեանքը: Վիկտորիային թւում էր, որ Ռուբէնը, և ընդհանրապէս նրա կերպի մարդիկ, հետաքրքրական անձեր են, որ նրանք իրանց յատուկ հակումներն ունեն, հոգեկան որոնումները, որ նրանց ներքին աշխարհը շատ բարդ է ու հետաքրքիր: Ուշագրաւ կողմը, որ աչքի էր ընկնում Ռուբէնի մէջ, այդ, ըստ Վիկտորիայի, նրա հոգու պարզութիւնն էր, գգացմունքի խորութիւնը: Ռուբէնը թաղցնել չը գիտէր, թէ և դուրի չէր մտածողութիւնից, այն էլ խելօք մտածողութիւնից, իսկ հոգու պահանջի համար նա պատրաստ էր զոհել իր ամբողջ կայքն ու ստացւածքը: Մեծ է Վարդը, խելօք, մտածում էր Վիկտորիան, բայց Ռուբէնը և նրա տարբերութիւնն այն է, որ նա ընդունակ չէր սրտի պահանջները կեանքի պահանջներից, հասարակական հարցերից

գերադասել, յամառ է իր ծրագիրները մէջ, յանդուգն իր ձեռնարկութիւններով: Նա ընդունակ է խորը սիրելու, փաստ նրա տանջանքները իր սիրոյ պատճառով, բայց ընդունակ չէ ամբողջապէս սիրոյն նւիրւելու, սիրածին երջանկացնելու: Այս մտքից Վիկտորիան սարսուռւմ էր: Ռուբէնն ընդհակառակն էր: Առանց հասարակական կեանքի, առանց գործիչ և առաքեալ լինելու կոչումն զգալու, ապրում է լոկ իր համար իր ներքին եսի համար, ոչ խանութների ու կալւածների, ոչ տոկոսաբեր թղթերի համար, այլ զուտ իր սրտի համար: Մէկը եսական է իր ծրագիրներով, միւսը իր գգացումներով: Վիկտորիան վերջին օրերս շատ էր մտածում այս հարցի շուրջը. մէկ նա կարծում էր, որ այս երկու տիպերի խառնուրդը կարող է կատարեալ լինել, մէկ էլ թւում էր, որ իւրաքանչիւրը իր տեղում կատարեալ է:

Վիկտորիան կոյր չէր, լաւ տեսնում ու զգում էր, որ Ռուբէնը դէպի ինքը սառնասիրտ չէ: Նա նկատում էր, ինչպէս ամեն անգամ ձեռք բռնելիս Ռուբէնի բազուկը դողդողում էր, ինչպէս նա երբեմն ապշած հայեացքով, սաւառնող մտքով, երկար նայում էր իր երեսին և երբ ինքը, այդ նկատելով, նայում էր Ռուբէնի երեսին, վերտեղիւմ, նայում էր Ռուբէնի երեսին, վերջինս մինչև ականջները կարմրում էր և քիչ էր մնում, արցունքները թափւեն նրա

աչքերից: Դեռ աւելին, նա պարելիս, համարեա, լսում էր Ռուբէնի զարնւող սրտի ձայնը, իսկ երբ առաւօտները, կամ երեկոյեան ուշ ժամերին մօտենում էր պատուհանին, տեսնում էր, որ Ռուբէնը աչքերն ապակիներին յառած՝ նայում է վերեւ: Անպայման, Ռուբէնը, եթէ դեռ սիրուց չէր գժեւել,— նրա պէս մարդիկ ընդունակ են դրան,— գոնէ կլանւած էր դրանով: Վիկտորիան այս մտքից էլ սարսափում էր: Ռուբէնի մասին պատմում են, որ նա խաբել է բազմաթիւ օրիորդների ու տիկիներին, որ նա առաձին շնորհք ունի կանաց հրապուրելու ու թողնելու: Վիկտորիան այս գիտէր: Բայց այդպիսի տղամարդիկ ընդունակ են նաեւ կանգ առնելու մէկի վրայ, որն այնուհետեւ դառնում է նրանց իղէալը, սրտի թագուհին, որի համար նրանք կեանքներն են տալիս: Գուցէ այսպիսի մի դէպք է նաեւ Ռուբէնի այս քայլը:

Վիկտորիան թէ ձորում առակի կողքին նստած ժամերին, թէ անտառում հաստաբուն, սաղարթախիտ ծառերի հովանու աակ և թէ մանաւանդ երեկոները մենակ սենեակում այս հարցի մասին էր մտածում: Նա մոռացել էր ինքնակրթութեան համար դրձած ծրագիրները, թէ նորից շարունակելու փափազը և անձնատուր էր եղել միայն իր զգացումներին: Դէպի Վարդն ունեցած իր սկզբնական յարգանքը փոխւել էր ջերմ

սիրոյ, միւս կողմից, դէպի Ռուբէնն ունեցած արհամարհանքն ու ատելութիւնը իսպառ չքացել էին, և նրա սրտի գաղտնի անկիւններում ծագել էր դէպի նա մի համակրութեան զգացում, որն արագ աճում էր: Նա վախենում էր, որ համակրութիւնը սիրոյ փոխի, և որովհետեւ երկու սէրը անհաշտելի են, նրանք կը բախւեն, ուստի ինքն ստիպւած կը լինի ընտրութիւն անել երկու Քաջագնունիների մէջ: Որին կընտրի, չէր համարձակւում մտածել: Նրա մէջ զգացմունքները քիչ-քիչ գերակշռում էին դատողութիւններին:

Այս բոլորը նրան ահարկու ու սոսկալի էր թւում:

VIII

Անահիտ Բաջազնունին ամառանոց չը գնաց: Մայրն այդ չէր կամենում: Նա գնալ չէր կարող, Ասիլ-խանումին սգուր մենակ թողնել չէր կարող, բայց Անահտից բաժանել էլ չէր ուզում: Հասած աղջկան չի կարելի անմայր օտար տեղ թողնել. ո՞վ է իմանում, ինչ կարող է պատահել, մտածում էր տիկին Վարվառէն: Անահիտն էլ հնազանդ աղջիկ էր:

Քաղաքումն էր և Արշակ Բահաթրեանը, որը շարունակում էր սիրել Անահտին: Նրա սէրը խանդոտութեան էր հասել: Մրցակից տղամարդ չը կար, նա ուղղակի տիկին Վարվառէին էր խանդում: Այո, տիկին Վարվառէն էր նրա հակառակորդը, որ իր մայրական եսական սիրով կաշկանդել էր Անահտին, զրկել նրան ուրիշին սիրելու ազատութիւնից:

Համբերութիւնը հատել էր: Նա մի գաղտնի տեսակցութեան ժամանակ Անահտին յայտնեց, որ ինքն անձամբ պիտի գայ, տիկնոջից խնդրի Անահտի ձեռքը: Այս խոստումը նա կատարեց, բայց մերժում ստացաւ:

— Վարժապետը գլխիցս անպակաս պիտի

լինի, չէ, իմ Անահտին վաճառականի կը տամ. թող ինժեներն ու փաստաբանը նրան չուզեն, բայց ես նրան կը տամ ոռճիկաւոր գործակատարի, վարժապետի չեմ տալ...

Երեք ամբողջ օր Արշակ Բահաթրեանը իրան կտրատում էր, եփւում ներսից, խորովւում: Երեք օրից յետոյ նա գնաց Քաջազնունիների պարտէզը, կանչեց Անահտին: Նրանք կէս ժամ լուռ նստեցին: Ապա Անահիտը լաց եղաւ: Արշակը առաջարկեց Անահտին՝ թողնել մօրը, տունն ու տեղը և փախչել:

— Փախչինք, այո, փախչինք հեռու, գիւղերը, միասին կաշխատենք ու միասին մեզ համար երջանիկ կեանք կը ստեղծենք: Ի՞նչ կայ այստեղ, քանդիր մօրդ թանկագին կապանքները, եկ ինձ հետ, ես եմ քեզ կեանք տալու և ոչ նա...

— Ո՛հ, ինչ ես ասում, Արշակ, ես կը մեռնեմ, ես կը խելագարւեմ: Ես քեզ սիրում եմ... բայց... բայց ես չեմ կարող փախչել, ես մամայիս չեմ կարող թողնել, առանց նրա օրհնութեան, առանց նրա համաձայնութեան ես ամուսնանալ չեմ կարող...

— Ուրեմն դու ինձ չե՞ս սիրում, չե՞ս սիրում, հա՞...

— Ես քեզ սիրում եմ, սիրում եմ, բայց փախչել չեմ կարող... ինձ կանարգեն, ինձ կը թքեն, կը մրեն, իսկ մամաս, անմխի-

թար, տանջւած մամաս... Նա սև օրեր շատ է տեսել, դարձեալ սեպնեմ նրա օրերը, չէ, աւելի լաւ է ես մեռնեմ...

— Ձեռ գալիս, հա՛, չես գալիս...

Անահիտը չըպատասխանեց:

— Էլ ինձ չես տեսնի,—ասաց Արշակը:

Եւ նա գունատւած, յուզւած բռնեց Անահիտի ձեռքը, համբուրեց ու գնաց: Անահիտը մի սիրտ մաշող ճիչ արձակեց ու ընկաւ խոտերի վրայ: Արշակն անցաւ պարտիզով, դռան առաջ մի անգամ էլ յետ նայեց, ապա փողոց դուրս եկաւ: Թէ ուր էր գնում, ինքն էլ չը գիտէր:

Անահիտն ուշքի գալուց յետոյ տուն դարձաւ և դողդոջուն ձեռքերով նամակ դրեց Վարդին, որ ամառանոցից գայ: Ամբողջ օրը նա սենեակից դուրս չեկաւ: Երեկոյեան ճրագի տակ անգամ մայրը նկատեց, որ Անահիտը շատ գունատ է, աչքերի տակ կապտած է, կոպերը կարմրած, գէմքը տըխուր: Մօր անհանգիստ հարցերին նա մի կարգին պատասխան չը տւեց: Տիկին Վարվառէն ամբողջ գիշերը մտածում էր Անահիտի վշտի գաղտնիքն իմանալու համար:

Երբ Վարդն եկաւ, այլ ևս անելու բան չէր մնացել: Երկու օր առաջ Արշակ Բահաթրեանին ազատել էին ինքնասպանութեան փորձից: Նրան, իբրև թէ, համոզել էին, որ

չարժէ ինքնասպան լինել մի աղջկայ համար, որն ընդունակ չէ հակառակել մօրը և առնել իր սիրածին: Նա խօսք էր տւել, այլ ևս ինքնասպանութեան փորձ չանել, բայց որպէսզի Անահիտին չըտեսնի, և վէրքերը նորից չը նորոգեն, թողել, հեռացել էր Ա. քաղաքից երկար ժամանակով, գուցէ և ընդմիջտ:

Երբ Վարդը քաղաք հասաւ, օրւայ նորութիւնը Բահաթրեանի ինքնասպանութեան փորձի և քաղաքից հեռանալու լուրն էր, որ զանազան վարիանտներով պտտւում էր մարդկանց մէջ: Վարդը դիմեց ուղիղ դէպի տուն և տանը մենակ Անահիտին գտաւ: Եղբօրը տեսնելուն պէս՝ Անահիտը լաց եղաւ և հեկեկալով պատմեց նրան իր դարդը: Վարդը նրան նստեցրեց իր մօտ, սկսեց մխիթարել:

— Դու մամայի համար մեծ զոհաբերութիւն ես արել, այդ ուղղակի անբնական է, ուղիղ ճանապարհը երիտասարդին ընտրելն է և ոչ ծերացած մամային:

— Ո՛չ, ոչ, Վարդ ջան, ես կը տանջւեմ մամայի համար, սև շորեր կը հագնեմ, միշտ կարօտով կը յիշեմ Արշակին, նքա պատկերը հոգուս մէջ կը պահեմ, սրտով կը սիրեմ, բայց առանց մամայի համաձայնութեան ամուսնանալ չեմ կարող:

Երբ Անահիտը դադարեց լալուց, հան-

զըստացաւ, Վարդը պարտէզը մտաւ: Ճանապարհին նրան պատահեց Մնօն, որ դարձեալ աշխատում էր: Վարդին տեսնելուն պէս՝ նա կանգնեց ու, գլխարկը հանելով, բարեկեց:

— Ապրեն, ծերունի, որքան մեծանում ես, այնքան աշխատելու եռանդն աւելանում է:

Պարտէզը մանրամասն դիտելուց յետոյ, նա գնաց հօրեղբօր տունը, ուր գտնւում էր մայրը: Առաջին անգամն էր նա այդպէս հանգիստ ու վստահ գնում այդ տունը: Ռուբէնը տանը չէր, Ասլի խանումը իր կողմն էր, երկուսի էլ յաղթանակն էր եղել կտակի հաստատմամբ: Արեւ մտնում էր, երբ նա բարձրացաւ գեղեցիկ տան երկրորդ յարկը: Անցնելով ճոխ կահաւորւած դահլիճով՝ մտաւ Ասլի-խանումի սենեակը: Տիկին Վարվառէն և նա զրոյց էին անում: Երկու այրիները զրկաբաց ընդունեցին նրան, համբուրեցին և շատ ուրախացան: Այդ երեկոյ Վարդը նրանց շատ սիրալիր երեւաց: Հակառակ իր սովորութեան նա երկար նըստեց, նրանց հետ մանրամասն զրոյց արեց, խօսեց կտակի, Բահաթրեանի մասին: Ասլի խանումը ընտիր քաղցրաւենիներով պատուեց նրան: Նա պատրաստուում էր դուրս գնալ, երբ եկան Լեոնն ու Վարդանուշը, երկուսն էլ ուրախ, աշխոյժ, մի մի գիրք ձեռքերին: Վարդը համբուրեց երկուսին էլ: Նա եղբօրը շատ էր սիրում:

— Ահա երկու Քաջապնունիներ, սր ապրում են շատ համերաշխ ու գուցէ բախտաւոր, միւսներն այդպէս չեն դժբախտաբար,—ասաց նա, և բոլորն էլ հասկացան, թէ նա ինչ է ասում: Մի քիչ նրանց հետ խօսելուց յետոյ՝ Վարդը դուրս գնաց:

Մի ամսից աւել նա զբաղւած էր զանազան գործերով: Դպրոցի շինութեան նախագիծ էր կազմում, փողերի մասին էր հոգում:

Քաղաքի գործերի համար մի պատգամաւորութիւն պիտի գնար մայրաքաղաք: Ընտրութեան ժամանակ նրա օգտին ևս աշխատում էին, և, ի զարմանս բոլորի, ամենից շատ սպիտակ քէ է նա ստացաւ: Մի քանի օրից յետոյ նա մեկնելու էր, բայց որոշել էր գոնէ երեք օր ֆեալ Ղ. ամառանոցում: Վիկտորիայի կարօտը տանջում էր նրան:

Երբ գնացքը Ղ. կայարանին մօտեցաւ, Վարդի սիրտն սկսեց բաբախել: Նա գլուխը դուրս հանեց պատուհանից: Ահա երեւացին կայարանի լապտերները, ահա գիւղի պատուհանների ճրագները: Իսկ կուրծքը, թըկ-թըկ, զարկում էր կրծքի վանդակին: Վե՛հ, սուկեց և կանգ առաւ գնացքը: Մարդիկ խառնեցին իրար: Վարդը վերաբերուն ձգեց

վրան ու շտապով ցած իջաւ: Մարդկանց ահագին բազմութիւն կար այնտեղ: Առանց շրջապատին ուշ դարձնելու՝ նա ընկաւ ամբոխի մէջ: Վիկտորիային էր որոնում: Այստեղ կը լինի, անպատճառ եկած կը լինի, մտածում էր նա: Սխալած չէր, Վիկտորիան էլ նրան էր որոնում: Գնացքը կանգնեց թէ չէ, նա թողեց զրուցընկերներին ու դէպի վագոնները վազեց: Խենթի պէս էր վազվզում: Առաջ Վարդը նրան տեսաւ և շտապեց դէպի նա: Նա ուժեղ շարժումով բռնեց նրա ձեռքը: Վիկտորիան ցնցւեց, մոռացաւ օտար մարդկանց ներկայութիւնը, նրանք գրկախառնւեցին ու համբուրեցին: Երբ կառք նստեցին, երկուսի սիրտն էլ բաբախում էր, երկուսն էլ լարւած էին ներքին յուզումից: Կառքն արագ դէպի գիւղն էր սլանում:

Ռուբէն Քաջնունին էլ էր կայարանում: Նա հեռու-հեռու պտտւում էր Վիկտորիայի շուրջը: Տեսաւ նրանց համբուրւելը, գրկախառնւելը, սլացող կառքը: Նախանձի մի ուժգին զգացում պաշարեց նրա հոգին, կարծես, մի օձ սկսեց խայթել նրա սիրտը: Ատամները կրճռւում էր, բայց ձեռքին ճար չըկար: Էլ ի՞նչ պէտք են հազարները, տասնեակ, հարիւր հազարները, երբ ուրիշն այդպէս խլում է իր սիրածին, վայելում է նրա սէրը, մտածում էր նա: Մի զարմանալի կատաղութիւն էր թափւել նրա

վրայ, նա ցեւքերը տրորում էր, օդի մէջ շարժում: Մէկ մտքով անցնում էր՝ գնալ, մտնել Վարդի սենեակը, նրանք անշուշտ այնտեղ են, խել նրա ձեռքից Վիկտորիային, եթէ ընդիմանայ, սպանել, առնել Վիկտորիային, փախչել հեռու մարդկանց աչքերից ու ամենքից գաղտնի վայելել նրա քաղցրութիւնը, որ ոչ ոք չըտեսնի, ոչ ոք չըխլի: Հազար ու նման մտքեր ունէր իր գլխում, բայց վերջնական եզրակացութեան չէր գալի:

Հետզհետէ խփեցին բոլոր զանգերը, սուրիչը սուրեց, գնացքը շարունակեց իր ճանապարհը: Նրա երեք աչքերը սարսափ էին տարածում ամենուրեք և հրէշային կերպարանք ունէին խաւարում: Մարդիկ սկսեցին ցրւել, կայարանը քիչ-քիչ դատարկեց: Իսկ Ռուբէնը դեռ նստած էր փայտէ նստարանի վրայ: Վերարկուն ուսից ընկել էր, օդն էլ բաւական խոնաւ էր: Նա երբեք ձեռքը ամուր խփում էր նստարանի չոր փայտին: Ցուրտը քիչ-քիչ բռնեց նրա մարմինը, նա սթափւեց ու, քնից նոր վերկացածի պէս, մոլոր քայլերով գնաց դէպի բուֆետ: Մի քանի բաժակ օդի խմելուց յետոյ՝ դուրս եկաւ ու կառք կանչեց: Սակայն կառք չը կար: Բոլորը գնացել էին, մի խորհրդաւոր լռութիւն էր թագաւորում: «Կառք», կանչեց նա նորից, բայց նրա պատասխանն եղաւ խուլ արձագանքը՝ միտք կայ ձորում:

Արիւնը խփեց նրա գլուխը, նա կանչեց կայա-
րանի ծառայողներին մէկին, տւեց մի ար-
ծաթէ դրամ և խնդրեց կառք բերել, իսկ
ինքը նստեց սանդուղքի սառը քարի վրայ
ու սպասում էր: Կէս ժամաչափ նա այդ-
պէս մնաց: Երբ կառքն եկաւ, նա արդէն
մարմնի մէջ մի սարսուռ էր զգում: Նստեց
ու հրամայեց արագ տուն հասցնել: Հետե-
ւեալ օրը նա հիւանդ էր, ընկղմած զա-
ռանցանքների մէջ: Բժիշկը ամբողջ օրը
նստած էր մօտին:

Վարդն ու Վիկտորիան ամբողջ օրը միա-
սին անցրին, ոչ միայն այդ, այլ և հետե-
ւեալ երեք օրը իրարից չը բաժանեցին:
Համբոյրների, փաղաքշանքների, քաղցր
վայելքների ու երազանքների օրեր էին
դրանք: Երբ մթնեց վերջին օրը, մի թա-
խիժ ներս սողաց Վիկտորիայի սիրտը: Նա
չէր ուզում, որ Վարդը գնայ, ամիսներով
ուշանայ: Եթէ իմս է, ինձնից չը պիտի
հեռանայ, անցնում էր նրա մտքով:

— Ա՛խ, սրբան կուղէի, որ դու չըգնաս,
ինձ մօտ մնաս, որքան երջանիկ կը լինէի,—
ասաց նա Վարդին, երբ վերջինս արդէն
կայարան գնալու պատրաստութիւն էր տես-
նում:

— Ո՛չ, գործերը թողնել չեմ կարող:
Յանցանք է, անձնական բաւականութիւն-
ների համար հասարակութեան հարցերը
անուշադրութեան մատնել...

— Սէրը լոկ բաւականութիւն չի, նա
մարդկային կեանքի ամենամեծ հարցն է,
հոգու ամենաթանգ շարժումը, նրա առաջ
շատ գործեր պիտի նսեմանան:

— Ո՛չ, գործերը կեանքիս կէսն են:

— Ո՛չ,—մի հառաչանք դուրս թռաւ
Վիկտորիայի կրծքից: Նրա ախանջին շատ
սարսափելի հնչեց այդ «ոչ»-ը: Վարդը
ուշադրութեամբ նրան նայեց, բայց ոչինչ
չասաց: Երբ կառք նստեցին կայարան գնա-
լու, Վիկտորիան աւելի ևս մոայլեց: Վար-
դը տոմս առաւ, բռնեց Վիկտորիայի ձեռ-
քից ու սկսեց ճեմել սալայատակի վրայ:
Նա աշխատում էր ուրախ ձեւանալ և յու-
սադրում էր Վիկտորիային: Բաժանեցին
երկուսն էլ դողդոջուն շրթունքները իրար
կպցրին: Գնացքը շարժեց: Մէկը վագոնում
էր մտամոլոր, միւսը՝ սալայատակի վրայ:
Վիկտորիային թւաց, որ Վարդը թռաւ հե-
ռ՞ա շատ հեռ՞ա, որ նա բաժանեց նրանից
երկար ժամանակով, թվէ իմանում, գուցէ
և ընդ միշտ: Ծանր սրտով տուն դարձաւ
ու հանգստացրեց վրդոված մօրը:

Անցան մի քանի օրեր: Վիկտորիան հո-
րից սկսեց երեւալ հասարակութեան մէջ:
Բայց նա Ռուբէնին չէր հանդիպում, և
այդ նրան շատ էր զարմացնում: Նրա ա-
խանջին հասաւ, որ Ռուբէնը հիւանդ է,

մըսել է մի օր կայարանում: Ուրիշ ման-
րամասնութիւններ էլ իմացաւ, և մէկ-մէկ
յիշելով Վարդի գալու օրւայ պարագաները,
սկսեց կասկածել, որ Ռուբէնը այդ օրն է
մըսել, և որ անպատճառ Ռուբէնը իր հա-
մար է եկել կայարան ու, տեսնելով իր ու
Վարդի յարաբերութիւնը, նա մոռացել է
իրան, տարւել է հոգեկան յուզումներով,
և այդ պատճառով է եղել դժբախտութիւնը:
Նրա բնաւորութեանը յարմար էին այդպի-
սի դէպքեր: Որքան շատ տեղեկութիւններ էր
ստանում, այնքան համոզում էր իր կար-
ծիքների մէջ: Այս հանգամանքը որոշ ազ-
դեցութիւն էր անում Վիկտորիայի վրայ,
համակրութեան զգացումը աւելի մեծանում
էր, աւելի քնքշանում:

Անցան մի քանի օրեր էլ: Մի երեկոյ
ակումբում Վիկտորիան պատահեց Ռուբէ-
նին: Երբ հեռւից նկատեց, զգաց, որ սիրտն
իրան թափ տւեց: Ահա նա, որ տանջւել է
իմ պատճառով, անցաւ Վիկտորիայի մըտ-
քով, և նրա հոգին բռնւեց կարեկցութեան
զգացումով: Ինչպէս պիտի վարձահատոյց
լինել: Ռուբէնը նիհարել էր, գունատւել,
բայց աշխուժութիւնը չէր կորցրել: Նա էլ
Վիկտորիային էր ուրոնում:

— Բարե՛ ձեզ,—ապաց Վիկտորիան, լսել
եմ, որ հիւանդ էք, ուրախ եմ, որ առող-
ջացել էք, գիտէք, ուզում էի տեսնելու գալ,
բայց...

— Բայց վախեցաք գալ, հիւ է իմանում,
ինչ կասէին: Գուցէ «նրան» դուր չըգար:

— Ես ոչ ոքից չեմ քաշւում, անշուշտ
այս ապացուցանելու առիթ կը լինի:

Երկուսն էլ մի քանի րոպէ լուռ էին,
չէին կարողանում որևէ խօսակցութիւն
սկսել:

— Կը կամենաք պարել,—աղերսալի եղա-
նակով հարցրեց Ռուբէնը:

— Եթէ ցանկանում էք, չեմ մերժի, սա-
կայն չէ որ դուք նոր էք առողջացել:

— Ոչինչ, կան րոպէներ, երբ կեանքեր
են զոհւում: Զոհաբերութիւնը, եթէ ներքին
մղումից է, քաղցը է:

Նւագում էին կիտայեանկա, և զոյգերը
յորդոր քայլերով կաքաւում էին: Կաւալեր-
ների ու դամանների համաչափ տատանում-
ները ու ուտոստումները կենդանացրել էին
դահլիճը: Ռուբէնն ու Վիկտորիան էլ էին
շարժւում նրանց շարքերում: Ռուբէնի գու-
նատ դէմքը լամպերի լոյսի տակ աւելի
դժգոյն էր երևում: Վիկտորիան անտարբեր
չէր նայում այդ դէմքին, նա իր համար
աբաժ զոհաբերութեան հետքերն էր տես-
նում այդ դժգոհութեան մէջ:

Երբ գիշերւայ ժամը տասներկուսին Ռու-
բէնը կառքով դարձեալ Վիկտորիային տուն
էր ուղեկցում, վերջինս հարցրեց,

— Ի՞նչպէս են ձեր գործերը, պարոն
Ռուբէն:

— Ո՞ր գործերը: Իմ գործերը բաժանուում են երկու կարգի. իմ հոգու գործերը, ուրախութիւնը, բաւականութիւնը, ուրիշ խօսքով սրտիս պահանջները մի առանձին կարգ են կազմում, իսկ խանութի, կալւածների և այլ այդ տեսակի խնդիրները՝ առանձին կարգ: Հայրս ու մայրս ինձնից երբէք գոհ չեն եղած, որովհետեւ ես հոգուս գործերը միշտ փողի գործերից գերադասել եմ: Ասում են, այդ իմ դժբախտ կողմն է, բայց ես չեմ հասկանում այդ, ընդհակառակը սրտիս ուղածը ամեն բանից թանկ է, ես պատրաստ եմ ամբողջ հարստութիւնս գոհել սրտիս գործերի համար...

Վիկտորիան լուռ էր, Ռուբէնի խօսքերը հաճելի տպաւորութիւն էին անում նրա վրայ: «Սրտի գործեր, հոգու գործեր», ինչ սիրուն է արտայայտւած, մտածում էր նա:

Վիկտորիային տուն հասցրեց ու կառքը յետ դարձրեց: Ռուբէնի մէջ նորից բորբոքւել էր սէրը: Եթէ նա ոյժ ունենար, կը հրամայէր կառքը ուրիշ ճանապարհով քշել: Տուն գնալ չը կարողացաւ, նորից ակումբ դարձաւ, մտաւ խաղաթղթի սենեակը, բայց խաղալ չը կարողացաւ: Մի մտքի վրայ կանգ առնել չէր կարողանում: Անցաւ բուֆէտ, միփանի բաժակ ոգելից խմիչքներ խմեց ու նորեց փողոց դուրս եկաւ, կառք նստեց ու պատուիրեց քշել գէպի ձորը՝ անդունդները

դիտելու ծառերի վեհ կերպարանքը խաւերի մէջ հոգու աչքով չափելու:

Իսկ Վիկտորիան պարկած անկողնու վրայ՝ մտածում էր իր կեանքի մասին: Ռուբէնը նրա մէջ նոր յեղաշրջում էր առաջացրել: Երկու Քաջագնունիներին համեմատում էր իր մտքում: Նա քաջութիւն էր ունեցել լուրջ, գործերով տարած Վարդին դնել թեթեւ, զգայուն Ռուբէնի կողքին: Այդ համեմատութիւնը նրան այլևս չէր սարսափեցնում, դեռ աւելին, վերլուծելով իր զգացումները, ներքին տենչանքները, նա կանգ էր առնում իր համար հետաքրքրական այդ երկու տղամարդու վրայ, և Ռուբէնը պակաս չէր գրաւում նրան: Նրա մտքում մէկ պատկերանում էր Վարդը իր լուրջ աչքերով, մտածկոտ հայեացքով, միշտ գործերով զբաղւած, մէկ էլ նրա առաջ պատկերանում էր Ռուբէնը կրակոտ, տաքացած, խենթութեան աստիճանի զգացւած, քիչ գունատ: Մէկին գրաւել են գործերը, իսկ միւսին՝ սիրտն ու հոգին, մէկը հազարաւոր վերստեր է գնում գործերի համար, միւսն այստեղ նստել է, հազարները անուշադրութեան մաստնել իր սիրտը: Արդեօք, որը կերջանկացնի ինձ, բաւականութիւն կը տայ իմ հոգուն, անցնում էր Վիկտորիայի մտքով: Գործերը լաւ են բոլորի համար, կրակոտ սիրտը մէկին է նւիրւում: Քունը մօտ չէր գալի նրա

աչքերին, մտապատկերները պաշարել էին նրա գլուխը, երեակայութիւնը գործում էր ուժով: Ահա վարդը գնաց, հեռացաւ, չքացաւ բոլորի մէջ, ձուլւեց հասարակական ցաւերի, հարցերի հետ, իսկ Ռուբէնը մենակ է, մեն մենակ, ինչպէս դիմացի լերան զազաթի մենաւոր ծառը. նա մէկին է որոնում է... կրակոտ աչքերով, փնտրող հայեացքով:

Դուրսը մութն էր, շատ մութը: Ամպերը պատել էին երկնքի երեսը և իրանց լայնատարած ստերներով սև սաւան էին ձգել երկրի վրայ: Անտառն էլ, ձորն էլ ձուլւել էին խաւարի մէջ, միապաղաղ սև զանգւած էր կազմւել:

IX

Օգոստոսի մի անուշ երեկոյ էր, մէկն այն երեկոներից, երբ ամառանոցի մարդիկ վայելում են ամառայ վերջին քաղցրութիւնները: Մօտենում էր աշխատանքների ժամանակաշրջանը, ուստի ազատութեան վերջին ժամերը աւելի գրաւիչ էին դառնում:

Կառքերի մի ահագին շարք դուրս եկաւ Ղ. գիւղից և բռնեց դէպի արևելք ընկած խճուղին: Երկար հովտի հեռաւոր ծայրին, արևմուտքում, երևում էր ալ-կարմիր վերջալոյսը, գունեղ ու նեղլիկ: Սակայն ճանապարհորդները դէպի արևելք էին նայում: Նրանց աջ թևի վրայ տարածւած էին անտառները բլուրների շարքերի վրայ: Մօտալուտ աշնան շունչը թեթև կերպով կպել էր ծառերին: Հատ-հատ աչքի էին ընկնում ոսկեգոյն տերևներ, որոնք մի նոր տեսակ դարդ էին մտցնում կանաչ տարածութեան մէջ: Կառքերը մէկ մտնում էին խոր ձորերը, մէկ անցնում անդունդների վրայով: Իսկ վերևը փռւած էր կապտագոյն երկինքը՝ մերթ նեղ ու երկար ժապուէնի նման, մերթ ընդարձակ ու անծայր ովկիանի նման:

Երիտասարդ մարդիկ էին դրանք, Ռու-

բէն Քաջազնունու ծանօթները, ընկերները, որոնք գնում էին շրջակայքի հետաքրքիր վայրերը, համբաւաւոր աղբիւրներն ու հե- նաւուրց վանքերը տեսնելու: Ամբողջ գործը կազմակերպողը Ռուբէնն էր: Երկու-եր- կու նստոտած կառքերում, ուրախ-ուրախ, երգելով, նազելով ճեպընթաց սլանում էին նրանք: Երբեմն լսում էր ատրճառակների պայթում, հատ-հատ, համազարկերով, և հրճաւանքի քրքիջները տարածւում էին օ- դում, ժայռերին, ծառերին զարնւում, ան- ճաններում արձագանք տալի:

Կառքերից մէկում նստած էր Ռուբէնը, կովկասեան տարազով հագնւած: Սպիտակ ոչխարի թանկագին մորթուց բարձր գլուխարկ ունէր ծածկած, իսկ մորթու ծոպերը ծածկել էին ճակատը, մինչև աչքերը հա- սել: Նրա կողքին նստած էր Վիկտորիա Նազեանը: Նրանց կառքը քիչ-քիչ յետ էր ընկնում:

Մի վտակ վազում էր դէպի արևելք: Զուրը գուլալ էր, շատ գուլալ, իսկ քարոտ տեղերում բամբակի պէս սպիտակ, լւշշում էր, ջրվէժներ կազմում, ժայռերի վրայից ցատկում, հոսում ու գնում:

Մթնշաղը նոր էր երկիրը ծածկել, երբ կառքերը մտան մի խոր ձոր: Զուրն իջիլ էր ցած, շատ ցած, նրա ձայնը թուլացել էր, նուց էր դարձել, կարծես, յուսալատ- ւած իր անվերջ հարւածներից՝ վերջին հա-

ռաջանքներն էր արձակում: Ծանապարհի երկու կողմերի ծառերը փաթաթւել էին իրար: Այնտեղ ամեն ինչ վեհ էր, մի բնա- կան սրբազան տաճար, ուր մարդ զգում էր իր փոքրութիւնը, աւամայ անձնատուր լինում ներքին խոհերին: Ռուբէնի կառքը յետ էր մնացել, և այդ աննպատակ չէր:

— Սօսիր, Վիկտորիա, — ասաց Ռուբէնը:

Օրիորդը, որ ենթարկւել էր բնութեան խոր տպաւորութիւններին, զարմացաւ: Ռու- բէնը նրա հետ առաջին անգամ էր եղակի խօսում: Ռուբէնի ձայնի մէջ հնչում էր զսպւած յուզում:

— Սօսիր, — շարունակեց նա, — միթէ այս- տեղ էլ ապատ չը զգանք մենք. գիւղը հեռու է. կառքերը գնացին: Մենակ ենք, մենակ, ես, դու և հրաշալի բնութիւնը, սիրոյ այդ վկան:

Վիկտորիայի սիրտը արագ բարախում էր, նա ուզում էր ձայն հանի, բայց կոկորդը խեղդւում էր:

— Սօսիր, Վիկտորիա, էլ երկու աչքիդ չեն հալածում ինձ, չեն հետևում քեզ: Ո՛հ, այդ աչքերը ինձ շատ են տանջել: Լսիր, մենակ ենք, ես և դու...

— Ա՛խ, պարոն Ռուբէն, ինչ էք ասում:

— Ինձ Ռուբէն ասան, առանց պարոնի: Էլ մի չարչարի ես շատ եմ տանջւել, էլ մի սպանի, ես շատ եմ մաշւել... Նայիր, ես Ռուբէն Քաջազնունին եմ: Նա գնաց, նա

գնաց, նրան գործերը տարան, բոլոր գործերս, բոլոր գանձերս գնում եմ ոտիդ տակ, կեանքս էլ հետը, ոտդ դիր վրան, Վիկտորիա, Վիկտորիա, ես... ես քեզ սիրում եմ...

— Ես... ես էլ եմ սիրում, — հառաչանքով արտասանեց Վիկտորիան, և Ռուբէնը ուրախութեան մի բացողանշութիւն արձակեց սրտի խորքից: Չորս բազուկներ փաթաթւեցին իրար: Ռուբէնի գլխարկի սպիտակ ծոպերը խառնւեցին Վիկտորիայի շականափագոյն մազերի հետ...

Կառապանը մի վայրկեան յետ նայեց.

— Դարիվեր է աղա, զգոյշ պիտի լինել, — և իսկոյն շուռ եկաւ:

Չորի անտառում ջուրը, խըշ-խըշ, նւում էր, նւում: Ծառերն եկել են իրար փաթաթւել, սև ստւերները ճամբէքը փակել: Ձիերը փոնչում էին, վազում ձորն ի վար, զընգ-զընգ, հնչում էին զանգակները լուսութեան միջին:

*
*
*

Մի քանի ամսից յետոյ՝ Ռուբէն Բաջազ-նունին դադարեցրեց իր բոլոր առևտրական գործերը: Կառավարիչներն ու գործակատարները գործերը այնտեղ էին հասցրել, որտեղից շարունակելը դժւար էր: Ռուբէնը Ա. քաղաքում չըմնաց, առաւ Վիկտորիա Նադեանին և գնաց արտասահման:

X

Վարդ Բաջազնունին մի քանի ամիս ուշացաւ մայրաքաղաքում: Նա նամակով յայտնեց հոգաբարձութեանը, որ ինքը կ'ուշանայ, թող նոր տեսուչ ընտրեն:

Հետեւ երկրում Վարդը չէր մոռանում Վիկտորիային: Նա սկզբներում յաճախ էր նամակ ստանում, իսկ վերջերը ոչ նամակ ունէր, ոչ լուր: Այդ նրա վրայ շատ վատ էր ազդում: Ամեն անգամ, երբ նա երկնագոյն աչքերով, շականափագոյն մազերով օրիորդ էր տեսնում, խելքը թոցնում էր. յիշում էր իր միակ սէրը, իր սիրածին, որից նա տեղեկութիւն չունէր:

Երբ նա իր միասիւս կատարեց, իսկոյն բռնեց վերադարձի ճանապարհը: Երբ կայաւորան գնաց, մտաւ վագոնը, նրա սիրտը մի ուրախութիւն զգաց: Յուրա ձմեռ էր, գնացքը անցնում էր ձնակոյտերի միջով: Վարդը, որքան մօտենում էր իրանց քաղաքին, այնքան անհամբեր էր դառնում:

Երբ հասաւ Ա. քաղաքը, կայաբանում կառք նստեց և ուղիղ դպրոց գնաց: Սակայն նա այնտեղ շատ ծանօթներ գտաւ, բացի Վիկտորիայից: Դրա պատճառը հասկանալ չը կարողացաւ: Նա տուն գնաց:

Մայրը, քոյրը, բոլոր բարեկիսները հաւաք-
ւեցին, ուրախացան, բայց բոլորն էլ նկա-
տում էին, որ նրա հայեացքը մի ուրիշ
անձն է որոնում: Շատերը գիտէին, ով է
այդ անձը, բայց ոչ ոք չէր համարձակու-
մ խօսել այդ մասին:

Խորհրդաւոր գաղտնիքը նա իմացաւ երեկո-
յեան իրենց տանը, ուր հաւաքւել էին մայրը,
Ասլի խանումը, Անահիտը և Վարդանուշը,
որոնք ամեն կերպ գուրգուրում էին նրան:

Իրողութիւնը նրան յայտնեց Ասլի-խա-
նումը, որ պատմեց միամիտ, բայց շատ
յուզւած ու զայրոյթով: Նա, կարծես, մո-
ռացել էր, որ Վարդը մի անտարբեր ու
կողմնակի անձն չէր: Երբ այդ լսեց Վարդը,
կարծես, երկինքը փուլ եկաւ նրա գլխին,
հազարաւոր սրեր մխւեցին նրա կրծքին: Նա
առանց մի խօսք ասելու՝ դուրս եկաւ սե-
ղանատանից և մտաւ իր սենեակը: Միւս-
ները տխրեցին: Մօր սիրտը սկսեց ձմլւել:

Սենեակը տաք էր, կապոյտ լուսամտի-
փով լամպը վառւում էր: Անահիտը, երկու
ժամ չարչարելով, սենեակը մաքրել, կար-
գի էր բերել: Վարդն ընկաւ մահճակալի
վրայ: Բոլորը գնացին նրա սենեակը: Վար-
դանուշը լայն բացւած աչքերով՝ Վարդին
էր նայում և քիչ-քիչ գլխի էր ընկնում,
թէ ինչն է նրա վշտի պատճառը: Վարդը
խնդրեց, որ իրան մենակ թողնեն: Բայց
մի մայրը կը քնի, երբ որդին այդ գրու-

թեան մէջ է: Ամբողջ գիշերը երկու այրին
ու երկու օրիորդը արթուն էին:

Վարդի տխրութիւնը երկար տևեց: Նա
չէր կարողանում մոռնալ իր անբախտ
սիրոյ պատմութիւնը: Բայց օրեր, ամիս-
ներ անցան: Վարդն սկսեց քիչ-քիչ հան-
գըստանալ, բայց երկար ժամանակ որևէ
աշխատանքի՝ կպչել չէր կարողանում:
Շատ էր մտածում Վիկտորիայի մասին:
Նա հետաքրքրեց, իմացաւ նրա և Ռու-
բէնի սիրահարութեան բոլոր մանրա-
մասնութիւնները, իմացաւ և այն, որ Վիկ-
տորիան մօրը թողել է իր ազգականներից
մէկի՝ խնամքին և ամսական որոշ գու-
մար է ուղարկում: Վարդին թւում էր, որ
իր հոգու աւերակներում, հառաչանքից այր-
ւած իր սրտում նոր սէր բուսնել չի կարող,
ուստի անցեալի՝ յիշատակներով պիտի ապ-
րել...

Բայց նոր եղելութիւններ կատարեցին:
Լեռների այն կողմից, հեռից նոր-նոր
ձայներ էին գալիս, օդի մէջ ինչ որ հո-
սանք կար, քամիները նոր փոթորիկների
համբաւ էին բերում: Մարդկանց մտքերը
խմորւել էին, հասարակական կեանքը ցըն-
ցումներ էր գործում: Ալիքները կպան
Վարդի սրտի լարերին, նա սթափւեց: Նոր

գործ, նոր ասպարէզ... Մի կողմ վանեց թուլութիւնը, նրա մէջ նորից կենդանացաւ սառը տրամաբանութիւնը, բանականութիւնը յաղթեց: Նա իր հոգում չը մեղքեց արդրանիկ սիրոյ, իր միակ սիրածի պատկերը, ընդհակառակը խնամքով ծրարեց, սրտի ամենանուրբ, ամենագաղտնի մի անկիւնում թագցրեց, նորից ոգի առաւ, սլացաւ այնտեղ, ուր գործ կար, ուր պարաքը կանչում էր իրեն, ուր դարբնւում նոր կեանքի հիմնաքարը...

Մի օր նա հրաժեշտ տեց մօրը, քրոջը, բարեկամներին և վերադարձի խոստումով բաժանեց նրանցից: Գարուն էր, երբ նա գուրս եկաւ Ա. քաղաքից, Առաւօտ էր, գիշերը թիթե անձրե էր եկել, արեւմուտքը ամպաշող էր, արեւի ճառագայթները արեւմուտքում ծիծանի կամար էին կապել: Նոր գործ, նոր գաղափար Վարդի սրտում, գարնան նոր արեւ, կենսունակ արեւ մայր հողի համար, իսկ երկնքում կար զարդարուն կամար, յաղթական կամար, եօթը գոյնիւրով ճոխացած:

*
* *

Այրիները մենակ մնացին: Քաջազնունիների տունը դատարկեց: Նրանք սև շորերը աւելի խտացրին ու շարունակեցին ապրել նոր յոյսերով: Այրիներից անբաժան

էր Անահիտը: Երեքով միասին էին ապրում: Իմ բախտը կապեց, ևս էլ եմ այրի, անցնում էր Անահիտի մտքով: Սակայն նրանք դեռ ակնկալութիւններ ունէին: Լեօն Քաջազնունին արտասահմանում սովորում էր, արտասահմանում էր և Վարդանուշ Քաջազնունին, որ նոյնպէս սովորում էր: Այրիները ապրում էին նրանց վերադարձին սպասելով, նրանցով մխիթարելու յուսով: Քոյր ու եղբայր են, միասին սովոր են, միասին գան, մտածում էին նրանք: Միայն Անահիտն էր, որ ժպտում էր ու գլուխը շարժում, նրանց յիշելիս:

Տնտեսութեան մասին նրանք շատ հոգս չունէին: Միասին էին ապրում: Մեծ հարստութիւնից մնացել էր աւելի, քան նրանք ծախսում էին: Իսկ ծերունի Մոսն, թէև բաւական կուացել էր, բայց էլի հոանդով աշխատում էր իր ծերացած բազուկներով: Նա էլ յոյսեր ունէր: Տիկին Վարվառէն Լեօնի գալնտեան օրը պիտի ազատէր նրան աշխատանքից, պիտի ապահովէր նրա զառամեալ կեանքը:

— Հնա խանըմ, հնա. ասենք հմի էլ շատ չեմ բանըմ, համա դէ էլի, ծեր մարդուն հանգստանալ ա պէտք, հոգու փրկութեան մասին մտածել ա պէտք, — ասում էր նա տիկին Վարվառէին:

Անահիտ Քաջազնունին՝ զրանցից աւելի զարգացածը, աւելի հասկացողն ու զգա-

ցողը, դարձեալ շարունակում էր ընթերցանութիւնը, իր պարապմունքները: Ուսուցչուհի լինելու մասին այլեւ չէր մտածում: Գրքերի մէջ էլ փոփոխութիւն էր մտցրել: Վարդի տւած գրքերը այլեւ չէր կարդում: Նրանցից մի աղօտ հասկացողութիւն էր մնացել՝ օգնել թշուառներին: Այժմ նա անձնատուր էր եղել վարդապետական գրւածքների: Տօլստոյը նրա սիրելի հեղինակն էր, կարդում էր անկշտում, իսկ աւետարանը, որ մի ժամանակ արհամարեւած էր նրա կողմից, այժմ նրա սեղանի մշտական զարդերից էր: Նրա հոգին այսպիսի ընթացք էր ստացել:

Սակայն բոլորն էլ սպասում էին նոր կեանքի, նոր օրերի: Ի՞նչ թշուառ կը լինի մարդը, եթէ նոր կեանքի սպասելու զգացումը չունենայ...

1908

Օղական-Փառայի:

Վ Ե Ր Ջ



Այսօր հասարակութեանն եւ յանձնում երիտասարդ գրչիս արդիւնքը: Գրախօսներին եւ թողնում որոշել նրա գրական արժանիքները, եթէ կան իհարկէ: Անշուշտ շատ պակասութիւններ կան: Ամենից լաւ ես եւ տեսնում այդ պակասութիւնները: Քննադատի ձայնը միշտ էլ յարգելի է: Կամենում եմ, հակառակ մեղնում ընդունւած պակասութիւններն ընդգծող գրախօսականի, տեսնել իրկի սառն անալիզը, պակասութիւնների ու առաւելութիւնների ամփոփումը: Սկսնակ գրողէտի համար այդ անհրաժեշտ է:

Ես ցանկանում եմ, իսկապէս, ընթերցողիս ուշադրութիւնը գրաւել գրւածքիս լեզւական կողմի վրայ, եւ միշտ էլ կողմնակից եմ ճիշտ և գեղեցիկ լեզւի: Այս աշխատութիւնս, իմ կտրծիքով, պահանջիս լիակատար բաւարարութիւն չի տալիս: Պատճառն այս է: Գիրքը գրւած է չորս տարի առաջ, երբ ես մի նորաւարտ եղպրոցական հայերէն իմացող անձն էի: Չեմ ուզում ասել, որ այժմ հայագէտ եմ, բայց, իբրեւ չորս տարւայ հայոց լեզւի ուսուցիչ, բաւական աշխատանք եմ թափել այդ լեզուն լաւ իմանալու համար: Այդ կը նկատեն այն ընթերցողներս, որոնք ծանօթ են իմ, երբեմն պատահաբար թերթերում լոյս տեսնող,

գրւածքներին: Լեզուական արժատական փո-
փոխութեան հնթարկելու հնարաւորութիւն
չունեցայ: Տպագրութիւնը կատարուեց ան-
յաջող պայմաններում: Եւ սրբագրութեան
արհեստին բոլորովին անծանօթ էի, գրա-
շարները յաճախա ի փոփոխուում էին, ուս-
տի ստացուեցին տպագրական բաւական
սխալներ: Այդ սխալները շատ են, ուստի
մէկ-մէկ յիշելն աւելորդ ու անօգուտ եւ
համարում: Բաւականանում եմ աչքի ընկ-
նող նմուշներով:

Երես. տող.	գրւած է	պիտի լինի
4 ներք. 5	բար-ձր	բար-ձըր
8 ն. 4	Մանօ	Մնօ
13 ն. 8	Անահետ	Անահիտ
14 վ. 5	մայրց	մահից
16 ն. 3	անբլով	անելով
17 վ. 2	պիտի	պիտի
17 վ. 13	է	էր
17 ն. 11	քաջաքալա- րութեամբ	քաղաքալա- րութեամբ
20 վ. 9	արգրեանունք- ները	արտեա- նունքները
24 ն. 15	գիմնում	գիմում
42 ն. 13	խոտութիւն	խորութիւն և այլն:

Մի քանի տեղ գրւած է «երիգասարդ»
փոխանակ «երիտասարդ», «գեր» փոխա-
նակ «գէր»: Առաջին հրետում 1911-ի փո-
խարէն պիտի լինի 1912:

1912 թ. 1-ն փետր. Թ. Կ. Ֆ. Ս.:

Ս. Թ.



<< Ազգային գրադարան



NL0331865

31799

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.